

Akhgur Singh

663.2  
v-50



25 SEP 2000

663.2  
Lr-50

ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 2.

# ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Կ Ա Զ Մ Ե Ց

ԿՈՍՏԱԴԻՐԻ Կ. ՄԵԼԻՔ ՇԱՀՆԵՋՅԵԲԵՆՑ



ՎԱՂԱՐՇԱՊՈՅ  
ԷԼԵՖՐԱՆԿԻ ՏՊԱՐԱՆ ՄՐՈՅ ԷՇՄԻԱԾՆԻ  
1909

27.06.2013

ՀԵՂԻԿԱՆ

## Կ. Կ. Մելիք Շահնազարեանցի աշխատութիւնները.

թ. կ.

1	Ղրցէ կնանոց պընը փեշակը 1882թ. (սպառուած) —	20
2	Ուղեցոյց գործնական գինեգործութեան 1885 (սպառ.) —	60
3	Բուսական աշխարհից մշակուած և անմշակ ծառի կեանքը. տարրական այդեզործութիւն 1886թ. (սպառուած) . . . . . — 30	
4	Շոշվա Դային խէրն ու շառը. (Տմբլաչի Խաչանի Գելիետոններից) I գիրք 1887թ. . . . — 35	
5	Փշանք (Մանկական) I զրքոյի 1888թ. . . . — 15	
6	Ծխախոտը և իր վեաները 1888թ. . . . — 10	
7	Ոգելից ըմպելիների վեասակարութիւնը 1889թ. — 10	
8	Ուղեցոյց գործնական շերամապահութեան 1890թ. — 40	
9	Վիլիամ Չաննիդ (փոխադր.) 1893թ. . . . — 40	
10	Մեղէա (գրամ 4 զործ. փոխադրութիւն թատրոն ամսագիր 1898թ. . . . . — —	
11	Փոքրիկ նուազածու (մանկական թատրոն) թատրոն ամսագիր.) 1898թ. . . . . — —	
12	Տնգլիազ և Զուռնա Տմբլա II գիրք 1900թ. . . — 40	
13	Զուռնա—Տմբլա III գիրք 1901թ. . . . — 40	
14	Վազի մշակութիւնը գիւղատն. գրադարան № 1 1902 1 —	
15	Զուռնա—Տմբլա ժողովածու Տմբլաչի Խաչանի Գե- լիետոնների բառարանով երկու գիրք 1907թ. 1 25	
16	Փնջիկ (Մանկական ոտանաւորներ) 1907թ. — 15	
17	Լուսատանիկներ. մանկական, փոխադր. 1907թ. — 40	
18	Տեղեկագիր Ս. էջմիածնի գիւղատնական բաժնի — 10	
29	Ռուսահայերի Գիւղատնական վիճակը և գիւղա- տնական դպրոցների կարիքը 1908թ. — 15	
20	Գինեգործութիւն ընդարձակ գիւղ. գրադ. № 1908թ. 1 —	

630  
81-ՄԵ

663.2

10-50

ՎԵՐԱՇԽ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
անդրանիկ նույն  
ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵՆԻՑ  
13 Նույն. 1918 թ. ԹԻՖԼԻՍ  
Խ Օ Ա Ք.

Ե Բ Կ Ո Ւ

Ուղիղ 24 տարի առաջ լոյս տեսաւ մեր «Ու-  
ղեցոյց գործնական գինեգործութեան» գրքոյկը, որը  
այժմ լոյս ենք հանում երկրորդ հրատարակութեամբ  
փոփոխած և աւելի ընդարձակած։ Սակայն ցաւելով  
պիտի նկատենք, որ այս 24 տարուայ ընթացքում  
մեր կովկասի գիւղատնակառութեան, մասնաւորապէս  
զինեգործութեան վիճակը աչքի ընկնող փոփոխու-  
թիւն չէ կրել, նա տեխնիկայի կատարելագործութեան  
կողմից գրեթէ նոյնն է մնացել ամեն շըջաններում  
և ոչ մի ձգտում էլ չէ երկում անհատական կամ  
ընկերական ուժերով աւելի զարգացնելու, արտահա-  
նութեան աւելի ընդարձակ նիւթ շիներու խաղողն ու  
գինին, որոնք կարող էին պատուաւոր աեղ բռնել  
վաճառահանութեան մէջ ու մեր երկրագործ ու այ-  
գեգործ ժողովրդի գուռարատար կացութեան մեծա-  
պէս նեցուկը լինել։

Ճիշդ է, ասում են կարիքը մարդուս վարպետ է  
դարձնում, այս ու այն փորձանքը, պատահարքը  
նրան ստիպում են աւելի ուշադիր, աւելի շըջանայեաց  
լինելու, բայց մեր հայերիս վերաբերութեամբ պէտք  
չունենալ, բայց մեր հայերիս վերաբերութիւն չունին. տաս-  
է խոստովանենք դրանք գոյութիւն չունին. տաս-  
է խոստովանենք դրանք գոյութիւն չունին. տաս-  
է խոստովանենք դրանք գոյութիւն չունին. տաս-



Ա.ՌԱ.ԶԻՒ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՅԱՌԱԶԱԲԱՆԻՑ

Գիւղատնտեսութեան այլ և այլ ճիւղերը ներկայացնում են մի մի ակներ, որոնցից բղխում են ազգերի գոյութեան անհրաժեշտ պայմանները:

Որչափ այդ ակները վարար են պարզ ու վճիռ, այնքան և ապահովուած է նրանց հոսանքների մօտ եղերած ժողովրդի կացուցուց:

Ազգեր, որոնք ճանաչել են այդ ճշմարտութիւնը, թէ անհատական և թէ միացեալ ուժերով աշխատած են և այսօր էլ աշխատում են որչափ կարելի է լայնացնել, ընդարձակել այդ ակները, սիրել ամեն կողմ նրանց կենսատու ջրերը, հսկել նրանց կամննաւոր ընթացքին և պատուար դնել այն ներքին և արտաքին բաներին, որոնք մի բոպէ կարող են փակել, պղտորել նրանց:

Կովկասի գիւղատնտեսական վիճակը այսօր մեղ ներկայացնում է մինը այն կուսական աղբիւրներից, որը դարերի ընթացքում հոսելով, միայն ծարաւ ժողովրդի ուշքն է գրաւել, որ եկել խմել է և հեռացել, առանց մտածելու նրա գալար ու բեղուն ափերի մօտ իւր վրանը թողնելու կամ նրա ակները բաց ու վարար պահելու:

Այդպէս անուշագիր ու անխնամ մնացած աղբիւրը հետքինտէ խոր ակօմներ է կտրել թողած հարթ դաշտավայրերը ձորերի մէջ անյայտացել, ակները խիճ ու աւազով լցուել, ջուրը նուազել ու պղտորել:

Ժողովուրդը իւր աղբիւրը կիսացամաք տեսնելով թողել, հեռացել է յուսահատ աւելի առատարուղիս տղբիւրներ գտնելու յուսով, բայց ամեն տեղ աւելի ևս դժուարութեան հանդիպելով, մտարերել է կրկին իւր հայրենի կիսացամաք աղբիւրը և եկել կանգնել նրա դիմացը և ջուր, ջուր է ազակում ...

Ուժեղն ու ճիւղուրը առաջ են ընկնում խմում, լցնում

վիճակից, որ բաւարար ապրուստ չունի՝ որ նրա հողը, այգին ցանկալի արդիւնքը չեն տալիս, որ նրա արտում մորը, չոփարն ու գիւղելը բոյն են դրել, որ այգին մի տարի թրթուռն է խժուամ, միւս տարին թողն ու ուրիշ հիւանդութիւնները խաղողը փշացնում կամ գինին շուռ գալիս, սևանում կամ քացախում, բայց երբէք նա չէ խրատում, այդ գնասների առաջը չէ առնում, չէ ձգտում իր վիճակը բարեփոխելու, գոնէ օրինակ չէ առնում իր խելօք դրացուց, չէ օգտուում ուրիշների փորձառութիւնից ...

Պէտք է միանդամայն հասկանալ, որ առանց յամառ աշխատութեան, առանց շրջապատող կեանքի էական պայմանների ու պահանջների հետ ծանօթութիւն ունենալու և բռնած գործին գիտակցաբար վերաբերուելու, դժուար թէ կարելի լինի որ և է ցանկալի նպատակի հասնել:

Մեր ժողովրդի տնտեսական վիճակի բարեփոխութիւնը հիմնովին կախուած է մեր երկրի գիւղատնտեսութեան զարգացումից. մեզանից ամեն մինը քաղաքացի թէ շինական պարտական է ըստ իւր կարողութեան նպաստել այդ զարգացմանը և հարթել այն ճանապարհը, որ տանում է դէպի բարեկեցութիւն, դէպի տնտեսական բարգաւաճումը:

իրենց կժերը, ջրում ձիաները, իսկ այնտեղ հազարաւոր մարդիկ, մինչև իրենց հերթը գալը, թուլանում, ընկնում են ծարաւից ...

Ի՞նչ անել, ի՞նչպէս ազատել ծարաւի ամբոխը մահուանից: Դրան մի հսարք միայն կայ՝ բանալ աղբիւրի լցուած ակները, հեռացնել խոչընդոտները, հոկել նրա կանոնաւոր ընթացքին և նա կհոսէ, կզովացնէ ծարաւ բերանները և նորից կենդանութիւն կառնեն դաշտերն ու մարգերը:

Կովկասի այդ աղբիւրը թէս մի, բայց հազարաւոր ակներ ունի մէկը միւսից աւելի պարզ, աւելի վճիռ. ևս մատնացոյց կանեմ միայն նրանցից մէկի վրայ, որի ճակատին խոշոր տառերով գրուած է «ԳԻՆԵԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՍԿ, և տեսէք թէ որչափ տարածուած է նրա թողած հետքը, որի մի ծայրը համուում է Կախէթ, Գանձակ, Երևան, Նախիջևան և միւս ծայրը Ղարաբաղ, Մադրասա, Դարբանդ Ղզլար, գրեթէ ամբողջ կովկասը»:

Ժամանակ չկորցնենք իմ հայրենակիցներ, փորենք այդ աղբիւրի ակը հաստատամութեամբ, միմեանց աջակցելով, մի կողմը թողնենք նրա նախկին խորդ ու բորդ ճանապարհները, նոր առուներ բանանք և նա կհոսէ յորդառաստ:

Ես թէ և հետի այդ փրկարար աղբիւրից, սակայն աշ- խատանքից չփախչելու համար ուղարկում եմ մի օգնական, մի «ՈՒՂԵՑՈՅՑ», որ թէ և խակ ու անշափահաս, սակայն կարող է շատերին պէտք գալ այդ ակը փորելու ժամանակ. հետեւցէք նրա խորհուրդներին, կատարեցէք նրա պարզ և իրագործելի առաջարկութիւնները և հաւատացէք երբէք չէք զղջալ:

Իսկ երբ մի օր կրացուի այդ ակը և աջ ու ձախ կը փոռուին նրա առուները և կովկասի հարազատ որդին նրա մօտ եղերած գողթան երդերը կհնչեցնէ, այն ժամանակ միը «Աւղեցոյցը» իւր պաշտօնը կատարած կլինի և տողերիս պրողը հասած իւր ցանկալի նպատակին:

ԿՈՍՏԱՆԴԻՔ Կ. ՄԵԼԻՔ—ԸՆՆԱԶԱՐԵԱՆՑ:

Յօն (Բուրգոնեայ).

20 Դեկտեմբերի 1884:

## ԳԻՆԵԳՈՐԾՈՒԹԻՒՆ

### ՅԱ. Ռ. Ա. Զ. Ա. Բ. Ա. Ն.

Գինեգործութիւնը այն է խաղողից գինի չինկլու արհեստը անդրագամական ժամանակներից յայտնի է մարդկութեան և մեզ հայերին է պատկանում այն փառքը, որ առաջին անգամը նոյնի ձեսքով խաղողի որթը մեր երկրում Հայաստանում տնկուեցաւ և Արկուոփ ասուած ապարակում առաջին անգամը զինեցինութեան սկիզբը գրուեց:

Ճիշտ է վագի մակութեան և թէ զրա հետ կապուած զինեգործութեան սկզբնաւորութիւնից քանի հազար տարիներ են անցել, բայց մեզանում այդ ճիշտերը ոչ արգիւնաբերութեան և ոչ էլ մշակութեան կատարելազործութեան տեսակէտից առաջ չեն գնացել, այն ինչ ուրիշ ազգերի մօտ ոչ մի օգտակար բոյսի մշակութիւն այն աստիճան հոգացողութեան, ինամբի, ուստամասիրութեան առարկայ չէ զարձած, ինչպէս վաղի մշակութիւնն ու զինեգործութիւնը, որ այսօր նրանց թէ աղբուատի, թէ հարստութեան աղբիւրներից մինն է կազմում և կարող են պարծենալ այդ ճիշտերի վերաբերութեամբ ունեցած բաւականին ձոր զրականութեամբ:

Թէ ինչու հայերին մօտ և առաստարակ կովկասում գինեգործութիւնը չէ զարգացել, այժմ ինչ վիճակի մէջ է գտնուում, որոնք են մեր զինեցինաները, ինչ քանակութեամբ

գինի է արտադրում կովկասը և ուր է սպառում և այլ նման հարցեր, այդ մասին մենք առիթ կունենանք այլ տեղ խօսելու, այժմ մեր նպատակն է ծանօթացնել զինեշինութեան և զինու խնամատարութեան դանազան դործողութեանց հետ, աչքի տառջ ունենալով մեր ներկայ պահանջները, մեր ժողովրդի կարիքները:

Դինեղործութեան հիմքը կազմում է խաղողը, որ բարեխառն կիմայի պատուզների մէջ ամենից տարածուածն է և կարելի է ասել արդիւնաբերութեան կողմից առաջին տեղն է բռնում:

Խաղողի թէ տեսակները և թէ նրանց գործածութեան եղանակը շատ են, նայելով կիմային, ազգերի սովորութեան և նրանց պահանջներին:

Այսօր հաշում են աւելի քան 2000 տեսակ խաղողներ, գրանց մի փոքր մասը միայն գործ է գրւում իրրե ուտելու (սեղանի) կամար կամ չամիչ ու մաթ (բէքմէզ) շինելու, մեծագոյն մասը զինի և այլ ոգելից ըմպելիներ պատրաստելու է գործ գրւում:

Խաղողները մէկմէկուց տարբերում են թէ իրենց գոյնով, թէ ձեռվ, թէ հասունութեամբ և թէ ներքին կազմով: Այսպէս մենք տեսնում ենք խաղողներ՝ ճերմակ, կարմիր, երկայն, սրտաձե, մեծ կամ փոքր հատիկներով. կան վաղահասներ, կան յետահասներ, կան որ ունին 1—4 կորիզ, կան խաղողներ, որ անկորիզ են, կան անուշահոտ խաղողներ ինչպէս մուսկատը, բիսկինը, իդաբելլան, կան խաղողներ, որոնց քէջ թթւութիւն է զարգացած, կան որ տապութիւնը, քաղցրութիւնը. այսպէս մի քանիսը զիմացկուն են, կարող են ամիսներով մնալ, այն ինչ ուրիշները շուտ փչացողներ: Այսպէս որ ամեն այգեստէր կամ զինեզործ զինեշինութեան ժամանակ ինկատի պիտի առնէ այս ու այն տեսակից որոշ չափաւ օգտուելու և իր նպատակներին ծառայեցնելու:

Առհասարակ դիտուած է, որ այն տարիներին լաւ զինի է լինում, երբ խաղողը իր ծաղիկը թափուելու օրից սկսած՝ աստիճանաբար է տաքանում և հասունութիւնը սովորակա-

նից առաջ ընկնում: Բայց ընտիր զինի ստանալու համար քաւական չէ միայն տարութիւնը, պէտք է որ խաղողը աշմառուայ ընթացքում չխանձուի, կարկասահար չինի, վազը այս ու այն հիւանդութեանց չննթարկուի, տերել ժամանակից առաջ չթափուի, անձրեներից խաղողը չփափի, այդին ժանդանականներից մաքուր լինի և խաղողը ամենայաջող պայմանների մէջ հասունանայ և առողջ տեսքով մեղ հասնի:

Դժբաղտաբար իրականապէս շատ քիչ է պատահում առողջ խաղող ստանալը.—մի կողմից կարկուան է հարուածում, թափում տերեն ու պատուղը և ճեղքելով հատիկները՝ նւազեցնում զոյն ու քաղցրութիւնը, միւս կողմից շարունակ անձրեներն են տեղիք տալիս այլեայլ հիւանդութեանց, վազը տերեթաթ անում, որով և խաղողը մնում է ժուռ կամ փառում հասունացած խաղողը. սասափիկ երաշտին խանձում են ճթերը, հատիկները չեն մեծանում և գրէթէ հիւթ չի մնում ներսը, այսպէս էլ ցրտահարութիւնը անում է իր վասակար ազգեցութիւնը:

Հարկ չկայ, որ այս ամեն չարիք միանգամից պատահեն, բաւական է մի թեթև հարուած, մի անյաջող փոփոխութիւն վազի կեանքի մէջ և ահա ամեն ինչ հակառակ կերպարներ է ստանում: Մի կողմը թողնելով մեղանից անկախ պատճառները, ոչ պակաս գեր է խաղում և մարդկանց փորձառութիւնը և հմտութիւնը զինեշինութեան և զինու ինապատարութեան մէջ:

Մի առողջ խաղող մեղ առողջ զինի չի տալ, եթէ չենք հասկանում նրա բնութիւնը, նրա հետ վարուելու եղանակը:

Մենք կովկասցիներս խաղողի հետ վարուելու հմտութիւնով չենք կարող պարծենալ, բաւական է մի թեթև ակնարկ ձգել արտասահմանեան այգեգործութեան և զինեզործութեան վրայ և կհամոզուենք, որ շատ լայն է այն անջրպետը, որ բաժանում է մեզ երկուսիս:

Սակայն յութահատուելու տեղիք չկայ, քանի որ այսօր զինեզործութիւնը այլ ես զաղտնիք չունի, քանի որ նա իբրև որոշ զիտութիւն՝ պարզաբանել է շատ մութ կէտեր և զծել

այն ձանապարհը, որով ամեն մէկը պիտի ընթանայ. մեր  
աշխատութիւնիցն է կախուած օղուտ քաղել այդ գիտութիւ-  
նից և չուտ կամ ուշ լցնել այդ անջրպետը և վերանորոգել  
կովկասին Շխաղողի և գինու հայրենիք» կոչուելու պատուա-  
նունը:



ՔԼ. I.

### ԱՅԳԵԿՈՒԹԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ինչպէս ամեն մի արդիւնաբերութեան, գործի  
կամ արհեստի մէջ մեծ դեր են խաղում արհեստի  
վերաբերեալ գործիքները, այնպէս էլ կանոնաւոր  
գինեշինութեան ժամանակ զինեգործը կամ այգեգոր-  
ծը իր ձեռքի տակ պիտի ունենայ այս ու այն գոր-  
ծիքները, ամանեղէնը և այլ յարմարութիւնները,  
որպէս զի կարողանայ անթերի իր գործը կատարել:  
Մհա թէ ինչու այգետէրը կամ զինեգործը նախ քան  
այգեկութը սկսելը, մի երկու շաբաթ առաջ մի քանի  
պատրաստութիւնները պիտի տեսնէ թէ տանը և թէ  
այգում:

Տանը՝ ուր շիրատունն է, պիտի հոգայ, որ շիրայ  
եփ տալու ամաններն ու բոլոր գործիքները լււ-  
լուացուած լինեն և ամեն ինչ իր տեղը յարմարե-  
ցրած, իսկ այգում նախօրօք քաղհանած ժանդաններն  
ու խոտերը, վագի նեցուկները ուղղուած, հարթած  
գնացքներն ու սայլի ճանապարհները, վագի աւելորդ  
շիւերը (սուդը) և տերեւը (խօրհարը) տւած:

Ամեն մեծ այգետէր պիտի ունենայ—

1). Գանակեական այգու խաղողը քաղելու, որոնք  
սուր պիտի լինեն, որ ճիթը կարելուց հատիկները  
չթափուեն:

2). Կրոցներ՝ քաղած խաղողը մէջը դնելոււ Դրանք լինում են առհասարակ փայտից կամ սպիտակ թիթեղից, կամ սև թիթեղից ներսը և գուրսը ներկած, ինչպէս սովորական վեղրօներն են։ Փայտէ կթոցները լինում են կամ ճիպոտներից գործուած կամ միապատաղ փայտից շինած, ինչպէս չանաղներն են։

3). Քաղլակներ՝ մէջքով կամ ուսի վրայ խաղողը շիրատուն կամ սայլը կրելու։ Մէջքով կրելու քաղլակները մօտ 2—3 պուդ խաղող են տանում, շինում են կաղնի կամ շամի բարակ տախտակներից և կոնակի կողմից ունենում են կրներին անցնելու կաշիներէ Իսկ ուսով կրելու քաղլակները զամբիւղի նման են, ճիպոտներից հիւսուած։

4). Խաղողը այգուց սայլով սուն փոխագրելու համար պէտք է ունենալ 25—30 պուդ խաղող բուգանդակող կիսատակառներ կամ տաւածեր, որոնք խփան պիտի ունենան և այգուց փոխագրելուց պէտք է կողպուին և բանալիներից մին այգում պիտի պահուի միւսը տանը։

5). Շիրա կրելու փայտէ կամ սպիտակ թիթեղեայ վեդրօներ։

6). Զարդուած խաղողը կամ շիրան հաւաքելու շերեփներ։

7). Զարդող կամ զարդող - չանչահան անող մենայ, որ խաղողը միաժամանակ չարդում է և չանչը - քնթեռնը հանում։

8). Մամուլ, որ մզում է թէ խաղողը և թէ շիրայի պինդ մնացորդը՝ ճաճան։

8), Մզուածքը կտրելու դանակ, երբ ճաճան սալ է կապում մամուլում և դժուար է ձեռքով քանդելը։

10). Զագառնից, փայտից կամ սպիտակ երկաթից ու թիթեղից։

11). Շիրայ փոխագրելու սիմոն կառչուկից կամ թիթեղից։

12). Տակառ ծխելու ծխիչ, լարից կամ թէ կաւից։

13). Մոմակալ, տակառների ներսը նայելու։

14). Ապակեայ կամ թիթեղեայ լիվեր տակառից նմուշի համար գինի վերցնելու։

15). Տակառների գլխները լցնելու աման։ Եւ վերջապէս մուրճ, կացին, տակառի գոտի պնդացնելու չափուչ (օսաճակ), ծակիչ (քլօվօրօտ) հարթիչ (հատրցուն), խառնիչներ, փայտեայ և պղնձի ծորակներ, տաշտեր զանազան մեծութեամբ, մեծ ու փոքր տակառներ, կիսատակառներ, խաղող կամ շիրայ փոխագրելու սայլեր են։ Այս ամենը ինչպէս ասացինք, այգետէրը վաղօրօք պիտի պատրաստ ունենայ, որ քաղի օրը չմնայ շուարած։

## Գլ. II.

### ԽԱՂՈՂԸ, ՆՐԱ ԿԱԶՄԸ ԵՒ ՄԱՍԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ.

1). Խաղող ասելով պիտի հասկանանք ողկոյզը, ճիթը իր հասիկներով կամ գիլաներով։ Այդ հասիկները միացած են ողկոյզին փոքրիկ կոթիկների միջոցաւ։ Խաղողի պտուղը ունի գրսից բարակ կաշի, որը պահում է իրեն տակ պտղաճիթը, իսկ պտղա-

հիւթի մէջ մենք գտնում ենք նրա կորիզը կամ սերմը:  
Եյն հիւթը, որը գտնում է դեռ չմզուած խաղողի  
հատիկների մէջ, ասում է խաղողացուր, իսկ խակ,  
դեռ ժուռ խաղողի ջուրը՝ ժուռացուր կամ դուռացուր.  
այս ու այն միջոցաւ ջարդուած խաղողից ստացուած  
հեղուկը, խառն լինի կորիզների, կաշու կամ չանչի  
հետ կամ ոչ, ասում է բաղցու կամ օիրայ, որը եփ  
գալով ու քաղցրութիւնը կորցնելով՝ դառնում է զինի.

Զտիչ թղթի միջոցաւ պարզեցրած շիրան իր մէջ  
բովանդակում է ջուր, շաքար, զանազան թթւու-  
թիւններ, սպիտակուց և հանքային բաղադրութիւն-  
ներ, որ նայելով խաղողի տեսակներին, նրանց հա-  
սունութեան աստիճանին, կլիմայական պայմաններին  
ու հողի այս ու այն կազմութեան՝ նւազ կամ աւել  
չափաւ է լինում:

Ջրից յետոյ խաղողի մէջ շաքարի քանակը երկ-  
րորդ տեղն է բանում և ասում է խաղողի շաքար,  
որ ամենակարեւը մասն է: Այդ շաքարիցն է, որ եփի  
ժամանակ առաջանում է ալքօօլը, ածխաթթու գազը,  
զանազան թթւութիւններ, որոնք միասին կազմում  
են զինին: Բացի շաքարը՝ մեծ դեր են խաղում և  
շիրայի մէջ գտնուած այս ու այն թթւութիւնները,  
որոնցից մի քանիսը ազատ դրութեամբ են, միւսները  
աղի տեսքով: Թթւութիւններից նշանաւորը զինու-  
թթւութիւնն է, որ կալի ասուած աղի հետ միանա-  
լով, կազմում է զինեքարը, (գարթը), որին մենք  
տեսնում ենք տակառներին կպած:

Խաղողի միւս մասերից նշանաւոր է սպիտակուցը  
(albumin) որը պեկտին ասուած տարրի հետ նպաս-

տում է շիրայի եփ գալուն: Խաղողի թեփուկը կամ  
կաչին ևս ոչ պակաս ներգործութիւն ունի զինու-  
վրայ: Թեփուկը, ինչպէս և բոյսի ամեն մի մասը,  
բաղկացած է բժիճներից, որոնց մէջ մտնում է  
տանինը (տապութիւնը), ներկ տւող նիւթերը  
հանքային ու անուշահոսութիւն տւող տարրերը:  
Կարմիր խաղողների թեփուկի մէջ գտնուած ներկը,  
որ ասում է Էնցիանին (oenocyanin) անհրաժեշտ է  
զինու համար, նա է որ զինու մէջ եղած ոգու և  
թթւութեան ազգեցութեան տակ լուծուելով՝ զինուն  
կարմիր ներկ է տալիս: Ինչքան մի խաղող հասած  
է, որքան նա շաքարով հարուստ է, այնքան էլ զար-  
գացած է նրա մէջ գոյնը և ընդհակառակը:

Խաղողի կորիզը իր մէջ պարունակում է 6—7%  
տանին և 10—12% իւղային մասեր: Տանինը զինուն  
տապութիւն է տալիս և նրան որոշ չափով զիմաց-  
կուն շինում, իսկ իւղային մասերը շիրայի եփ գա-  
լու ժամանակ մասամբ խառնուելով զինուն, նրա մէջ  
անուշահոսութեան (բուկետ) զարգանալուն են նը-  
պաստում:

Խաղողի չանչը, (բնրեւնը) իր մէջ ունի զառնու-  
թիւն, տապութիւն և թթւութիւններ: Սրա ներկա-  
յութիւնը, շիրայի եփի ժամանակ, երբ դեռ ժեժ է  
մնացել ու չանչը չէ կարմրել, ընդհանրապէս վնա-  
սակար է ճանաչուած, ինչու որ ծծում իրեն է քաշում  
շիրայի ալքօօլը, իսկ իրենից բաց թողում ջրային,  
թթու և դառն մասեր, այնպէս որ երբ մի զինի ընա-  
կանաքար թոյլ է, թթու է, կարծիք չկայ որ չանչը  
պիտի հեռացնել, սոյնպէս և այն դէպքում, երբ խո-

Դողը իր կատարեալ հասունութեան չէ հասել և ժուռ  
է մնացել: Իսկ ընդհակառակը երբ խաղողը լաւ հա-  
սած է, քաղցր է, բայց իր մէջ որոշ աստիճանի թրթ-  
ւութիւն չունի, որ նրան դիմացկուն շինէ, այն ժա-  
մանակ չանչի ներկայութիւնը վատ չէ, նա սերտա-  
ցնում է զինուն և մանաւանդ նողաստում շիրայի եփ  
գալուն:

2). Թէ ինչպէս է խաղողի մէջ ճաքարը գոյա-  
նում. — Գիտնականները երկար ժամանակ վիճում  
էին այն մասին, թէ խաղողի մէջ ինչ բանից է առա-  
ջանում շաքարը և զանազան ենթադրութիւններ էին  
անում. ոմանք կարծում էին, որ այդ առաջանում է  
թթւուտներից, միւսները արեի քլօրօֆիլի այն է տե-  
րեկի և բոյսի կանաչ մասերի մէջ գտնուած կանաչ  
հիմի վրայ արած ազդեցութեան հետևանքին էին  
վերագրում: Վերջը մանրադիտական քննութիւնները  
պարզեցին, որ վազի տերեների, շիւերի և չանչի  
մէջ կայ սոսնձահիւթ, կրախմալ, իսկ խաղողի հա-  
տիկների մէջ այդ բացակայում է և եկին այն եզ-  
րակացութեան, որ արեի ճառագայթների ազդեցու-  
թեան տակ քլօրօֆիլի բշտիկները կրախմալ են դառ-  
նում, իսկ այդ կրախմալը փոխարկում է շաքարի և  
այդպէս մշակուած մանում պաղի մէջ: Այդ կարծիքը  
հաստատում է և այս հանգամանքով, որ երբ խա-  
ղողը հասունանում է, վազի այս է կամ այն մասերի  
մէջ կրախմալը խսպառ չքանում է կամ շատ աննշան  
մնում: Ոչ միայն շաքարը, այլ և խաղողի միւս տար-  
րերը ևս վազի տերեների ու միւս կանաչ մասերի  
չնորհիւն են առաջ գալիս, ահա թէ ինչու խաղողը

չէ հասունանում, երբ վազի տերեները այս ու այն  
պատճառաւ հիւանդանում են կամ թափւում:

Եթէ մենք ուրբելու լինենք ողկոյզի կոթը, այլև  
խաղողի մէջ շաքարը չէ աւելանում, այսպէս էլ եթէ  
խաղողի ճիթը կտրում ենք դեռ ժուռ ժամանակը ու  
պահում, նա միւս պտուղների պէս չէ քաղցրանում,  
այս ամենը հաստատում են վերոյիշեալ կարծիքի  
ճշգութեանը, որ պաղի մէջ շաքարը դրսից է մտնում  
և այդտեղ մեծ դեր են կատարում տերեները:

Պաղի այլ և այլ մասերի մէջ շաքարի քանակը  
ևս տարբեր է, այսպէս կորիզներին շրջապատող հիւ-  
թի մէջ աւելի է քան միջին մասում, միջին մասի  
մէջ աւելի քան կաշու կամ թեփուկի տակ:

Գլ. III.

ԱՅԳԵԿՈՒԹԻ ԺԱՄԱՆԱԿԸ ԵՒ ԽԱՂՈՂԻ ՀԱՍՈՒՆՈՒ-  
ԹԵԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ.

1). Խաղողի ողկոյզների զարգանալու ժամանա-  
կամիջոցը, այն է ծաղկելուց մինչև կատարեալ հա-  
սունանալը կարելի է երեք շրջանների բաժանել.

Առաջին շրջան՝ ծաղկելու սկիզբը:  
Երկրորդ շրջան՝ ծաղկելուց յետոյ մինչև պտուղ-  
ների չլելը, գոյն առնելլը:

Երրորդ շրջան՝ պտուղների չլելուց մինչև կա-  
տարեալ հասունութիւնը:  
Այդ երեք շրջանների ժամանակ ողկոյզները են-

Թարկուած են ոչ միայն արտաքին փոփոխութեան, այն է հատիկների մեծանալուն, դունաւորելուն, այլ և ներքին, որովհետև նրանց մէջ նոր նիւթեր են աւելանում և հները փոխակերպում, որով այլայլ տարրերի որակն ու քանակը ևս փոփոխում է:

Ողկոյզների զարգանալու աւելութիւնը կախուած է եղանակից, ամառուայ տաքութիւնից, նողի կազմութիւնից, վազերի պարաբացնելուց և այլ հանգամանքներից: Բայց խաղողի թէ քանակը և թէ որակը կախումն ունի և վազերի ուշ կամ վաղ ծաղկելուց:

Երբ վազը շուտ է ծաղկում, եղանակը բարեյածող է, ամառն ու աշունը տաք, կարելի է յուսալ, որ այգեկութը վաղ կընկնի, բայց երբ վազը ուշ է ծաղկում, այգեկութն էլ ուշ է ընկնում:

Պետք է ասել, որ խաղողը միաժամանակ չէ հասունանում: Այդ կախուած է թէ վերոյիշեալ պատճառներից և թէ խաղողի տեսակից: Երբեմն պատճառում է, որ միենոյն այգում միենոյն տեսակի խախողը անգամ միաժամանակ չէ հասունանում, դրա պատճառները կարող են լինել թէ վազի տերեների խիտ ու նոսր լինելուց և թէ այգու դիրքից, որ մի մասը արևելահայեաց լինելով կամ թմբերի վրայ, շուտ է զարգանում քան դէպ հիւսիս նայող մասը, կամ փոսում դանուածը: Այդու դիրքը, նրա հողի կազմութիւնը, այն է աւազային, կրային, սկահող կամ կաւային լինելը մեծ ներգործութիւն ունի խաղողի թէ զարգացման վրայ և թէ նրա ներքին կազմութեան: Այն դէպում երբ մի այգում մի քանի տեսակ խաղողներ կան և նրանցից կան այնպիսիք,

որ հասունութեամբ առաջ են ընկնում, կարծիք չկայ որ այգեկութը անհնարին է միաժամանակ կատարել. ուստի պէտք է կամ խաղողը հասունութեան կարգով քաղել, որ շատ գժուարութիւններ ունի և կամ սպասել խաղողի մեծ մասը հասնելուն, նախօրօք շատ վաղահամներն ու փոածները միջից հեռացնելով:

Խաղողի հասունութիւնը բարեխառն զօտոյ հարաւային տաք կողմերում ընկնում է օգոստոսին, այն ինչ հիւսիսում կամ բարձրադիր կողմերում ընկնում է հոկտեմբերին:

Սակայն ուր որ էլ չինի, խաղողի հասունութիւնը մեղ ներկայացնում է հետեւեալ նշանները—խաղողը կորցրել է իր ժուռութիւնը—թթւութիւնը, քաղցրացել, հատիկները փափուկ են և թոյլ կպած չանչին, սպիտակ տեսակների կաշին բարակել է, թափանցիկ է, սկերին նուրբ է ու աւելի մուգ ներկով քան առաջ, կորիզը գորշ գոյն է առել և հեշտութեամբ է բաժանուում մակց, իսկ չանչը կամ քնթեռնը փոխել է իր կանաչ գոյնը, բարակել ու մզացել:

Թէկ իբրև կանոն պէտք է ոկտեմբեր այգեկութը խաղողի կատարեալ հասունացած ժամանակը, բայց յաճախ պատահում է, որ ստիպուած ենք հասունութիւնից առաջ էլ սկսել, մանաւանդ երբ յանկարծ վրայ են հասնում ցրտերը կամ անձրեները կամ թէ չէ վազի տերեները այս ու այն պատահարից վաղաչ վազի տերեները այս ու այն պատահարից վաղաչ գնում: Այդպիսի հանգամանքներում այգետիրոջ կամ զինեզործի աչալրջութիւնիցն է կախուած յաջող դիրքուածները ձեռքից չտալ: Երբ վազերը

առողջ են, եղանակը ներում է, հարկ չկայ շտապելու, բայց երբ խաղողի մեծ մասը հասել է, ցուրաը ընկել և երկինքը արևի յոյս չէ տալիս, անօդուտ է սպասելը:

Նկատուած է և այս, որ պտղի հասունանալու վերջին շրջանում երբ եղանակը բարեյաջող է, 3—4 օրուայ ընթացքում խաղողի շաքարը այնպէս է աւելանում և թթւութիւնը նւազում, որ նոյնը չէր կարող կատարուել գրանից առաջ մի երկու շաքաթուայ ընթացքում:

Բացի արտաքին տեսքով կամ խաղողի համը առնելով հասունութեան աստիճանը որոշելը, կարելի է իմանալ նաև շաքարաչափ ասուած գործիքով: Դրա համար այգեկութից մի տասն օր առաջ խաղողներից թէ հասած և թէ խակը քաղելով՝ մզում են ու չափում և որոշում շաքարի քանակը և այդ գործողութիւնը ամեն 3—4 օրից կրկնում, մինչև որ շաքարաչափը ամենաբարձր աստիճանն է ցոյց տալիս և հետևեալ փորձերի ժամանակ այլևս առաջ չէ գնում, այլև սկսում է նւազ ցոյց տալ:

### 2). Այգեկութի համար պարտաւորեցուցիչ ժամանակը:

Կան երկիրներ ինչպէս ֆրանսայում այնպէս էլ կարծեմ մեզանում մի ժամանակ Դաղստանում, որ ժողովուրդը նախօրօք մի մասնաժողով է ընտրում իր միջից, որը որոշում է այգեկութի օրը և մինչև այդ ոչ ոք իրաւունք չունի այգին քաղելու: Այդ նահապետական օրերից մնացած սովորութեան պաշտ-

պանները այդ բանի առաւելութիւնը առարկում են նրանով, որ խաղողի հասունութիւնից առաջ ոչ ոք խակ խաղող չքաղէ և վատ գինի շինելով ու ծախու հանելով, տեղական գինիների հոչակը չկոտրէ, միւս կողմից լաւութիւնը գտնում են նրա մէջ, որ այգեկութի յայտարարած օրը հոչակուելով, շրջականերից շատ քաղլորներ կրան և գործը առաջ կընկնի:

Այգեկութը սկսելու այս պարտաւորական միջոցը անհիմն է և չէ կարելի նպատակայարմար ճանաչուել հէնց այն տեսակէալից, որ ինչպէս բացատրեցինք խաղողի հասունութիւնը միաժամանակ չէ լինում, քանի որ անկարելի է նախատեսել մեզանից անկախ պատճառները: Դիցուք թէ մասնաժողովը այս կամ այն օրն է նշանակել քաղի օրը, բայց մինչ այդ սկսում են անձրեները և խաղողը սկսում է փաել. մինչև նոր հրաման արձակելը, խաղողը ձեռից ընկնում է և տուժողը լինում է փոքրիկ այգետէրը, աղքատ կամ չքաւոր դասակարգը:

### 3. Փտած խաղողը եւ ազնիւ փտութիւնը:

Երբ խաղողի հասունութեան շրջանում յաճախակի անձրեներ են դալիս, խաղողի հատիկները այնպէս են լցւում, որ կաշին չէ դիմանում, տրաքւում է, բորբոս կապում և հիւթի մի մասը թափւում առողջ ների վրայ և նրանց ևս փտութեան ենթարկում: Այդ պիսի խաղողից շինած գինին թէ վատ համ ու հոտ ունի և թէ չէ դիմանում և շուտով փշանում: Այդ փտութիւնից պիտի զանազանել աղնիւ փտութիւնը, որը պատահում է միայն բարեյաջող տարիներին,

Երբ խաղողը կատարեալ հասունութեան հասնելով՝  
սկսում է չամիչ կտրել, ճեղքուել և թանձր հիւթով  
պատուել։ Այդպիսի խաղողների մէջ շաքարային մա-  
սերը աւելի լինելով՝ ամենաթունդ գինին են տալիս,  
բայց երբ ժամանակը անցնում է այդ չմշկած խա-  
ղողի վրայ սկսում է բորբոս դնել, այն ժամանակ  
թէ շաքարն է նւազում և թէ սկսում իսկական  
փոռութիւնը կան տեղեր, ուր խաղողը պահում են  
վագի վրայ մինչև չամիչ կտրելը կամ թէ քաղելով  
ծղօտի վրայ՝ փռում են արևի տակ, մինչև ցանկա-  
ցած ժամանակը հասնում է։

#### 4. Այգեկութի օրը եւ քաղի պայմանները։

Այգեկութի օրը պատահական եղանակի չպիտի  
ձեր, ընտրելի է արև ու չոր եղանակը. խոնաւ և  
անձրւային օրը ոչ միայն դժուարեցնում է քաղի  
աշխատանքը, այլև նւազեցնում գինու արժանաւո-  
րութիւնը։ Սրա համար էլ խաղողի քաղը միշտ պէտք  
է սկսել արևածագից յետոյ, երբ առաւօտեան ցօղը  
անցել է և դադարեցնել երեկոյեան արևը մտնելուց  
կամ զովը ընկնելուց առաջ։

Այգեկութի օրը այգետէրը կրկին պիտի նայէ  
իւր ամանեղինին, իր կարգ ու սարքին, որ ամեն  
ինչ մաքուր լինի ու իր տեղը և ապա կարգաւորէ  
քաղի աշխատութիւնները։

Այգում նա պիտի ունենայ քաղողներ, դարտկող-  
ներ, տուն կրողներ և վերակացուներ, իսկ տանը,  
ուր շիրատունն է, խաղողը ընտրողներ, ջարդողներ ու  
շիրայ ածողներ։

ա. Քաղողներ եւ նրանց պահօնը։ Քաղող-  
ները, որ ամենից մեծ խումբն են կազմում, նայե-  
լով այգու մեծութեան և աշխատութեան, պիտի ու-  
նենան ամեն երկու հոգի երեք քաղլակ և սուր գա-  
նակներ. զրանք այգու մի կողմից սկսած մի մի շար-  
քի կամ տախտակի գլուխն են անցնում և քաղելով  
գնում մինչև միւս ծայրը և նոյն կարգով քաղելով  
յետ գալիս։ Քաղի ժամանակ քաղլակը կամ կթոցը  
գնում են ձախ կողմը, ձախ ձեռքով ձիթը բռնում,  
աջով կտրում և ձգում ամանը։ Քաղի ժամանակ ձիթի  
կոթը կարծ պիտի կտրել, ողկոյզի մէջ եղած փտած,  
չորացած հատիկները հեռացնել և թափել զրա հա-  
մար յատկացրած երբորդ ամանը և աշխատել, որ  
քաղլակի մէջ տերև, ձախ կամ որ և է արտաքին բան  
չխառնուի։ Քաղլակը լցուելուց պահում են տախտակ-  
ներում կամ շարքերում զրած կիսատակառների կամ  
մէջքով ու ուսով կրելու ամանների մէջ դարտկում։

բ. Երկրորդ խումբը կազմում են դարտկողները,  
որոնք լիքը ամանները տանում դարտակում են կամ  
այգում եղած շիրատունը կամ թափում են սայ-  
լում ամրացրած տաշտերի կամ բերանը բաց տակառ-  
ների մէջ տուն ուղարկելու։

գ. Տուն կրողները սայլի վրայ կանգնած՝ նայում  
են, որ խաղողը թափելուց, փտածներ չխառնուեն,  
խաղողը լաւ դարսում են, ձեռքով ճխառում, որ շատ  
տեղ չբռնեն և լցուելուց՝ խփանով կամ շորով ծած-  
կում են ու այնպէս տուն փոխադրում։

դ. Վերակացուները հսկում են բոլոր մշակներին,

որ պարագ չմնան, ամեն ինչ ժամանակին կատարուի,  
խաղողը մաքուր լինի և վազերի վրայ բան չմնայ:

Քաղը պէտք է սկսել առաւօտները ցօղը անցը-  
նելուց յետոյ, հակառակ դէպքում, թէ շիրան ջրջը-  
րուկ է լինում և թէ սառը լինելով՝ ուշ և անկա-  
նոն եփ գալիս: Այսպէս էլ քաղը պէտք է դադարե-  
ցնել արևը մտնելուց առաջ: այն է մինչև երեկոյեան  
դովի ընկնելը:

Եթէ այդեկութի ժամանակ անձրև է գալիս,  
լաւ է քաղը դադարեցնել և սկսել երբ թփերը կցա-  
մաքին, բայց երբ շարունակ անձրեներ են գալիս,  
չպէտք է ժամանակ կորցնել, քաղը պիտի շտապե-  
ցնել, թէկուզ անձրեի տակ ու վերջ տալ:

Այգեկութի այն եղանակը, որ մեզանում իբրև  
տնտեսութիւն հասածն ու տհասը, առողջն ու փտա-  
ծը միանդամից են հաւաքում ու միասին ջարդում,  
աւելի քան գործնական չէ. մի քաղակ փտած խա-  
ղողը բաւական է, որ մի ահազին տակառ գինի փշա-  
ցնէ և նրա արժեքը ձգէ: Խաղողի ընտրութիւնը որ-  
շափ զգուշաւոր լինի, որչափ մաքուր, այնշափ այ-  
դետիրոջ շահն է, թէկուզ այդ ընտրութիւնը մեծ  
ծախքերի հետ կապուած լինի:

#### Գլ. IV.

ՇԻՐԱՏԱՆ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆԵՐԸ ԵՒ ՇԻՐԱՅ ՊԱՏ-  
ՐԱՍՏԵԼԸ:

1. Մինչդեռ այգում առաջ է գնում խաղողա-  
քաղը, նրա հետ համբնթաց պիտի գնայ և շիրատան

աշխատութիւնը, որ նոյնպէս բաժանուած պիտի լինի  
մի քանի անձանց վրայ: Այսպէս շիրատանը պէտք է  
ունենալ—խաղող ջոկողներ, չանչահան անողներ և  
ջարդողներ, որոնց վրայ պիտի հսկէ այգետէրը կամ  
գինեգործը:

ա. Զոկողները եկած խաղողը, եթէ քաղողները  
լաւ չեն մաքրել, թափում են առանձին տաշտի մէջ  
և հեռացնում փառածը, ցեխոտը լուանում, ժուռը,  
չորացածը և ամեն բան, որ կարող է վնասել գինուն,  
առանձնացնում:

բ. Զարդողները մաքուր խաղողը, եթէ ջարդող  
մեքենայ չկայ կամ թափում են հնձանը ու ոտքով  
արրում, կամ լցնում են քսակը և այնպէս կոխըր-  
ճում գրա համար յատկացըրած տաշտի կամ նաւի մէջ,  
կամ թէ մեքենայ ունենալուց՝ թափում են մեքենան  
և անիւը գարձնելով՝ ջարդում: Խաղողը ոտով ջար-  
դելուց՝ բաւականին հիւթ է մնում մէջը, այդ հիւթը  
հանելու համար թեփուկը կամ չանչը, եթէ ճերմակ  
խաղող է և չեն ուզում շիրայի հետ եփ տալ, քսակի  
մէջ են ածում ու քարում, որ բոլորովին մզուի:  
Մզելուց յետոյ այդ թեփուկը (փչալը) գործ են ա-  
ծում օղի քաշելու համար:

գ. Զանչահան անողները: Խաղողը չանչահան  
անելու համար հասարակօրէն թափում են տաշտի  
մէջ և փայտի փոցխով այնքան հարում, որ հատիկ-  
ները թափում են և չանչից զատւում: Բայցի այդ  
ձեւը կան և այլ միջոցներ. կաղնի տախտակներից  
կամ կլայեկած լարերից մաղ են շինում խոշոր ծա-  
կերով, որ կարելի լինի խաղողի հատիկները միջից

անցնել, վրան թափում են խաղողը և ձեռքով կամ քաշոցով (կոչերգա) այնքան տրորում, մինչև մաղի եւ բեսին մնում է չանչը, իսկ հատիկները թափում են տակը դրած տաշտի կամ չանի մէջը:

2. Զարդող մեֆենաների զործածութիւնը:

Զարդելու և չանչահան անելու աշխատութիւնը գիւրացնելու համար կան և յատուկ մեքենաներ, որոնց մէջ ընդունուածը Մարիլին է, Գայօյին և այլոց: Այդ մեքենաների կազմութիւնը բարդ չէ, երբ էտական մասը երկու չուզունէ զլանակներ են, երբ կայնութեամբ ընկած, շեղագիր շերտերով և պտաւում են մին ձախ, միւսը աջ դիմացէ դիմաց:

Այդ զլանակների վերևում ամրացրուած է մի արկղ, որի յատակը բաց է և խաղողը մէջ թափուելուց՝ ուղղակի ընկնում է զլանակների բերանը, որ կողքի ձեռանիւի պտաւելուց՝ ջարդւում, թափում է ներքեւ: Այդ ջարդող մեքենան ունի և իրեն կից չանչահան անող գործիք, որի պղնձեայ ծակուկէն չանչահան անող պտաւուած պտաւող թաթերի բեցիլինդրի մէջ հաստատուած պտաւող թաթերի բանը ընկնելով՝ ջարդուած խաղողը արորւում է, բանը ընկնելով՝ ջարդուած խաղողը արորւում է, չանչը գնում մի ծայրից գուրս գալիս, իսկ հեղուկը հատիկների հետ ցիլինդրի ծակերից անցնում, ներքեւ դրած ամանը լցւում:

Այդ մեքենայով երկու հոգի կարող են օրական 1500—2000 պուդ խաղող ջարգել և չանչահան անել՝ ջարդող մեքենան արժէ 30—40 ր. իսկ ջարդող՝ չանչահան անողը 200—250 ր:

Զարդող մեքենան բանեցնելուց, պէտք է նայել, որ զլանակները թուլանալով՝ մէկմէկից այնպէս չհեռանան, որ խաղողը առանց ջարդուելու մնայ և ոչ էլ այնքան մօտ, որ կորիզը ջարդուի:

3. Մամուլը եւ ժիրայի պինդ մասի մզելը:

Զարդուած—չանչահան արուած խաղողը, եթէ սպիտակ է և չենք ուզում նրա կաշին ու կորիզը շիրայի հետ եփ տալ, տափակ ու մուգ գումարվ գինի ունենալ, պէտք է լաւ մզել և առնձնացնել, իսկ մզելու համար բաւականին ուժեղ ճնշումն պիտի լինի, որ միջի հեղուկը գուրս գայ: Դրա համար կան զանազան կազմութեան, զանազան սխատեմի ու զանազան մեծութեան մամուլներ, փայտէ կամ չուզունէ կոնքով կամ աւազանով: Գինու համար ամենից յարմարը Մարիլի, Վերմորելի և Մայֆարտի պրեսներն են, որ այժմ ամեն տեղ տարածուած են: Այդ պրեսները ունեն մի անշարժ պտուտակ կոնքի վրայ սմբացրած, նեղ անցքերով փայտէ շրջապատ, որ 2 կտմ 4 կտորներից է բաղկացած, որոնք առանձին կոճակներով մերուելով, միանում են ու կոլոր չափարի ձև առնում: Այդ չափարի մէջը թափում են ջարդուած խաղողը կամ ձաճան, լաւ հաւասարեցնում թոփախով, վրայից երեք շարք շրջապատի ներսի համապատասխան տախտակներ շարուտում, նախ աւելի բարակները, ապա հաստերը, նրանց վրայից երկու կամ երեք կարող համաշափ կոճակներ են դնում երկու երկու խաչաձև, դրանց վրայ թիկնում պտուտակի ծայրը անցըրած կլկալը (բանա), լծակը անցնում իր



տեղը, պողոսակով պնդացնում, ապա կլիալի ծակոտ-  
կէն շրջանակի վերը գտնուող երկու բազուկների մէջ  
երկու երկաթեայ փոքրիկ սեպիկները անցնում, սուլ  
ծայրերը դէպ առաջ ու սկսում լծակը յետ ու առաջ  
քաշել: Լծակը առաջ տանելուց, սեպերը մտնում են  
շրջանակի ծակոտիների մէջ և պինդ բռնում, իսկ  
յետ քաշելուց դուրս են գալիս առաջ անցնում ուրիշ  
ծակերի մէջ մտնում, որով շրջանակը պտտում է,  
հետզհետէ կրկալը իջնում ու սղմում տակը գտնուած  
կոճկերը, տախտակները և ջարդուած խաղողը կամ  
ճաճան:

Մամուկով մզելուց՝ սկզբում կամաց պիտի սղմել  
որ միջի հեղուկը դուրս գալու հեշտ ճանապարհ ու-  
նենայ, ապա ջուրը պակասելուց, կարելի է պինդ  
սղմել. երբ այնքան սղմում են, որ երկու երեք հո-  
գի այլևս չեն կարողանում լծակը շարժել, սեպերը  
հանում են, սուր ծայրերը այժմ հակառակ կողմի  
վրայ դնում և առաջուայ կարգով բանում: Այդ ժա-  
մանակ կլկալը բարձրանում է ու թուլանում, հանո-  
տում են կոճկերը, տախտակները, բանում շրջապա-  
տը և թիակով կամ այլ բանով մզուած ճաճան-  
ում, նորից խառնում, նորից մամուկը սարքում ու  
երկրորդ անգամ մզում, ու մզուածքը դէն ձգում:

Այդ պրեսների առաւելութիւնը նրա մէջն է, որ  
առաջուայ նման մշակը պրեսի շուրջը չէ պտտում,  
տեղը կանգնած է, պրեսը քիչ տեղ է բռնում, շար-  
ժական է և ուղած տեղը կարելի է փոխադրել:

Պրեսները նայելով իրենց մեծութեան և կազ-  
մին, արժեն 200—600 բուրլի և աւելի: Փոքր այ-

գեաէրերը միացտծ կարող են մէկն ունենալ: Որպէսզի  
ճաճան կամ խաղողի թեփուկը չկպչէ երկաթի պտու-  
տակին, ամեն օր մաքուր ճարպով պիտի օծուի կամ  
հեղուկ վազելին քսուի: Պէտք է աչքի առաջ ունենալ,  
որ ճաճան օդի տակ երկար մնալուց՝ գորշ գոյն է  
աւենում և վատ համ ստանում, որ և աղդում գինու-  
թէ համի և թէ գոյնի վրայ, ուսափ երկար ժամանակ  
չպէտք է բացօղեայ թողնել և շատ շուռումուռ չտալ:

Ճաճան կամ խաղողը պրեսը լցնելուց՝ որչափ  
հնարաւոր է շրջապատի ներսը հաւասար պիտի բա-  
ժանել, որ ճնշման ժամանակ անհաւասարութիւնից  
պտուտակը չծոռուի կամ շրջապատը տրաքուի: Ճնշը-  
ման ժամանակ հեղուկ մասին աւելի ազատ ճանա-  
պարհ տալու համար 2—3 կարգ ուռենու կամ վազի  
ճիպոտներէ են շարուառում շրջապատի ներսը, ճաճի  
վրայից:

4. Խաղողի ողկոյզի բաժի յարաբերութիւնը նրանից  
մզուած օիրայի վերաբերութեամբ:

Միջին հաշտով պէտք է ընդունել, որ մի պուդ  
խաղողը տալիս է մի վեգրօ զինի: Խոշոր բարակ թէ-  
փուկով ու ջրալի խաղողները քիչ աւելի, այն ինչ  
մանր, հաստ կաշիով ու քիչ հիւթալի խաղողները  
մի վեգրից քիչ: Այսպէս էլ խոնաւ տարիներին շիրան  
շատ է լինում, իսկ չորային տարիներին քիչ:

Միջին թւով ճաճան չանչի հետ կազմում է  
խաղողի  $\frac{1}{4}$  մասը, իսկ շիրան  $\frac{5}{4}$  մասը. բայց այդ  
յարաբերութիւնը փոփոխում է՝ նայելով խաղողի  
տեսակին, նրա հատիկների խիտ կամ նոսր դասաւո-

ըութեան և շատ կամ քիչ հիւթալի լինելուն: Երբ խաղողը ջարդում ենք պրեսի մէջ և ինքն իրեն քամ է գալիս առանց ճնշման, այն ժամանակ այդ եկած ջուրը կազմում է ամբողջ քաղցուի (կաշին էլ խառն)  $\frac{2}{5}$  մասը, իսկ մզուածքի հետ՝  $\frac{4}{5}$  մասը:

Միջին հաշով քաղուած խաղողը ինչ ծաւալ որ բոնում է, այդ ծաւալի կէս մասով քաղցու ենք ստանում. օրինակ եթէ մի յիսուն վեղրանոց լիքը խաղող ունինք, ջարդելուց 25 վեղրայ քաղցու կստանանք:

Զանչը կազմում է քաղցուի 3—5% ը, երբեմն և աւել:

#### 5. Շիրայի խառնուրդ անելը:

Մեզ յայտնի է, որ միենոյն խաղողների հատիկներից ստացուած հիւթը տարբերում է մէկմէկուց, մի մասը աւելի շաքար ունի և քիչ թթւութիւն, այնչինչ միւս մասը շատ թթւութիւն և քիչ շաքար, երրորդ մասը թէ աւելի թթւութիւն, թէ աւելի քիչ շաքար և թէ չափազանց տտպութիւն: Եթէ մենք այդ շիրաները առանձին առանձին եփ տանք, այլ և այլ տեսակի գինի կունենանք: Այն շիրան, որ ջարդելուց յետոյ ինքնազլուկ թափւում է տաշտից կամ պրեսից առանց մզելու, ամենից թունդ գինին կդառնայ և մաքուր համ կունենայ, բայց այդ գինին դժուարութեամբ կպարզուի և ուշ կզարդանայ, ինչու որ նրա մէջ շատ աննշան է տանինի (տտպութեան) ներկայութիւնը, որը միանալով սպիտակուցային նիւթի հետ, նպաստում է գինու շուտ հասունութեան:

Այն շիրան, որ եփ է գալիս իր կաշուի հետ և

ձաճայի մզուածքը հետը չէ խառնուած, քիչ թթւութիւն և տտպութիւն ունեցող բնական նորմալ գինի է տալիս, որը աւելի շուտ է զարգանում քան միւսները: Իսկ այն շիրան, որը մենք ստանում ենք պրեսի տակ պինդ մզելուց, նա թէ թոյլ գինի է տալիս, թէ թթւու է և թէ կոշտ. ծախ հանելու համար այդպիսի գինին անպէտք է: Սրանից հետեւմ է, որ վերոյիշեալ երեք տեսակի շիրաները պիտի իրար խառնուեն, մէկմէկու պակասը լրացնեն. գործնականապէս էլ այդպէս են անում, տակառի  $\frac{1}{2}$ -ը լցնում են ջարդելուց ինքնազլուին եկած շիրայով,  $\frac{1}{5}$  մասը պրեսի առաջին մզուածքից և մնացած մասը երկրորդ մզուածքից: Այդպիսով միայն միանման գինի կստացուի, որը և ընդունակ կլինի դիմանալու և կանոնաւոր զարգանալու:

#### 6. Շերայի բաղրութիւնը երկար պահելու միջոցներ:

Երբեմն ստիպուած ենք լինում շիրան հեռու տեղ ուղարկել և թէ նրա քաղցրութիւնը երկար ժամանակով պահել այս ու այն գործադրութեան համար, այն ինչ շիրան խաղողի քաղելուց մի օր չանցած՝ սկսում է եփ գալ, կորցնում է իր քաղցրութիւնը, շաքարը փոխւում է ալքօօլի և ածխաթթու գաղ առաջացնում, որը եթէ ազատ դուրս գալու տեղ չունենայ, կարող է ամենաամուր ամանը անգամ տրաքեցնել:

Եփ գալու առաջը առնելու համար սալիցիլեան թթւուտ էին խառնում շիրային, բայց այդ միջոցը վնասակար համարուեց առողջապահական տեվակէտից: Միւս միջոցը շիրան ստացատան պահելն էր մշտա-

կան 0 աստիճանի մէջ, այն է սառուցման կէտումք Բայց այդ հնարաւոր է այնտեղ, ուր սառուց կայ և շիրան ուրիշ տեղ չէ փոխագրւում։ Վերջերա եղած հետազօտութիւնները ցոյց տվին, որ շիրայի եփը կարելի է կանգնեցնել առժամանակ, եթէ շիրան մի վայրկեան 40° R. տաքացնենք։ Այդ ջերմութիւնը բաւական է, որ մասամբ փշացնէ եփ բերող տարրերը և մասամբ էլ յետաձգէ նրանց զարգանալը։ Միայն պէտք է զգուշանալ, որ այդ նորմայից չանցնի ջերմութիւնը, որովհետեւ շիրայի մէջ բաւականաչափ սպիտակուց (albumin) կայ, որի մեծ մասը 45°—48° R. ջերմութեան ժամանակ չէ լուծում։

Շիրան տաքացնելու համար խորհուրդ են տեսնում նախ մաղից անցնել, որ կորիզներից ու թեփուկից բաժանուի, յետոյ անց են կացնում օձապտոյտ խողովակի միջով, որը դրուած է տաք ջրով լիքը կաթսայի մէջ։ Այնպէս պէտք է կանոնաւորել շիրայի կաթսայից դուրս դալու արագութիւնը, որ ջերմութիւնը 40° դէնը չանցնի։ Կաթսայից ելած տաք շիրան պիտի այնուհետեւ մտնի ցուրտ ջրում դրուած օձապտոյտ խողովակը և այգտեղ սառելով անցնի տակուր, որը նախապէս ծծմբով թեթև պիտի ծխած լինի։

Շիրայի եփ դալու առաջն առնում են և ծծմբաթթուտի միջոցաւ, այն թթւուտի, որ գոյանում է ծծումքի այրուելուց։ Դրա համար 10—15 զօլունիկ ծծումք են վառում 50 վերանոց տակառի մէջ, վրան մի քանի վերայ շիրայ թափում, հարում, նորից ծխում, նորից շիրայ ածում հարում մինչեւ տակառի լցուելը։ Ծծմբային թթւուտը շիրայի եփ բերող սուն-

կերը փշացնում է, բայց միևնոյն ժամանակ նրանից ծծմբի սաստիկ հոտ է գալիս, որը կարելի է հեռացնել շիրան մի քանի անգամ ուրիշ աման տեղափոխելով, թէս այդ ժամանակ նորից կրկնում է շիրայի եփ գալը։ Եթէ մենք ստիպուած ենք նոր գինի տեղափոխել միևնոյն է եփը վերջացրած լինի թէ ոչ, ամանի բերանը չպէտք է փակել բոլորովին, նրա միջի գագին անցք պիտի տալ, եթէ չենք ուզում, որ տակառը տրաքուի։ Այդ նպատակի համար առանձին խցաններ կան, որից գազը կարող է գուրս գալ, այնինչ գինին կան, որից գազը կարող է գուրս գալ, այնինչ գինին գուրս թափուելու տեղ չունի։ Այդ խցանները փայտից են, մէջը խողովակ ունին և ներքենի կողմից սպիտակ թիթեղից մի ծակոտկէն արկղիկ, որի ծակերից գազը անցնում է խցանի խողովակը և այնտեղից գլխովը գուրս գալիս. իսկ խցանի գլխի մասում ուր ծակն է, ուետինէ կտոր է անցկացրած և ամեն 1/2 դիւյմի վրայ մի մեխ խփած։ Գազը խցանի ծակից գուրս գալուց՝ ուետինը հրում բարձրացնում է, իսկ գինին չէ թափուած, քանի որ ուետինը սղմում է իսկոյն ծակի բերանը։

Մեզանում շիրայ կամ նոր գինի փոխագրելու համար գործ են ածում մէջը ծակ երկայն խցաններ կամ ծակ խցաններում ամբացնում են արշինաչափ կամ ծակ եղէզն (մասրա), որ տակառը լիլիսկալուց շիրայն կամ գինին չթափուի և գազը ազատ ճանապարհ ունենայ։ Յամենայն գէպս նոր գինի ճանապարհելուց՝ սայլով լինի թէ շոգեկառքով կամ շոգենաւով անպատճառ տակառը պէտք է ծխել, քիչ թերատ ածել գինին և խցանը դէպի վեր դնել։

ԳԼ. V.

ԾԱՆՐԱՉԱՓԻ ԵՒ ԶԵՐՄԱՉԱՓԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԲ:

1. Ծանրաչափը (պրոմետր) մետաղից կամ ըստ մեծի մասին ապակուց շինած մի գործիք է, որ ծառայում է հեղուկների համեմատական կշիռը որոշելու, այսինքն թէ մի հեղուկ որքան ջրից ծանր կամ թեթև է. ծանրաչափերը շինուած են ջրաբաշխական այն օրէնքների հիման վրայ, որ մի մարմին ջրի մէջ կորցնում է իր քաշից այնքան, որքան կշուռմ է նրա ծաւալով զուրս մղուած ջուրը։ Ծանրաչափի տեսակները շատ են և նայելով թէ ինչ նպատակի են ծառայում, այն անունով էլ կոչւում են. այսպէս շաքարի քանակը չափելու ծանրաչափը ասւում—շաքարաչափ, թնդութիւնը որոշողը—թնդաչափ կամ ալկօօլաչափ, քացախինը՝ քացախաչափ են։

Ծաքարաչափերը ևս լինում են զանազան տեսակի և ամեն մին կրում է իր հնարողի անունը այսպէս կայ շաքարաչափ Բարօյի, Բոմէի, Էքսլէյի, Բալմինգին և այլոց։

Ծանրաչափերը շինուած են կամ ջրից ծանր հեղուկների համար ինչպէս շաքարի կամ շիրայինն է, կամ այնպիսի հեղուկների, որոնք ջրից թեթև են, ինչպէս ալքօօլն է։ Ծիրաչափով մօտաւորապէս կարելի է իմանալ շիրի միջի եղած շաքարի քանակը և թէ այդ շաքարից ստացուելիք զինու թնդութիւնը։ Ծիրաչափը անհրաժեշտ դորձիք է մանաւանդ այն անձանց համար, որոնք դրսից խաղող կամ շիրայ են

առնում, նա ցոյց կտայ կեղծիքը, եթէ շիրային ջուր է խառնուած։

Շիրաչափերի մէջ ամենից գործածականներն են՝ Բարօյին, Էքսլէյին, Բոմէին, Գէյլիւսակին, Սալերոն-Դիւժառդանին և այլոց։

2. Շիրի մէջ եղած շաքարը գործականապէս չափելու համար նախ հեղուկը անցնում են ֆիլտրից կամ կտաւից, ինչու որ շիրաչափը պղտոր շիրայի մէջ շաքարի քանակը աւելի է ցոյց տալիս, ապա չափում են նրա ջերմութիւնը, եթէ 14<sup>0</sup> R-ից ցած է, շիրայի ամանը տաք ջրի մէջ են դնում, եթէ բարձր է՝ ընդհակառակը ցուրտ ջրի մէջ, մինչև որ 14<sup>0</sup>-ին է համարում։ Ապա երկու մատով բռնում են շիրաչափը հանդարտ թողնում շիրի մէջ և նայում կողքից հեղուկի մակերեսոյթին և որոշում նրա համապատասխան աստիճանը շիրաչափի վրայ։

Բարօյի շաքարաչափը ցոյց է տալիս շիրայի մէջ եղած շաքարի քանակը և միննոյն ժամանակ նրանից գոյանալիք ալքօօլը։ Նրա ամեն մի տոկոս շիրայի շաքարից կէս տոկոս ալքօօլ է ստացւում։ Ծաքարաչափը իր մէջ և ջերմաչափ ունի։ Միւս շաքարաչափերը ևս գործածութեան համար հեշտ են ու կայ դրանց համեմատական ցուցակը։

3. Զերմաչափի գործածութիւնը։

Ինչպէս շաքարաչափը, այնպէս էլ ջերմաչափը կարեոր է զինեզործին. առանց նրան անկարելի է իմանալ թէ շիրայի եփ գալու ընթացքը, թէ շիրայի տաքութիւնը, թէ շիրատան և թէ զինեատան։

Զերմաչափերի տեսակները երեք են—Ռէօմիւրի

որ գործադրուում է Գերմանիայում և մասամբ Ռուսաստանում, Յելսի կամ հարիւրամասնեայ—Փրանշայում և դիանական հետազօտութեանց ժամանակ և Փարնհէյտի—Ամերիկայում և նրա գաղութներում: Բոլոր ջերմաչափերի մէջ էլ հիմնական մի կէտ է ընդունուած, որ համապատասխանում ջրի եռմանը խտաչափի 760 միլիմետր բարձրութեան մէջ. միւս հիմնական կէտը Ռէօմիւրի և Յելսի—այդ սառուցման կէտն է, որտեղ մնդիկը կանգնում է հալւող ձիւնի մէջ: Ռէօմիւրը սառուցման կէտը նշանակել է 0 աստիճան և 0-ից ցած նշանակել 32 աստիճաններ, իսկ եռման կէտը 80 և այդ բաժանել 80 հաւասար մասերի կամ աստիճանների, այնինչ Յելսը սառուցման կէտը 0 ընդունելով եռման կէտը նշանակել է 100 աստիճան և բաժանել 100 մասերի, իսկ 0-ից ցած 40 աստիճաններ նշանակել: Փարնհէյտը եռման կէտը նշանակել է 212 աստիճան, իսկ սառուցմանը 0-ից 32 աստիճան ցած և բաժանել ջերմաչափը 212 աստիճանների, այնպէս որ բնական սառուցման կէտից մինչեւ եռման կէտը 180<sup>0</sup> է:

Աստիճան բառի փոխարէն թւի առաջ 0 նշանն են դնում, օրինակ 60<sup>0</sup> (վաթուն աստիճան) տաքութեան բառի փոխարէն + նշանը թւի ձախ կողմից, ցըտութիւն բառի տեղ—նշանը, իսկ թէ որ ջերմաչափով է կատարուած՝ թւից յետոյ դրուում է անուան սկզբնատառը R. C. F. այն Ռէօմիւրի, Յելսի, Փարնհէյտի. այսպէս + 25<sup>0</sup> R.—15C նշանակում է Ռէօմիւր 25 աստիճան տաքութիւն, Յելսի 15 աստիճան ցըտութիւն:

Գլ. VI.

ՇիրԱՅԻ ԼԱՒԱՅՆԵԼԻ:

Բարեյաջող տարիներին բնութիւնը ինքը տալիս է մեզ այն ամեն լաւ յատկութիւններով օժտուած խաղողը, ինչ որ պէտք է ընտիր գինի ստանալու համար համաձայն տեղական պայմաններին ու խաղողի տեսակներին: Բայց այդպիսի տարիները հազուադէպ են, բերքի որակն ու քանակը, ինչպէս քանիցս յիշել ենք, կախումն ունի մի շարք պայմաններից և գիշաւորապէս ամբողջ տարուայ եղանակից: Մենք յաճախ այնպիսի վատ զինիներ ենք ստանում, որ պէտք է լինում արհեստական միջոցների գիմել, նրա մէջ եղած այս ու այն պակասաւոր կողմը լրացնելու, նրան այնպիսի դրութեան մէջ դնելու, ինչ որ առհասարակ ունենում է յաջող տարիներին, յաջող պայմաններում:

Սնյաջող տարիներին արդարեւ մենք տեսնում ենք, որ մեր շիրան թթու է, շաքարը պակաս, գոյնը տեղը չէ, ի հարկէ նրանից ստացուած գինին էլ թոյլ ու թթու կլինի, որ վաճառահանութեան մէջ պէտքական չէ. այդպիսի շիրան ուղղելու համար գիտութիւնը որոշ ճանապարհ է ցոյց տւել և այգետէրը կամ գինեգործը կարող է համարձակ օգուտ քաղել, առանց առողջութեան վսասակար տարրեր մտցնելու գինու մէջ, որ առաջներում գործադրուում է էր լայն չափերով: Բարելաւացնելու միջոցներից մենք կյշենք երկուսը—շիրայի շաքարելը, որ առում է «Նապտա-

լիզացիա» և ալքօօլի միջոցաւ շիրայի լաւացնելը, որ ասւում «ալֆօօլիզացիա»:

1. Շավտալիզացիա (շիրայի շաբարելը):

Առաջին անգամը ներկայ դարի սկզբներին շիրան բարելաւացնելու համար շաքարի գործածութիւնը մացրեց ֆրանսայում քիմիկոս Շավտալը և նրա աշնունումն էլ այդ գործողութիւնը Շավտալիզացիա ասուեցաւ: Թէ շիրայի մէջ շաքար խառնելը ինչքան օրինական է ճանաչուած, այդ կարելի է դատել նրանից, որ ֆրանսայում յետ են դարձնում այն շաքարի վրայ դրած տուրքը, որը գործադրում է զինեգործութիւնը կարիքների համար, ինչպէս մեզանում այժմ տէրութիւնը չէ վերցնում այն սպիրտի տուրքը՝ աքցիզը, որ դարձեալ նոյն նպատակի համար է ծառացիում: Արհեստական կերպով աւելացրած շաքարը շիրայի եփ դալու ժամանակ դառնում է ալքօօլ և բուրովին չէ զանազանուած խաղողի շաքարից:

Շիրայի համար գործադրելի շաքարը ճակընդեղի կամ շաքարեղեղնի սովորական բաֆինադ շաքարն է, որ կտրատելով՝ վրան շիրայ են լցնում և  $25^0 - 30^0$  տաքացնելով՝ թափում չանը կամ տակառը և այդ այն ժամանակ, երբ շիրան իր սաստիկ եփը վերջացրել է և մեզմացել: Սաստիկ եփի ժամանակ շաքար խառնելը և այն մեծ քանակութեամբ կարող է եփը կանգնեցնել կամ դանգաղեցնել:

Խառնելու շաքարի քանակութիւնը կախուած է շիրայի յատկութիւնից և թէ մեր ցանկութիւնից, թէ քանի աստիճան ենք ուղում բարձրացնել նրա

քաղցրութիւնը կամ թնդութիւնը: Դրա համար պէտք է ի նկատի ունենալ հետեւեալը.

Առաջին՝ որ շաքարը այնպիսի յատկութիւն ունի, որ նրա 95 մասը փոխարինում է շիրայի շաքարի 100 մասին. Երկրորդ՝ որ շիրայի մէջ լուծուած մի փունտ շաքարը բռնում է  $0,214$  կվարտ տեղ, երրորդ՝ որ մի վեղրօ շիրան քաշում է 32, 3 փնտ, իսկ 100 փունտ շիրան 3, 1 վեղրօ է պարունակում, այնպէս որ աւելցրած շաքարը ոչ միայն բարելաւութեանն է ծառայում, այլ և մեծացնում է ծառալը և մասամբ իր ծախքը թեթևնում: Թէ ինչ քանակութեամբ շաքար պէտք է խառնել շիրային այս կամ այն աստիճան բարձրացնելու նրա թնդութիւնը, այդ մասին զինեգործը պէտք է հետեւեալ հաշիւը վերցնէ, ընդունելով աւելցնելիք շաքարի փունտի քանակը ք թիւը, շ շիրաչափի ցուցմունքը շիրայի  $0\%$  մէջ, շ բարելաւացրած շիրայի ցուցմունքը, և ա աւելցնելիք շաքարի քանակը, կունենանք հետեւեալ փորմուլան՝  $\rho = \frac{(z - z)}{100 - 0,214} \times 95$ , որ թւերի վերածելով տառերով արտայայտած քանակը և ենթագրելով շաքարաչափի ցուցմունքը  $15^0_0$ , բայց շիրան ցանկանում ենք  $18^0_0$  հասցնել—կստանանք  $\rho = \frac{95 (18 - 15)}{100 - 0,214 \times 3} = \frac{285}{100 - 0,642} = 99,358 = 2,87$  փ. այսինքն  $100$  փնտ. շիրային պէտք է խառնենք  $2,87$  փ. բաֆինադ, բայց որովհետև  $100$  փունտ շիրան բռնում է  $3, 1$  վեղրօ տեղ, ասել է ամեն վեղրօյին հարկա-

լոր է  $\frac{2.87}{3,1} = 0,926$  կ. կամ 88,9 զօլոտ. կամ ամեն  
մի աստիճան բարձրացնելու  $29\frac{1}{2}$  զօլոտ շաքար:  
Ամեն անգամ մանրամասն հաշիների մէջ չմտնե-  
լու համար գրքի վերջում կդրուի առանձին ցուցակ:

2. Ալֆօլիգացիա (շիրայի լաւացնելը ալֆօլի  
միջոցաւ):

Լինում են տարիներ, երբ խաղողի մէջ փառած-  
ներ շատ են լինում, որ աննպաստ կերպով ազդում  
են գինու յասկութեան վրայ, իրենց մէջ շատ օտար  
նիւթեր մտցնելով նրա մէջ։ Այդպիսի հանգամանք-  
ներում պէտք է եփ գալը արագացնել և շուտով բա-  
ժանել գինին թեփուկից, ճաճայից։ Այդ գէպքում  
շիրան շաքարելը անյարմար է այն տեսակէտից, որ  
նա կանգնեցնում է կամ դանդաղեցնում է եփ գալը։  
Շաքարը ինքը եփ եկող տարրերին չէ օգնում, ինչ-  
պէս խաղողի շաքարը, այլ ընդհակառակը խաղողի  
մէջ եկող խմորում առաջ բերող տարրերն են, որ  
նրան լուծում են և իրենք մեռած ընկնում։ Դըա-  
համար էլ այդպիսի գինիներին կամ շիրային ընդու-  
նուած է մաքուր առանց վատ հոտերի ու համի ալ-  
քօօլ խառնել։

Գինուն կամ շիրային խառնելիք ալքօօլը կամ  
սպիրտը պէտք է խաղողից քաշուած լինի, որը աւելի  
մօտ է գինուն, քան գետնախնձորի, հացի և այլ  
նիւթերից ստացուած ալքօօլ։ Այդ սպիրտը զտած  
պիտի լինի և ինչպէս ասացինք առանց վատ համ  
պիտի լինի և ինչպէս ասացինք առանց վատ համի  
ու հոտի, որը կարելի է խմանալ, եթէ կէս թէյի

բաժակ սպիրտ ածենք և հարելուց յետոյ հոտը և  
համը առնենք. երկրորդ ածում են բաժակի մէջ  
սպիրտը ապա դատարկում և օդի դիմաց տատանե-  
լով հոտ քաշում, վերջապէս կարելի է և ծծող զտիչ  
թուղթը սպիրտի մէջ թաթախել, օդի մէջ տատանել,  
հոտ առնել։ Եթէ սպիրտը քաշելուց խանձուած է լի-  
նում, այդ խանձուածքի հոտը տալիս է գինուն։

Սպիրտի կատարած գերը ոչ միայն ուժգնութիւնն  
է, որ տալիս է թոյլ գինուն, այլև պահպանում է գի-  
նուն այս ու այն հիւանդութեան ենթարկուելու,  
մանաւանդ ամառուայ շոգերին։ Նա պակսեցնում է  
գինու մէջ եղած թթւսւթիւնը, գինին ախորժելի շի-  
նում և նրա հետ միանալով՝ գինու անուշանոտու-  
թեան նպաստում։ Մգացնում է գինու գոյնը, ազգե-  
լով ճաճայի վրայ, եթէ սպիրտը աւելացնում ենք  
շիրային եփը վերջանալուց առաջ։ Միայն պէտք է  
ի նկատի ունենալ, որ մեծ քանակութեամբ և այն  
միանդամից գինուն սպիրտ խառնելով, գինին կորց-  
նում է իր քնքշութիւնը և վնասում առողջութեան։  
Գինու մէջ թնդութեան աստիճանը հասարակօրէն  
կարելի է բարձրացնել մինչև 10—12 աստիճանը և  
շատ քիչ գէպքերում մինչև 15-ը։

Սպիրտը լաւ է նոր գինուն խառնել առաջին  
անգամ տեղափոխութեան ժամանակ, քան արդէն հա-  
սած գինուն, երբ նրա հետ դժուար է մերւում, միա-  
նում։

Շիրային կամ գինուն խառնելիք ալքօօլի քանա-  
կութիւնը որոշելու համար հետեւեալ հաշիւը պէտք է  
անել։ Ասենք թէ շիրան  $15^0/0$  շաքար ունի և ուզում

Ենք այսպիսի թնդութեան գինի ունենալ, ինչպիսին  
ստացում է  $19\%$  շիրայից: Պաստեօրի հաշումը՝  $100$   
մաս խաղողի շաքարը տալիս է ալքօօլ  $48,46$  քաշով  
կամ  $56,27$  ծաւալով, ուստի  $15\%$  շիրայից կստացուի:  
գինի  $\frac{56,26 \times 15}{100} = 8,44\%$ , իսկ  $18\%$  շիրայից  
 $\frac{56,26 \times 18}{100} = 10,12\%$ , ապա ուրեմն ամեն մի վեդրա-  
յին հարկաւոր է աւելացնել  $10,12 - 8,44 = 1,68\%$   
ալքօօլ: Եթէ մենք կամենում ենք  $100$  վեդրայ շի-  
րայ ուղղել, մեզ կհարկաւորուի  $1,68 \times 100 = 168\%$   
րայ ուղղել, այսինքն  $\frac{168}{90} = 1,86$  վ: Ալքօ-  
այսինքն  $90\%$ -ի ալքօօլ պէտք է  $\frac{90}{90} = 1,86$  վ: Ալքօ-  
օլը ինքն էլ տեղ է բռնում և այդ  $1,84$  վեդրան և  
պէտք է  $10,12\%$  թնդութեան լինի, այսինքն նրա  
վեճառի աւելացնել  $\frac{1,86 \times 10,12}{90} = 0,209$   
վեճառ պիտի աւելացնել  $\frac{18,8}{90} = 0,209$   
վեճր. ալքօօլ, իսկ առաջուան հետ  $1,86 + 0,209 =$   
 $2,069$  վ: Կամ  $20\frac{5}{4}$  կվարտ ալքօօլ: Ենթադրենք այժմ  
որ պատրաստի գինի ունինք և նրա թնդութիւնը  $8\%$   
և ցանկանում ենք  $100$  վեճրայ այդ գինուց  $11\%$   
թնդացնել: Հաշումը ենք  $100 \times 11 - 100 \times 8 = 300\%$   
ալքօօլ, իսկ եթէ նա  $90\%$  է, այն ժամանակ  $\frac{300}{90} = 3,33$   
վեճր. պէտք է գինուն խառնել, բայց այդ  $3,33$  վեճրան  
էլ պէտք է  $11\%$  լինի, ուստի պէտք է աւելացնել  
 $\frac{3,33 \times 11}{90} = 0,407$ , ընդամեն  $3,33 + 0,407 = 3,737$   
վեճր. կամ  $37,4$  կվ. ալքօօլ: Մանրամասն հաշիւը տես-  
աղիւսակի մէջ զրքի վերջում:

Գլ. VII.  
ՍՊԻՐՏԱՅԻՆ ԵՓԸ ԿԱՄ ՇԻՐԱՅԻ ԵՓ ԳԱԼԸ:  
1. Եփի բերող խաըր:  
Խաղողի շիրան կամ քաղցուն երբ լցնում ենք  
չանը կամ այլ ամանները և թողնում  $10 - 18^0$  Ռ.  
Ճերմութեան մէջ, շատ չէ քաշում տեսնում ենք  
մի փրփուր պատեց ամանի երեսին, ներսը տաք է  
և մի բան պճպճում, զլթղթում է ու փոքրիկ  
պղպճակներ, փամփուշտներ են բարձրանում, տրաք-  
ում և նրանց տեղը նորերը բռնում: Այս երկոյթը  
առում է շիրայի եփ՝ գալ, որ մի քիմիական գործո-  
ղութիւն է, որը հետևանք է այն մանրադիտական  
սունկերի, որոնց սերմերը ծնունդ են առել խաղողի  
արտաքին մասում այն բարակ փոշու մէջ, որ ծած-  
կում է նրան: Այդ սերմերը խաղողի ջարդելուց՝ շի-  
րին խառնուելով՝ նրա համար խաըր կամ մերան են  
կազմում ու խմորում ամբողջ ամանը և եփ բերում:  
Այդ սերմերը կամ սպօրանները բազմանում են կըտ-  
րատուելով, այն է մայրական բճիճների վրայ նոր  
բշտկաձև աւելցուկներ են դուրս գալիս, որ արագու-  
թեամբ մայրական բճիճի մեծութեան համանելով  
պոկւում են նրանից և նոյն կարգով իրենք բազմանում:  
Եթէ հանգամանքները բարեյաջող են՝ այդ բազմանալը  
այնպիսի արագութեամբ է առաջ գնում, որ գեռ մայ-  
րական բճիճից չբաժանուած՝ արդէն նոր սերունդի  
վրայ նոյն աճելութիւնը առաջ է գնում և երբեմն  
ոչ թէ հատ հատ, այլ ամբողջ ճիւղաւրութիւններ  
կազմելով:

Խաշի այդ բճիճներից ամեն մինը շիրայի մէջ  
եփ է առաջ բերում, այսինքն խաղողի շաքարը լու-  
ծում դարձնում է ալքօօլ, դազ, գլխերին և այլ  
տարրեր։ Խաշի բճիճների տեսակները շատ են և ար-  
տաքին տեսքով էլ որոշում են մէկմէկուց, կան որ  
ձուածի են, կան որ լիմոնածե, կան, որ զարգանում  
են ներքի մասում, կան որ միջավայրում։ Շիրայի  
տաքութիւնը ևս մեծ նշանակութիւն ունի խաշի ֆեր-  
մենտների վրայ՝  $18^0$  R. ջերմութեան ժամանակ, երբ  
մեծ քանակութեամբ ածխաթթու դազ է առաջանում,  
դրանք փափուշտների ձեռվ բարձրանում են շիրայի  
մակերևոյթը, տրաքում ու իրենց միջի դազը ար-  
ձակում։ Այդ փափուշտները իրենց հետ բարձրացնում  
են և խաշը վերև, որ և վերեկի խաշ է ասում։

Յած աստիճանի տաքութեան ժամանակ խաշի  
տարրերը չեն փչանում, այլ նրանց գործունէութիւնը  
կանգ է առնում  $0^0$ -ից բարձր ժամանակ, միայն +  
 $6^0$  R. սկսում են կենդանութիւն ցոյց տալ։  $2^{\text{որ}}$   
խաշը կարող է +  $55^0$  R. ջերմութեան դիմանալ,  
բայց խոնաւ դրութեամբ +  $50^0$  R բոլորովին փչա-  
նում են։ Այս էլ ասենք, որ կան մի տեսակ ֆերմենտ-  
ներ, որ միմիայն երեսում են կատաղի եփի ժամանակ,  
դրանք շիրայի երեսը չեն դուրս գալիս և միջավայ-  
րումն են մնում և արտաքին ձեռվ էլ տարրերում են  
միւսներից և լիմոնի ձեռնին։

## 2. Ջերմութիւնից մարմինների լայնանալը:

Ամենքին յայտնի է, որ ջերմութիւնից բոլոր մար-  
մինները, լինին նրանք պինդ, հեղուկ թէ դազային,

լայնանում են և մեծանում է նրանց ծաւալը, իսկ  
յըրտութիւնից կամ ջերմութեան առաջիննը ցածա-  
նալուց՝ ծաւալն էլ փոքրանում է։ Մարմինների լայ-  
նանալու և սղմուելու չափը ճիշտ որոշելու համար  
ընդունած է +  $14^0$  R իրեկ հիմք, որից հեռանա-  
լուց պէտք է կարեռ ստուգութիւնը անել։

Գինեգործը, եթէ ուշ չգարձնէ դրամի եղանակին  
նա կարող է մի քանի սխաների մէջ ընկնել, այն է  
ամանները բոլորովին լցնելով՝ եփի ժամանակ հեղու-  
կը կտաքանայ և ծաւալը մեծանալով՝ ամանից կթա-  
փուփի, կամ եփը վերջանալուց յետոյ, երբ տակառները  
լցնելով շիրատնից գինետուն է փոխագրում, ուր տա-  
քութիւնը նուազ է քան շիրատանը, եթէ մի երկու  
շաբաթ անուշադիր թողնէ, տակառների գլուխը լրց-  
նելուց՝ կնկատէ որ նրանք բաւականին թերատ են և  
գինին ծաղկել է, բորբոս է կապել երեսին. պատճառը  
տաք գինու սղմուիլն է, որից նրա քանակը փոքրա-  
նում է։ Երբեմն պատճառում է գարնանը գինետան մէջ  
տակառները լցնում են, բերանները փակում, պնդաց-  
նում հեռու տեղ ուղարկելու, տակառները ոչ մի  
ծակ չունին, ոչ մի տեղից չեն ցցում, բայց երբ հա-  
նում են դուրսը, արեգակը տաքացնում է և տհա-  
սկում է տակառը ցցիլ, որ հետևանք է տակառը բու-  
լորովին լցնելուն և աւելի բարձր ջերմութեան են-  
թարկելուն։ Ահա թէ ինչու անհրաժեշտ է ջերմութեան  
և տաքութեան ուշ դարձնել թէ գինեշինութեան ըն-  
թացքում և թէ յետոյ։

Շիրայի եփի ժամանակ լաւ է շիրատան տաքու-  
թիւնը բարձրացնել  $12^0 - 16^0$  R, իսկ շիրայինը  $14^0 -$

20<sup>0</sup> R. Յելսի 40-ից ցած գրեթէ եփը կանգնում է և ջերմութեան բարձրանալուն հետ սաստկանում, 30<sup>0</sup>-ի ժամանակ թուղանում է 40<sup>0</sup>-ի ժամանակ կանգնում։ Նկատուած է և այս որ 30% շաքար ունեցող շիրան տուել է եփ գալով։

90 C. 17,29% ալքօօլ.

180 » 15,09 —

280 » 12,23 —

360 » 8,96 —

### 3. Օդը:

Օդը շրջապատում է ամբողջ երկրագնդին և առանց նրան ոչ մի կենդանութիւն չէ կարող լինել։ Հասկանալի է, որ նա շրջապատելով ամենը, ինչ որ կայ երկրի վրայ, այս կամ այն կերպ ներգործում է և բոլոր առարկաների վրայ, այսպէս էլ շիրայի կամ գինու։

Օդը—անգոյն գազ է, միայն մեծ ծաւալով մեզ թւում է, որ նա բաց կամ մուգ կապոյտ գոյն ունի։ Բոլորովին մաքուր դրութեամբ նա ոչ համ ունի և ոչ հոտ, առաձգական է, այսինքն ճնշման ժամանակ սղմուելու և ճնշումը վերանալուց՝ կրկին իր առաջուայ ծաւալը բռնելու յատկութիւն ունի։ Օդը 773 անգամ ջրից թեթև է։

Օդը բաղկացած է երկու գազերից—թթուածնից և ածխածնից։ Առաջինը անգոյն է, անհամ, ինքը չէ այրւում, բայց նպաստում է այրելուն և նա է որ նպաստում է շնչառութեան և առհասարակ կենդանութեան, առանց թթուածնի ոչ մի օրգանական կեանք

չէ կարող գոյութիւն ունենալ։ Ածխածնը ևս անգոյն և անհամ մի գազ է, ինքը չէ այրւում, չէ նպաստում այրուելուն և նրա մէջ անհնարին է ոչ մի կեանք։ Բացի այդ օդի մէջ կան և ջրային գոլորշիներ և ածխաթթու գազ և ասկա պատահական խառնուրդներ հանքային և երբեմն զանազան նեխուածքի արտադրութիւններ։

Գիսեգործին անհրաժեշտ է մաքուր օդը, որով հետեւ անմաքուր օդի մէջ աչքով անտեսանելի շատ մանրադիտական էակներ կան, որոնք շիրայի մէջ ընկնելով՝ կարող են գիսու հիւանդութեան պատճառ դառնալ։ Առանց օդի թթուածնի շիրան չէ կարող եփ գալ և այդ այն պայմանաւ միայն, երբ եփ բերող սերմեր կան, որոնց վրայ օդը ներգործելով՝ առաջ է բերում շիրայի եփ գալը, բայց մի անգամ որ եփը սկսուեցաւ, այսուհետեւ շիրան օդի մեծ հոսանքի կարիք չունի։

Օդը, ինչպէս առաջ էլ յիշած ենք, վնասակար ազդեցութիւն ունի և գիսու վրայ, երբ խաղողի այս ու այն մասը շիրայ ածելու ժամանակ թթուում է կամ քացախում։

4. Ածխաբբու գազը:

Ածխաթթու գազը անգոյն է և անտեսանելի, նա կծու հոտ ու թթու համ ունի, ինքը չէ այրւում, այս կծու հոտ ու թթու համ ունի, ինքը չէ այրւում, օդից  $1\frac{1}{2}$  անգամ ծանը է, նա ոչ օգնում է շնչառութեան և ոչ էլ այրելուն, մինչեւ անգամ մարդիկ խեղթեան և առաջ մէջ և վառ ճրագը նրա մէջ հանգչում դւում են նրա մէջ և վառ ճրագը նրա մէջ հոսանքում է, Սաստիկ ճնշման տակ այդ գազը հեղուկ է գառէ։

նում, մինչև անգամ պնդանում, բնութեան մէջ նա գտնում է կրի հետ խառն և կազմում է կրահողը:

Այդ գաղը օդից ծանր լինելով՝ փոխանակ բարձրանալու հոսում է ջրի պէս դէպի ցած ու խորտեղիր լցնելուց յետոյ կամաց կամաց բարձրանում:

Շիրայի եփի ժամանակ, երբ մեծ քանակութեամբ ածխաթթու է առաջ գալիս, նրա խեղողող յատկութիւնը այնպիսի պայմանների մէջ պէտք է դնել, որ վտանգ չպատահի. նախ շիրատունը գեանի մակերեսոյթից ցած չպիտի լինի, պատերի տակից գաղը գուրս գալու անցքեր պիտի ունենայ, օրը մի երկու անգամ շիրատան օդը պիտի փոխուի, եթէ շիրատունը խորընկած է 2—3 արշին գետնի երեսից. ամեն անգամ ներս մտնելուց պէտք է վառ ճրագ բոնել առջեկց, եթէ ճրագը վառ մնայ, վտանգ չկայ, եթէ հանգաւ պիտի առաջ չգնալ, մինչև որ ներսի օդը դուրս չհանուի այս ու այն միջոցաւ: Սոյնպէս վտանգաւոր է նոր քամած շիրայի մեծ ամանները (չաները) մտնելը ճաճան դարտկելու առանց օդի հոսանք մրտցնելու նրա մէջ կամ ներքեփ դանակը բանալու: Այն դէպում երբ անհնարին է դուռ պատուհան բանալով՝ օդը փոխել, որ կարելի լինի, մարդ մտնել, վերցնում են մի քանի պուդ չհանգած կիր են ձգում ներսը, որի հետ ածխաթթու գաղը միանում է և ոչնչանում: Բայց դարձեալ վառած ճրագով պիտի փորձել և ապա մտնել:

Այն դէպում, երբ մէկը գաղից բոնուի, նախ նրա շրջապատող օդը պիտի փոխել, որ ուրիշներին և փորձանք չբերէ, ապա դուրս հանել նրան բաց

օդի մէջ, շորերը հանել մէջքի վրայ պառկեցնել գլուխը քիչ բարձր, ցուրտ ջուր սրակել, փետուրով ունդները խտողել, և կամ թունդ հոտ ունեցող նիւթեր՝ ինչպէս նաշատրիայ սպիրտ) նիւթեր՝ ինչպէս նաշատրի ոգին է, (համարիայ սպիրտ) քթին մօտեցնել: Այդպիսի միջոցները բաւական են նրան կենդանացնելու, եթէ իսկոյն ձեռք առնուին:

### 5. Ալիօլը:

Մենք գիտենք, որ շիրայի եփ գալու ժամանակ շաքարը փոխում է ալքօօլի կամ սպիրտի, բայց ինչ է սպիրտը և նրա յատկութիւնը:

Առանց ջրի սպիրտը կամ ալքօօլը, անդոյն հեղուկ է, ջրից թեթև, ունի սուր այրող համ, ցուրտ դրութեամբ հոտը ախորժելի է, իսկ տաքացրած ժամանակը կծու:

Առանց ջրի ալքօօլ չկայ վաճառահանութեան մէջ, որովհետեւ նա օդից ջուր է ընդունում, 90—97° ժամանակ, որ հասարակօրէն ծախում է, նա ինչպէս թոյն ներգործում է մարդու օրգանիզմի վրայ: Ջրի հետ խառն նա արքեցնում է մարդուն և մկանունքները թուլացնում. արտաշնչութեան ժամանակ նա դուրս է գալիս թոքերի միջոցաւ, չափաւոր գործածութեան ժամանակ զրգում է ախորժակը և երբեմն ծառայում է ինչպէս դեղ, որովհետեւ փոքր չափաւ ընդունելուց, նա զրգում է մարմնակազմի կենսունակութիւնը և տաքացնում նրան:

Ալքօօլը հականեխական, այսինքն նեխելու սերմերը փչացնող հեղանիւթ է, նա և ծծող է, այսինքն ընդունակ է թէ օդից ջուր ընդունելու և թէ այն

ամեն առարկաներից, որ նրա մէջ են ձգում. դրա  
այդ յատկութեան շնորհիւն է, որ այլայլ բաներ են  
նրա մէջ պահում: Ալքօօլը չէ սառչում, դրա համար  
էլ նա փոխարինում է սնդիկին, որ սառչում է 32<sup>0</sup> R.  
ցլութեան ժամանակ: Ալքօօլի համեմատական կշիռն  
է 0,794 ցելսի 12<sup>0</sup>-ի ժամանակ, եռ է գալիս 78,41<sup>0</sup> g.  
ալքօօլը այրում է: Ալքօօլի և ջրի խառնուրդը մինչև  
60%/<sub>0</sub> ասւում է օղի, 60%/<sub>0</sub> ից վերը—սպիրտ, իսկ  
90%/<sub>0</sub> ից վերը—ալքօօլ, բայց գինու մէջ թէն նրա  
տոկուր անհամեմատ քիչ է, բայց ընդունուած է ալ-  
քօօլ ասել: Նա գինու ամենանշանաւոր մասն է և  
նրան դուրեկան համ տւողը և դիմացկուն շինողը:  
Ալքօօլը ինքը սննդաբար չէ, բայց գինու մէջ շնոր-  
հիւ մի քանի նիւթերի ներկայութեան՝ գինին սննդա-  
բար է ճանաչուած և նա խմելուց այնպէս չէ թու-  
լացնում մկանունքները, այլ հոգեկան ուրախ տրա-  
մադրութիւն է գրգռում: Գինու մէջ շիրայի եփ  
գալուց առաջացած ալքօօլը, որը կարող է ամենաշա-  
տը զարգանալ, այդ 18%/<sub>0</sub> է իր ծաւալով և 14,6  
կշով: Թոյլ սեղանի գինիները ունին 80%/<sub>0</sub>—110%/<sub>0</sub> սպիրտ,  
Աւելի թունդը 11—13 »  
Շատ թունդը 14—15 »  
Թունդ գեսերանի (քաղցր) գինիները 16—18 »  
Այդ նորմայից գուրս աւելի ալքօօլ ունեցող  
գինիները պէտք է համարել արհեստական խառնուրդ  
արուած: Գինու մէջ եղած սպիրտը տարիների ըն-  
թացքում պակասում է, կարելի է ասել, որ նա տա-  
րեկան կորցնում է 1/4—1/2 տոկուր:

#### 6. Քացախի թթուն:

Քացախը առաջանում է ալքօօլի թթուածինի հետ  
միաւորուելուց, երբ նա տարրալուծում է: Եթէ մենք  
ալքօօլին ջուր խառնենք և օղի ազատ ներգործու-  
թեան թողնենք, այն ժամանակ նա օղի թթուածինը  
իրեն մէջ ընդունելով՝ կքացախի, նոյնը կպատահի  
և գինու հետ, եթէ մենք ուշադիր մինինք: Գինու  
քացախելը առաջանում է մանրադիտական բոյսերից,  
կամ սունկերից, որոնք ինչպէս խաշը և բորբոսը  
արագութեամբ աճում են և առաջ բերում քացախի  
թթուն: Քացախի թթուն ամեն եփ եկող նիւթերի  
մէջ կայ, բայց նայելով մեր հոգատարութեան, մեր  
գարձրած ուշադրութեան կարող է քիչ կամ սննդան  
քանակութեամբ լինել կարող է և ընդհակառակն շատ  
լինել: Առաջին դէպքում, այն է՝ երբ քիչ է քացախի  
թթուն, գինուն վտանգ չէ սպառնում, բայց երբ մեծ  
քանակութեամբ է քացախի թթուն, կանգնում է գինու  
եփը և բարեյաջող տաքութեան ժամանակ, այն է 25<sup>0</sup>  
—35<sup>0</sup> g., գինին կարող է քացախի փոխուկի: Եթէ  
գինու մէջ քացախի թթուն աննշան է, նրան կարելի  
է ուղղել, բայց երբ զդալի է թթուութիւնը, դժուար է  
է ուղղել: Հետևաբար գինեգործը պէտք է ամենայն  
ուղղելը: Հետևաբար գինեգործը պէտք է ամենայն  
զգուշութիւն գործ գնէ, որ գինին քացախի թթուու-  
թիւն չստանայ:

գլ. VII.

ՃԵՐՄԱԿ ԳԻՆՈՒ ՊԱՏՐԱՍՏԵԼԸ.

1. ՃԵՐՄԱԿ ԳԻՆՈՒ ԽԱՂՈՂԻ ՔԱՂԸ ԿԱՐՃԵԼԻց մի տասն օր յետոյ են սկսում, եթէ ներում է եղանակը. ԽԱՂՈՂԸ ինչպէս հարկն է ջոկջոկում են, փտածները հեռացնում, ոտով կամ ջարդող—չանչահան անող մեքենայով ջարդում ու շիրան լցնում են չաները կամ տակառները և նայելով տեղական պահանջներին ու ճաշակին, նրա հետ խառնում ճաճան կամ թէ բոլորովին զատում և միմիայն շիրան եփ տալիս, որ աւելի քնքոյշ աւելի գուրեկան գինի է տալիս: Միայն այն դէպքում կարելի է մի օր կամ երկու օր շիրան ճաճայի վրայ թողնել, երբ խաղողը մուակատ կամ ուրիշ անուշահոտ տեսակից է:

Պէտք է աչքի առաջ ունենալ, որ ճերմակ խաղողներից շատերը մեղանում կովկասում մանաւանդ Դերենտում շատ քաղցր չեն, թոյլ գինի են տալիս և երբ ըստ տեղական սովորութեան երկար թողնում են ճաճայի վրայ, բաւականին տապութիւն ընդունելով իր մէջ, գինին օդի տակ ընկնելուց՝ շուռ է գալիս, սեանում: Իսկ գինեշինութեան այն ձեռ, որ խաղողը ջարդելուց յետոյ շիրան իր ճաճի հետ լցնում են կարասները և թողնում այնքան, որ եփը նստելուց յետոյ ճաճան էլ կարասի տակը նստէ, պարզի ու այնուհետեւ գինին տեղափոխեն, այդ ոչ միայն գինու բարելաւութեան չէ ճառայում, այլ շատ յաճախ նրա փչանալուն նպաստում:

ՃԵՐՄԱԿ ԽԱՂՈՂԻ շիրան, մզելուց յետոյ, լցնում առանց ճաճայի տակառները, պակասը երկու վեգրօ թերատ թողնելով, որ եփի ժամանակ չթափուի: Եփը գալուց տակառի վերի մասը բաց գեղնաւուն փրփու րով ծածկում է և շատ անգամ բերանից թափւում: Շատերը այդ փրփուրը թողնում են, որ դուրս ձգի, որովհետեւ հետը շատ անմաքրութիւններ էլ է դուրս ձգում, բայց առհասարակ չեն թողնում, որ հետն էլ շիրայ չփշանայ, մանաւանդ եթէ խաղողը առողջ է եղել և մաքրուել է: Շիրայի միջի կեղաստութիւնները մեղմ եփը սկսուելուց՝ հետզհետէ տակն են նստում, որ և մի քանի օրից գինին տեղափոխելուց, տակը նստած դիրտից մէջը մնում: Զաների մէջ ճերմակ շիրան եփ տալուց, երբ կեղաստութիւններ հաւաքուեն երեսին, կարելի է հեռացնել բեաթկիրով: Այն դէպքում երբ շիրան ճաճայի հետ է եփ գալիս, կաշու վնասակար ներգործութիւնը թուլացնելու համար պէտք է հետեւ, որ ճաճան շատ բացօդեայ չմնայ, որ նա շիրայի հետ խառնուի օրը մի քանի անգամ և եթէ փափախ է կապում գորշ գոյն առնում, այդ գորշացած մասը անհրաժեշտ է, որ հեռացնուի և թարմ մասը միայն մամուլի—պըեսի տակ ձգուի:

Յամենայն դէպս պէտք է աշխատել ճերմակ խաղողի շիրան երկու օրից աւել իր ճաճի վրայ չմնայ, որ շատ տապութիւն չառնէ նրանից և գոյնը չմզանայ, թէև մեզանում աւելի այդ է ընդունուած:

2. Կարմիր խաղողից ներմակ գինի պատրաստելը:  
Մի քանի տեսակ կարմիր խաղողներ շատ լաւ

ճերմակ գինի են տալիս, այն ինչ նրանցից ստացուած  
կարմիր գինին միջակ յատկութիւն ունի, որը պիտի  
վերագրել կաշու մէջ գտնւող այս ու այն նիւթի  
չափազանց աւելի լինելուն, որ և փչացնում է գի-  
նու համը: Ճերմակ գինի պատրաստելուց, քանի որ  
շիրան ճաճայի հետ եփ չէ գալիս, ազատ է մնում  
կաշու վնասակար ազդեցութիւնից, հետեւաբար և լաւ  
գինի տալիս: Աև խաղողից ճերմակ գինի պատրաս-  
տելու համար խաղողը իր չանչով ձգում են պրեսի  
տակ և շատ թեթև ճնշում, որից ստացւում է մի  
կարմրաւուն հեղուկ, որ յետոյ այդ դոյնը ևս կոր-  
չում է: Այն դէպքում երբ զգալի է դոյնի մգութիւ-  
չում, ծծմբով ծխում են, որը նպաստում է դոյնը չե-  
նը, զոքացնելուն կամ թէ գինին անցնում են գեշի ծառի  
զոքացնելուն կամ թէ գինին անցնում են գեշի ծառի  
ածուխից, որը մանրացրած պիտի լինի և լուացած:  
Տասը վեդրօյն պէտք է վերցնել  $1\frac{1}{2}$  փունտ ածուխ:  
Մնացած գործողութիւնը նոյնն է, ինչ որ ճերմակ  
գինուն:

Կարմիր խաղողից ստացած ճերմակ գինին աւելի  
ոգելից է ու թթուաշ, քանի նոյն խաղողից պատրաս-  
տած կարմիր գինին:

### 3. Ճերմակ գինու սպիրտային եփը:

Սպիրտային եփը այն գործողութիւնն է, որ շա-  
քարը լուծուելով՝ փոխարեւում է ալքօօլի, ածխաթթու  
գազի, գլիցերինի և այլ տարրերի:

Շիրան եփ գալուց առաջ պէտք է նայել, նախ  
որ ամանները բոլորովին մաքուր լինին և տախտակ-

ների արանքներում կասկածաւոր բան մնացած չլինի,  
որ խանուելով գինուն՝ չփչացնէ: Երկրորդ՝ շիրատանը  
ջերմութիւնը  $12^0$  R. պակաս պէտք է չլինի և ոչ էլ  
 $16^0$  R. բարձր: Երրորդ՝ օդը մաքուր պիտի լինի,  
շիրատան պատերն ու առաստաղը սրբած և եթէ  
հարկ կայ՝ ծծմբով ծխած: Չորրորդ՝ շիրան ամանները  
լցնելուց պէտք է  $12^0$ — $16^0$  R. ջերմութիւն ունե-  
նայ: Եթէ շիրան բաց ամաններում է եփ գալիս, նա  
օդի հետ հաղորդակցութիւն ունի, եթէ փակ աման-  
ներում է, պէտք է արհեստական կերպով հաղորդակ-  
ցութիւն առաջ բերել:

Եփի ժամանակ այնպիսի երևոյթներ են առաջ  
դալիս, որ կարող են յայտնուել կամ անկախ կերպով  
կամ գործիքների միջոցաւ:

1. Անկախ կերպով առաջ եկող երևոյթներն են՝  
ա. Եփի սկզբում հեղուկը սկսում է պղտորիլ:  
բ. Հեղուկի մէջ սկսում է շարժողութիւն:  
գ. Երբ շիրան ածխաթթու զագով կշտանում է,  
այդ զագը ձայն հանելով վեր է բարձրանում շիրի  
մակերևոյթը (արտաքին եփը):

դ. Ածխաթթու զագի պղպճակների հետ մակե-  
րևոյթն է բարձրանում խաշը, որից փրփուր է կազ-  
մում, երբեմն բաւականին հաստութեամբ:

ե. Հեղուկի մէջ նկատում է սպիրտի համը և  
հոտը:

զ. Արտաքին եփի սաստիկ շարժողութիւնը  
հետզհետէ թուլանում է և վերջը աննշմարելի դառ-  
նում:

է. Հեղուկը սկսում է պարզել, որը ցոյց է տալիս

թէ գլխաւոր եփը վերջացել է և շաքարի մեծ մասը  
լուծուել:

ը. Գլխաւոր եփի ժամանակ բոլոր շաքարը չէ  
լուծում, ուստի յաջող պայմաններում շարունակում  
է մեղմ եփը, որի ժամանակ մնացած շաքարը լուծ-  
ում է, որից և գինու մէջ ալքօօլի քանակը աւելա-  
նում:

2. Այս ու այն միջոցաւ յայտնուող երևոյթները.  
ա. Հեղուկի տաքութիւնը աւելի է բարձրանում,  
քան որ ունէր մինչև եփ գալը, երբեմն այդ տաքու-  
թիւնը աւելանում է նոյն իսկ բնակարանի տաքու-  
թիւնից և հեղուկի ծաւալը մեծանում է։ Այդ երևոյթ-  
ները մասնաւանդ նկատելի են, երբ շիրան մեծ աման-  
ների մէջ է, փոքր ամաններում ջերմութեան բար-  
ձրանալը այնքան զգալի չէ, որովհետև ամանը շուտով  
է սառում։

բ. Հեղուկի տաքութիւնը որոշ բարձրութեան  
հասնելուց յետոյ, եփի թուլանալով, հետզհետէ  
ցածրանում է, բայց աւելի դանդաղ, քան բարձրանա-  
լուց։

գ. Ջերմութեան աստիճանը նւազելուն հետ՝ հե-  
ղուկի ծաւալն էլ փոքրանում է։

դ. Հեղուկի համեմատական կշիռը ևս փոքրանում  
է շաքարի լուծուելով և ալքօօլի փոխուելով։

ե. Հեղուկի կշիռը ևս փոքրանում է ածխաթթու-  
զագի դուրս գալով։

զ. Եփ եկող շիրան հետզհետէ կորցնում է իր  
շաքարը և նրա փոխարէն առաջ գալիս ալքօօլ, ած-  
խաթթու զագ, (որի մեծ մասը չքանանում է), գլիցե-

քին, յակինթային թթու (янтарная кислота) և այլն։  
է. Թթւութիւնը պակասում է գինեքարի բաժա-  
նուելով։

Հստ Պաստեօրի կշռով 100 մաս խաղողի շաքարը  
տալիս է՝

Ալքօօլ	48,46%	կշռով
Սծխաթթու գաղ	46,67%	»
Գլիցերին	3,23%	»
Յակինթէ թթու	0,61%	»
Իւղային մասեր, ներկ տող նիւ- թեր, բուսական բամբակեր և այլն	1,03%	»
Ընդամեն 100,00%		

4. Շիրայի բամու տալը։

Մենք յիշեցինք, որ շիրայի եփ գալը առաջանում  
է մանրադիտական սունկերից, որոնք ընկնելով շա-  
քարային հեղուկի մէջ խաշմերան են առաջ բերում  
և առանց օդի էլ կարող են այսուհետև զարգանալ և  
շիրան եփ բերել։ Բայց շիրայի եփը աւելի ուժեղ  
կլինի և շաքարի լուծուելը աւելի կատարեալ, երբ  
շիրան կամ ճաճան քամու տանք, օդի ազդեցութեան  
ենթարկենք, այդ մասնաւանդ կարևոր է կարմիր գինու  
շիրայի վերաբերութեամբ, որից թէ գոյնն է մզանում  
և թէ եփը արագանում։

Շիրան օդի ազդեցութեան ենթարկելու համար  
մի քանի միջոցներ կան. կամ ամանի ծորակը բանում  
են և շիրայի մի մասը հանելով նորից ամանի մէջ  
թափում, կամ մարդ է մտնում չանի մէջ ոտով ու

ձեռով տրորում, ինչպէս սովորութիւն է Բուրգոնիայում և կամ առանձին խառնելու մեքենայ են դնում չանի մէջ ու նրա միջոցաւ օդի հոսանք անցնում ներսը:

### 5. Շիրայի տաքացնելը:

Շիրայի եփ գալու և նրանից ստացուած գինու յատկութեան վրայ մեծ ազգեցութիւն ունի ջերմութիւնը: Յած ջերմութեան մէջ եփը գանդաղ է դնում, որից կարող է գինին հիւանդանալ, շատ բարձր ջերմութեան ժամանակ քացախիլ. դրա համար էլ թէ ճերմակ և թէ կարմիր գինու ժամանակ շիրայի ջերմութիւնը պիտի 12<sup>0</sup>—16<sup>0</sup> R. պահպանել, որով թէ շուտ է գինին պարզուամ և թէ ազատ մնում այս ու այն հիւանդութիւններից, երբ եփը ձգձգուում է:

Բայց ամեն ժամանակ շիրան հարկաւոր տաքութիւնը չէ ունենում և ստիպուած ենք լինում արհետական միջոցների դիմել:

Այդ միջոցներն են՝

ա. Շիրատան տաքացնելը այն տեղերում, ուր այգեկութը ցըտերին է ընկնում: Դրա համար վառարան են դնում շիրատանը գուռ ու պատուհան ծածկում, միայն ածխաթթու գազը գուրս գալու ճանապարհ թողնում և որոշ աստիճանի ջերմութիւն պահում ներսը: Վառարանը տակառներից հեռի պիտի լինի կամ մօտ լինելուց՝ թաղիքով տակառը ծածկուած:

բ. Շիրայի մի մասի տաքացնելը, որի համար մաքուր պղնձէ աման են վերցնում և շիրայ ածելով

տաքացնում մեղմ կրակի վրայ և հասցնելով մինչև 35<sup>0</sup> R. թափում շիրայի վրայ և այդ կրկնում այնքան անգամ, մինչև ամանի շիրայի ընդհանուր տաքութիւնը համում է 12—14 աստիճանի:

գ. Օձապտոյ խողովակով շիրայի տաքացնելը, որի համար եթէ շիրայի ամանի բերանը բաց է, վերցնում են օձապտոյ խողովակի մի ծայրը մտցնում տաք ջրով լիքը մի ամանի մէջ, որը յարմարեցնում են մի բարձր տեղ, օձապտոյ մասը դնում չանի մէջ և խողովակի միւս ծայրը բերում ուրիշ ամանի վրայ. տաք ջուրը խողովակից անցնելով՝ տաքացնում է շրջապատող շիրան և ինքը հետզհետէ սառելով՝ թափում յատակի վրայ դրուած ամանի մէջ: Այդ գործողութիւնը, այն է տաք ջրի օձապտոյտից անցնելը շարունակում են այնքան ժամանակ, մինչև շիրայի մէջ դրած ջերմաչափը մեր ցանկացած ջերմութիւնն է ցոյց տալիս: Օձապտոյ խողովակը պէտք է շինուած լինի մաքուր անագից (ՕԼՈՅՕ):

Մենք ասացինք, որ գինու համար լաւ է, երբ շիրան բարձր ջերմութեան մէջ է եփ գալիս, բայց այդ ջերմութիւնը չպէտք է 20<sup>0</sup> R. անցնի, ուստի երբ նկատում են, որ այդ սահմանը անցնում է, կամ օձապտոյտի միջոցաւ ցուրտ ջուր անցկացնելով են ջերմութեան աստիճանը պակասեցնում կամ վեղրայով սառուց են կամ տալիս չանի մէջ և կամ ծուրակից բաց են թողում շիրան քամու տալիս, հովացնում:

6. Շիրայի փակ եփ տոլը:

Երբ որ շիրան ածում ենք տակառը կամ չանը  
և եփ տալիս ամանի բերանը բաց թողած, այն ժա-  
մանակ այդ ձեր ասւում է բաց եփ տալ, բայց երբ  
ամանի բերանը այնպէս ենք փակում, որ դրան օդը  
շիրայի հետ յարաբերութիւն չունի, իսկ շիրայի մէջ  
եղած գազը ազատ ճանապարհ ունի դուրս դալու,  
եփ տալու այդ ձեր ասւում է փակ եփ տոլ:

Շիրայի փակ եփ տալը այն առաւելութիւնն  
ունի, որ գինին ազատ է մնում օդի ազդեցութեան  
վտանգներից: Փակ եփ տալը լաւ է մանաւանդ անու-  
շահու խաղողների և կարմիր տեսակների համար:  
Փակ եփի համար գործ են ածում թրծած կաւից շի-  
նած առանձին խցաններ, որոնք դրուելով ամանի  
բերանին, այնպիսի յարմարութիւն ունին, որ նրանց  
միջից գազը անցնելով նախապէս մտնում է ջրի մէջ  
և յետոյ դուրս գալիս, այնինչ օդը ջրի միջից ճա-  
ռապարհ չունի շիրայի ամանը մտնելու, Քանի որ  
շիրան եփ է գալիս, ածխաթթու գազը ջրի միջից  
անցնելուց ձայներ է հանում, սաստիկ եփի ժամանակ  
խցանի ամանի ջուրը զիթզիթում է, հէնց որ կտրում  
է եփը, այլ ևս թէ ջրի վրայ չէ նշմարում գազի-  
դուրս գալը և թէ ականջ դնելով տակառի պատից,  
ներսից ոչ մի ձայն չէ լսում: Այնուհետև այդ խցանը  
պէտք է հասել, զինները լցնել և փակել եթէ գինին  
չեն տեղափոխում կամ յետ ածում դիրդից մաք-  
րելու:

Ռուբան ծամանակ է պէտք Շիրան եփ տոլ եւ  
նանի վրայ թողնել:

Այս հարցմունքը շատերն են տալիս մանաւանդ  
այն անձինք, որոնք շատ քիչ ծանօթութիւն ունին գի-  
նեգործութեան հետ: Շիրայի եփը ուշ կամ շուտ վեր-  
ջանալը կախուած է զանազան պայմաններից, բայց  
զիմաստորապէս շիրայի իրան քաղցրութիւնից, շրջա-  
պատող օդից և եփ տալու ամանի մեծութիւնից:  
Շիրայի եփը կարող է վերջանալ և երեք չորս օրում,  
կարող է տեել և շաբաթ ու ամիս: Որքան մի շիրայ  
շաբարով հարուստ է, նա կարող է երկար եփ գալ և  
ընդհակառակը. այնպէս էլ տաք բնակարանում, տաք  
օդի մէջ շուտ կարող է վերջանալ եփը, այն ինչ ցուլտ  
ժամանակը՝ երկար ձգձգուել. այսպէս էլ մեծ ամա-  
նում շուտ է եփ գալիս՝ քան փոքր ամաններում:  
Շիրայի հասունութիւնը ժամանակին իմանալը, նրան  
ճաճայից կամ գիրաից (եթէ սպիտակ գինի է) բա-  
ժանելը գինեգործութեան մէջ առաջին զգուշաւոր և  
ուշադրութեան արժանի խնդիրն է: Առհասարակ շի-  
րան հասած է համարւում, երբ ամանի մէջ պայծալու,  
գազ արձակելու ձայնը հազիւ է գալիս, երբ շիրան  
ցրտացել է, գոյնը մզացել (եթէ սև է), քաղցրութիւնը  
անցել՝ գինու համ առել և շիրաչափով քննելուց՝  
շիրայի շաքարը  $1 - \frac{1}{2} / 0\%$  մնացել:

Բայց մեզանում ամեն մի գինեգործական շրջան  
իր տեղական սովորութիւնը ունի, մի տեղ շատ երկար  
ժամանակ թողնում են ճաճի վրայ, որ իբր թէ գոյնը

կմդանայ կամ տտպութիւնը կաւելանայ, այնինչ  
փորձը ընդհակառակն է ցոյց տալիս, շատերն էլ երկար  
պահելով՝ կարծում են թնդութեան աստիճանը կբար-  
ձրանայ, որը նոյնպէս սխալ ենթադրութիւն է։ Մի  
տեղ սիրում են թեթև քաղցմաղց գինի ունենալ, շտա-  
պում են դեռ եփը չվերջացրած շիրան ճաճայից բա-  
ժանել, մի ուրիշ տեղ թողնում են այնքան, որ եփը  
կտրում է փափախը (ճաճան) փուլ գալիս ընկնում  
տակը և մէկ էլ պարզելուց յետոյ են ճաճայից բա-  
ժանում. մի տեղ աւանդական սովորութեամբ 7 օր  
են պահում ճաճի վրայ, մի ուրիշ տեղ 15 օրից ա-  
ռաջ գինին չեն քամում, այն ինչ եփը կարող է 7 օր  
առաջ վերջացած լինել։ Իսկ գինեշինութեան մէջ թէ  
վաղաժամ հանելը և թէ ամեն մի ուշացրած օրը  
ահագին նշանակութիւն ունի գինու ապագայի վերա-  
բերութեամբ։ Իբրև ընդհանուր օրէնք պէտք է ընդու-  
նել, որ մի անգամ երբ շիրայի սաստիկ եփը վեր-  
ջացել է, ինչքան էլ որ ճաճան մէջը չպահենք, Կրա-  
գոյնը չի մգանալ, մի միայն կոշտ ու տտիպ համեմը  
կաւելանան, որ ցանկալի չէ բոլորովին։ Այսպէս էլ  
երբ շաքարը փոխուել է ալքօօլի և շիրայի մէջ այլև  
քաղցրութիւն չէ մնացել, ինչքան էլ երկար չպահենք  
ճաճի վրայ, Կրա թնդութիւնը չի աւելանալ և գեռ  
կնուազի։

## ԳԼ. XI.

1. Կարմիր զինին, իր անունը արդէն ցոյց է տալիս մեզ, տարբերում է ճերմակ գինուց ոչ միայն իր գունով, այլև իր յատուկ համով, որին գրեթէ անկարելի է փոխարինել ճերմակ գինով, նրան գոյն տալով, որը իսկոյն կարելի է ճանաչել իր համից:

Հաւ կարմիր գինին մուգ կարմիր գոյն ունի,  
Ճերմակից աւելի պակաս թթվութիւն, միջակ թնդու-  
թիւն և տոտպութիւն։ Նրա մէջ եղած ալքօօլի և միւս  
տարբերի քանակը պիտի լինի մօտաւորապէս՝

$U_{IPOOJ}$   $10^0/0 - 11^0/0$

ՀԱՊԻԱՆՈՎՐ թթւութիւն 4,5%—5%

*Sանիս*  $1^0/00 - 2,5^0$

Պինդ մասեր 1,75% - 3%

Սակայն խաղողի տեսակը, նրա հասունութիւնը,  
պատրաստութեան էղանակը մեծ գեր է խաղում, որը  
չպէտք է անտես անել Խաղողը, ինչպէս ճերմակ գինու  
պատրաստութեան ժամանակ, պէտք է լաւ ճոկուած  
լինի, ամանները մաքուր առանց քացախի կամ բորբոսի  
հոտի: Ստացուած շիրան կաշուի հետ իր կորիզներով  
պէտք է լցնել չաները, եթէ չկան, մի կողմը բաց  
արած տակառները և թողնել որ եփ գայ: Շիրայի  
ջերմութիւնը պէտք է  $15^{\circ}$  R. պակաս չինի, ցած  
ջերմութեան ժամանակ, ինչպէս յիշել ենք, շիրան  
կարելի է տաքացնել առանց ճաճայի և խառնուրդ  
անել:

Ճաճան բաց ամանների մէջ եփ տւած ժամանակը պէտք է օրը 3—4 անգամ խառնուի, որ 8 ժամից աւել չմնայ օդի տակ, մանաւանդ տաք եղանակին, ապա թէ ոչ երկար մնալով՝ կարող է գինու մէջ քացախի թթւութիւն առաջանալ:

Զարդելուց կամ խառնելուց՝ չպէտք է կաշին շատ մանրանայ, որը թուլացնում է գինու գոյնը. պէտք է աչքի առաջ ունենալ, որ առանց չանչի եփ եկած շիրան աւելի ալքօօլ է ունենում քան չանչով եփ եկածը: Այսպէս էլ ճաճան գինու մէջ երկար թողնելուց՝ ոչ թէ նպաստում է նրա գոյնին, այլ ընդհակառակն թուլացնում է:

Չհասած ժուռ խաղողը գինուն թէ կոշտ և թէ աւելի թթու համ է տալիս, այն ինչ հասունութիւնը անցած խաղողը՝ թուլացնում է գոյնը:

Կարմիր գինի պատրաստելուց չանչերի ներկայութիւնը, եթէ նրանք հասած կարմրած են՝ դիւրացնում են եփ գալը և մասամբ նպաստում գոյնի աւելանալուն, այն ինչ կանաչ, չհասած ու մնասուած չանչերը թէ դառնացնում են և թէ կոշտացնում ու փշացնում գինին:

Գինու գոյնի վրայ զգալի կերպով ներգործում է և նոր տակառը, որը թուլացնում է, այսպէս էլ գինու գոյնը թոցնում է, երբ տակառը կրածրով լուացած է լինում: Լոյսը ևս թոցնում է կարմիր գինու գոյնը, երբ շիշերի մէջ լցրած՝ դնում ենք լուսի գիմաց:

2. Կարմիր գինի եփ տալու ամանեցը:

Կարմիր գինի շինելուց և այն մեծ քանակութեամբ անհրաժեշտ են եփ տալու համար մեծ ամաններ ունենալ կաղնի կամ շամի փայտից 200—400 վերո և աւելի բովանդակութեամբ: Այդ ամանները ներքեսում լայն են, վերևում քիչ նեղ, երկաթէ շրջապատճերով կամ գօտիներով: Դրանց շարում են շիրանը գետնից կէս արշին բարձրութեամբ քարէ կամ փայտէ պատռանդանի վրայ: Այդպիսի մեծ ամանների լաւութիւնը ոչ թէ նրա մէջն է, որ շատ շիրայ կարելի է ածել, որով փոքր ամանների չարչարանքից ու ծախքից ազատում է, այլ որ նրանց մէջ շիրան թէ շուտ է եփ գալիս և թէ միօրինակ մեծ քանակութեամբ գինի ստացւում, այն ինչ փոքր ամաններում, թէ դանդաղ է գնում եփը և թէ տարբեր տարբեր գոյնի ու համի գինի ստացւում:

Մեծ ամանների կամ չանների մէջ եփ տալու համար շիրան ճաճայով լցնում են այնքան, որ վերսկց մի արշինաչափ գատարկութիւն է մնում, որ եփի ժամանակ չմափուի և շիրայի մակերեսոյթի վրայ լցուած ածխաթթու գազը կարողանայ դրսի օդի աղեցութիւնից շիրան կամ ճաճան ազատ պահել:

3. Բաց բերանով չանների մէջ եփ տած շրան թէ շուտով է հասունանում, շուտով էլ պարզուում և թէ հեշտ է նրան հետևելը, խառնելը, քան փակ չանների մէջ եղած ժամանակը, միայն այս անյարմարութիւնն ունի, որ ճաճան շիրայի գլխին փափակ

կապելով, եթէ օրուայ մէջ մի քանի անգամ շիրին չխառնենք, թէ ճաճայի գոյնը և այս ու այն տարրերը չեն լուծուել հեղուկի մէջ և թէ օդի ազդեցութեան տակ ընկնելով՝ շիրայի եփը կտրուելուց կարող է թթուել ու գինուն խառնուելով՝ վշացնել։ Այդ անյարմարութեան առաջն առնելու համար չաների մէջ ծակոտկէն տախտակներից մի քանի միջնապատեր են դնում հորիզոնական ձևով կամ ուղղահայեաց, որով ճաճայի շիրայի հետ ունեցած հաղորդակցութիւնը կամ շփումը ընդարձակւում է ու լայնանում։ Այդ միջնապատը շինում են նոյնպէս կաղնի կամ շամի տախտակներից և պնդացնում են չանի մէջ նրանց վրայից երկու գօտի ձգելով, որոնց ծայրերը ընկնում են չանի վրայ հաստատուած երկու հաստ կտորների տակ։ Մի քանի միջնորմների փոխարէն կարելի է և մի միջնորմ շինել միայն վերեի մասում և որպէս զի ճաճան բարձրանալուց նրան վեր չմղի, այդ միջնապատի վրայից կոճեր են դնում և չանի վրայ հաստատուած պատուտակի միջոցաւ այնքան հրում, մինչեւ հեղուկը ծակերից անցնելով՝ դուքս է գալիս երեսը, իսկ ճաճան մնում է միջնապատի տակը։

Փոխանակ հորիզոնական ձևով միջնապատ շինելու, կարելի է և չանը երեք մասերի բաժանել և ծակոտկէն տախտակները ուղղահայեաց շարել, մէջը երկու միջնորմ շինելով, միջին բաժանմունքի մէջ թափելով շիրան, ճաճան մնում է այդտեղ, իսկ շիրան նրա աջ և ձախ բաժանմունքները մնում են երկու կողմից հաղորդակցութիւն ունենալով ճաճայի

հետ ներքեկց մինչև վեր, թէ լաւ է եփ գալիս և թէ նրա գոյնը առնում և թէ արգելք լինում օդի ազդեցութեան։ Այդ ձևի մի առաւելութիւն էլ նրա մէջն է, որ շիրան չանից հեշտ կարելի է հանել սիփոնի միջոցաւ, քանի որ երկու բաժանմունքներում շիրան ազատ է ճաճայից։

3. Փակ եփ տալու նամար նոյնպէս մի քանի ձևեր կան չաների. դրանք կամ լինում են տակառածե, կաղնի հաստ տախտակներից շինուած՝ ճակատից և վերևից գոնակներով, այնպէս որ մարդ կարող է մտնել մէջը և կամ նոյն չաներն են, ինչ որ բաց եփ տալու համար և գրեթէ նոյն կազմութեամբ, միայն այն տարբերութեամբ, որ չանը երկու ծածկ ունի, որոնցից վերևինը հերմետիքաբար ծածկում է է չանի երեսը առանձին պառատակով, իսկ երկրորդը՝ կէս արշինաչափ նրանից ներքեւ է գտնուում, ծակոտկէն է, շիրան ճաճայի հետ չանը ածելուց յետոյ դրում է երեսին և փայտերի միջոցաւ վերևի ծածկին դիմհար տւած՝ մնում է անշարժ, այնպէս որ այդ երկու ծածկերի մէջ տեղը դատարկութիւն է կաղմում, որը շիրայի եփի ժամանակ լցում է ածխաթթու գաղով և գաղահան խցանի միջոցաւ դուրս գալիս։ Եփը վերջանալուց՝ նոր գինին դատարկում են փայտէ ծորակի միջոցաւ, իսկ ճաճան հանելով՝ պըեսի տակ մղում և մղուածքը խառնում գինուն կամ առանձին պահում։

Փակ եփ տալու ձևի առաւելութիւնը նրա մէջն է, որ ճաճան շիրայի հետ խառն է, չէ չորանում։

ուրեմն և թթւութեան ենթարկում։ Այդ ձեզ մաս-  
նաւանդ լաւ է այն խաղողների համար, որ խակ են  
մնացել կամ այս ու այն պատահարներից զնասուած  
են, որ հեշտութեամբ են քայլախում։

Փակ ամաններում եփ տալու անյարմարութիւնը  
նրա մէջն է, որ դանդաղ է գնում եփը քան բացի մէջ,  
շիրան ճաճայի վրայ շատ մնում և թէ այդպիսի չա-  
սերի ծախքը մեծ է, որ շատերին մատչելի չէ։

Ասածներիցս հետեւում է, որ երկու ձևերն էլ ու-  
նին իրենց առաւելութիւններն ու պակասութիւննե-  
նին իրենց առաւելութիւններն ու պակասութիւննե-  
րը. այնտեղ՝ ուր կանոնաւոր խնամք ու հսկողու-  
թիւն չկայ շիրայի եփի ժամանակ, նախապատիւ է  
թիւն չկայ շիրայի եփի ժամանակ, նախապատիւ է  
փակ եփ տալը, իսկ այնտեղ՝ ուր հսկողութիւն կայ  
և խաղողը լաւ պայմաններում է հասել, լաւ է բաց  
ամաններում եփ տալը։

Մեծ տնտեսութեանց մէջ, ուր մի քանի տաս-  
նեակ հազար վեցրո հասարակ գինիներ են պատրաս-  
տում, փայտի փոխարէն գործ են ածում և քարից  
շինած և ցեմենտով ծեփած մեծ չաներ։

Այդպիսի չաները մանաւանդ լաւ են սպիրտի գոր-  
ծարաններում, որ թէ դիմացկուն են, թէ աւելի աժան են  
նստում, քան նոր բովանդակութեամբ փայտէ չաները։

#### 4. Գիլու հանելը եւ ճանայի մզելը:

Շիրայի հասունութիւնը որոշուեցաւ թէ չէ, ա-  
ռանց ուշացնելու պէտք է չանից հանել։ Դրա հա-  
մար նախ պիտի դիտել երեսի փափախը, որ բորբոս-  
նած կամ թթուած չլինի ու այդպիսի ճաճան հեռա-  
ցնել, ապա ամանի ներքեմց ծորակ դնել և մի դամ-

թիւղ կախել ծորակից, որ չանից թափուած հեղուկի  
մէջ եղած ճաճան մէջը հաւաքուի։ Չանից եկած գի-  
նին հետզձետէ տակառներն են լցնում և քիչ տեղ  
պահում, որ պրեսից եկած գինին գլուխը լցնեն։  
Երբ որ բոլոր հեղուկը քամւում է վերջանում, չանից  
ներսը մարդ է մտնում և վեղոներով ճաճան հանում  
ու ձեռքէ ձեռք տալով՝ տանում թափում են պրեսը  
և մզում։ Առաջին անգամ մզելուց եկած գինին, որ  
աւելի կոշտ է և գոյնը բաց՝ համեմատելով չանից  
ուղղակի եկածի հետ, տանում լցնում են տակառ-  
ների գլուխը, իսկ երկրորդ և երրորդ մզուածքը  
առանձին են վերցնում և չեն խառնում լաւ գինինե-  
րի հետ։ Մեզանում գինիկործական շրջաններում շատ  
այգետէրեր պրես չունենալով՝ ճաճայի մէջ բաւական  
հեղուկ են թողնում, որ և գործադրում են օղի քաշելու։

Չանից համուած ճաճան, որ մինչև նրա օղի  
քաշելը չփչանայ, թափում են մեծ ամանները պինդ  
սղմում, երեսին տախտակ կամ խոտ դնում և վրայից  
ցեխով ծեփում։ Այդ դրութեամբ ճաճան կարող է  
անվաս 2—3 ամիս մնալ, չփչանալ։ Օղի քաշելուց  
յետոյ ճաճան կարելի է ուտացնել տաւարին կամ խո-  
ղերին և կամ իբրև պարարտացուցիչ նիւթ վազերի  
տակը փռել։

#### Գլ. X.

ՈԳԵԼԻՑ (ՀԻԿԵՕՐՆԻ) ՔԱՂՅՐ ԵՒ ՏՈՒԱԿԱՆ (ԴԵ-  
ՍԵՐՏՆԻ) ԳԻՆԻՆԵՐԻ.

Բացի սովորական սեղանի գինիները վաճառա-  
հանութեան մէջ մենք տեսնում ենք բազմատեսակ

գինիներ այս ու այն երկրի կամ նրանց նմանեցրածը՝  
որոնք առողջ են ոգելից, քաղցր, տօնական կամ  
փրփրուն գինիներ։

ա. Ոգելից (լիկեօրնի) գինիներ առողջ են այն  
քաղցր գինիները, որոնք 15% ից բարձր ալքոօլ ունին,  
տօնական գինիները տարբերում են գրանցից իրենց  
աւելի բարձր թնդութեամբ և պակաս քաղցրութեամբ,  
կամ քաղցրութեան բացակայութեամբ։

Այդ գինիները պատրաստում են շատ ու քիչ  
թանձրացրած շիրայից, որի ջրային մասերի գոլոր-  
շիացնելով աւելանում է մէջը շաքարը և թթւութիւնը։  
Գոլորշիացման ժամանակ որչափ շաքարի աւելանալը  
ցանկալի է, այնչափ էլ թթւութեան աւելանալը աւե-  
լորդ, ուստի դրանից խուսափելու համար ընտրում  
են շատ քաղցր և քիչ թթւութիւն պարունակող խա-  
ղողներ։

Ոգելից և տօնական գինիներ պատրաստելու հա-  
մար պէտք է հետեւալիները ի նկատի ունենալ.

1. Որ այդ գինիները պէտք է բոլորովին առողջ  
ու հասուն խաղողից լինի, նախապէս հեռացրած մի-  
ջից խակերը, փտածը, չորացածը կամ չամիչ կը տ-  
րած։

2. Շիրան պէտք է մինչև եփ գալը հանդիսա-  
թողներ և իրեն տակը նստած կեղտից մաքրել։

3. Հեռացնել եփի ժամանակ հեղուկի երեսին  
բռնած խաշի կեղտոտութիւնները և թէ տակի դիրտը։

4. Որովհետև քաղցր և ոգելից գինիները դժուա-  
րութեամբ են զաւում ձուի սպիտակուցով, ժելատի-  
նով կամ ձկան սոսնձով, դրա համար ընտրել ֆիլտրը

և նրանով պարզեցնել։

Քաղցր և ոգելից գինիների մէջ եղած սպիրտի,  
շաքարի և այլ մասերի քանակը որոշելու համար մի  
հաստատուն նորմա չկայ, քանի որ այդ կախումն  
ունի պատրաստութեան այս ու այն եղանակից, բայց  
մի քանի յայտնի գինիների մէջ շաքարի և սպիրտի  
քանակը հետևեալն է.

Դինու անունը՝	սպիրտի տոկոսը. շաքարի տոկ.
Տոկայ	11,5 6—23,4
Մուսկուր	12,4
Իտալիոյ քաղցր գինիները	14—15 7—8
Մարսալան	19,8 5,2
Մալվուազին	15,3 8,4
Մագերը	18—20
Մալագան	12,6—18,3 10—14
Պորտվէյնը	19,3—22,5

բ. Ոգելից և քաղցր գինիներ պատրաստելու  
համար տաք կլիմայում, ուր աշունը չորային է, խա-  
ղողը թողնում են թփի վրայ մինչև կատարեալ հա-  
սունութիւնը, ապա քաղցր երկու շաբաթ առաջ ճթերի  
կոթը ոլորում են և թողնում որ թոմշկի, այն է ջը-  
րային մասերը գոլորշիանայ։ Այդ խաղողից աւելի  
հասածները ընտրում են բարձր տեսակի գինիների  
համար, մնացածը խառնում են սովորական գինինե-  
րին։ Ընտրած խաղողները չանչահան են անում ու  
ջարդում և շիրան առանց ճաճայի եփ տալիս, թըու-  
մշկած խաղողը թանձր հիւթ է տալիս, որը դանդաղ  
ու թոյլ կերպով եփում է, որից շատ անգամ արտա-

քին ուժեղ եփը ընդհատում է, շաքարը մնում առանց լուծուելու։ Արտաքին եփը կարող է յետոյ էլ կրկնուել, բայց այդ անկանոնութիւնը աննպաստ ներգործութիւն ունի գինու վրայ։ Այդ բանից խուսափելու համար պէտք է սկզբից աշխատել շիրան այնովինի պայմանների մէջ պահել, որ նրա ուժեղ եփը հէնց որչափ կարելի է շուտով առաջ գնայ, որը համարաւոք է շիրան կամ թէ շիրատունը տաքացնելով, երբ որոշ քանակութեամբ շաքարը լուծում է, մնացած քաղցրութիւնը պահելու համար յաճախակի տեղափոխում են գինին կամ ֆիլտրից անցնելու ժամանակ լցնելիք թեան կամ ֆիլտրից անցնելու ժամանակ են։ Այն գէպքում երբ տակառ ծծումբով ծխում են։ Այն գէպքում երբ գինին ալքօլով թոյլ է և յաճախակի տեղափոխութեան չէ գիմանում, նախապէս տանին են աւելացնում գինուն և ապա պաստերիզացիայի ենթարկում, որը ապա պաստերիզացիային ուղարկում է որոշ աստիճան շերմութեան տակայանում է գինին որոշ աստիճան շերմութեան տաքացնելու մէջ։ Տանին վերցնում են 10 վերոյին  $2\frac{1}{2}$  զօլոտնիկ. տանինը աւելացնելու նպատակն է գինու մէջ եղած սպիտակուցային մասերի չեղոքացնելը։ Տաքացնելուց յետոյ գինին ութ օր հանգիստ են թող։ Տաքացնելուց յետոյ գինին ութ օր հանգիստ են թող։ Տաքացնելում, ապա նրան աւելացնում այնքան ժելատին, որքան պէտք է, աւելացրած տանինը հանելու համար (այն է 0,7—1,5 մասին մի մաս ժելատին)։

գ. Ոգելից ու քաղցր գինիներ պատրաստելու համար այս ձեր ևս կայ. խաղողը փոխանակ երկար ժամանակ մինչև թոմշկելը վազի վրայ թողնելու, որ ժամանակ չէ կարելի աշնան ցրտերի ու խոնաւութեան պատճառաւ, քաղում են լաւ հասուն ժամանակութեան պատճառաւ,

նակը ու շուաք տեղ փոռում, պահում մինչև ջրային մասը գոլորշիանում է և խաղողը իր քաշը կիսով չափ կամ մի երրորդական մասը կորցնում։ Այդպիսի խաղողը ընտրում են, չափահան անում, ջարդում և 18 ժամ չափ մէջ թողնում, որ նրա չափազանց չոր հատիկները թրջոց գան, ապա հեղուկ մասը քամելով՝ թափում են տակառները, իսկ ճաճան մղում։ Այս ձեռվ պատրաստուած գինին բաւականին թթւութիւն է ունենում, ինչու որ երբ խաղողը ընականաբար վազի վրայ է հասունանում, շաքարի տւելանալուն հետ համբնթաց պակասում է և նրա թթւութիւնը, այն ինչ խաղողը քաղելուց յետոյ, երբ նրա մէջ ընդհատում է հասունանալը և շիրան թանձրանում է ջրային մասի գոլորշիացմամբ, այդ ժամանակ թէ շաքարի տոկոսն է աւելանում և թէ միաժամանակ թթւութեան։

դ. Բացի վերոյիշեալ միջոցները ոգելից կամ քաղցր գինի կարելի է պատրաստել և շիրայի մի մասի կրակի վրայ գոլորշիացնելով։ Դրա համար լաւ կլայեկած պղնձի մէջ են լցնում շիրան և նոյն քանակութեամբ շիրա էլ լցնում են մի փոքր տակառի մէջ և դնում պղնձի մօտ։ Պղնձը տաքացնում են այնքան, մինչև շիրան սկսում է եփիլ ու բարձրանալ, այդ ժամանակ մօտը դրած տակառի ցուրտ շիրայից հետզետէ նրա մէջն են լցնում և չեն թողնում եռալու, այլ հանդարտ գոլորշիանում է և այդ գործողութիւնը շարունակում է մինչև տակառի մէջ եղած շիրան ամբողջապէս սպառում է, ուրիշ խօսքով պղնձի մէջ եղած շիրայի կէսի գոլորշիացմամբ կիսով

չափ թանձրանում է։ Գոլորշիացնելու ժամանակ պէտք է խնամքով ամանի երեսի փրփուրը հեռացնել և հետեւ, որ հեղուկը չայրուի, խանձուածի համ ստանայ։ Դրա համար անդադար խառնում են և թաց սրբիչով ամանի պատերի ներսի բաց մասը սրբում։ Գոլորշիացումից յետոյ խառնելը շարունակում են, մինչև որ շիրան սառչում է և ապա թէ տանում են տակառը ածում։ Շիրան գոլորշիացնելու համար կան և յատուկ գործիքներ։

Ե. Ոգելից գինիները պատրաստելու մի ուրիշ եղանակն էլ շիրայի մէջ սպիրտ խառնելն է, որ կանգնեցնում է եփ գալը դեռ բոլոր շաքարը չլուծուած, որ և գինին քաղցր է մնում։ Սպիրտ խառնելը լինում է այսպէս, առաջ որոշում են գինու մէջ ունենալիք սպիրտի առանց լուծուելու պահուելիք շաքարի քանակը. օրինակ ցանկանում ենք ունենալ  $17^0/0$  սպիրտ և  $12^0/0$  շաքար։ Ապա որոշում են շիրայի մէջ եղած շաքարի  $0/0$ -ը՝ ասենք թէ  $28^0/0$ , որից  $12^0/0$ -ը պիտի առանց լուծուելու մնայ, իսկ  $16^0/0$  եփ գալով  $80/0$  սպիրտ կտայ, բայց որ մենք կամենում ենք  $17^0/0$  ունենալ, ուրեմն շիրային մենք պիտի այլ ևս 9 աստիճան սպիրտ աւելացնենք։ Սպիրտ խառնելը շիրային լինում է միանդամից կամ հետզհետէ, քանի որ նրա եփը շարունակում է։ Միանդամից մեծ քանակութեամբ սպիրտ աւելացնելը ճիշտ է մեզ նեղութիւնից ազատում է, բայց այն պակասութիւնն ունի, որ գինու շատ տարրեր է չեղոքացնում, տակը նստեցնում, այն ինչ փոքր առ փոքր աւելացնելուց այդ տարրերը գըեթէ չեն բաժանում, որ մեծ առա-

ւելութիւն ունի։ Որովհետեւ սպիրտ խփած գինիները սովորաբար քիչ տարրեր են բովանդակում իրենց մէջ, ուստի ընդունուած է կամ թումշկած խաղողից պատրաստել գինին կամ թանձրացրած հիւթից։ Սպիրտը այսպէս են աւելացնում. դատարկ տակառի մէջ ածում են սպիրտը և ապա գինին լցնում վրան։ Այս ձեռվ խառնուրդը թէ շուտ է լինում և թէ կատարեալ, քան թէ սպիրտն ենք լցնում գինու գլուխը։ Սպիրտը գինու գլխին ածելուց, պէտք է երկար ժամանակ խառնել, որ գինու հետ լաւ խառնուի, միանայ։

### Զ. Մուսկատ գինու պատրաստելը:

Մուսկատ գինու խաղողը պահում են վազի վրայ մինչև որ լաւ հասունանում է ու սկսում չմչկիլ—կնճռոտիլ, իսկ եթէ եղանակը չէ ներում, քաղում, փուռում են յարդի վրայ, մինչև որ թորշոմում է։ Այդ խաղողը լաւ ջոկջում են, չանչահան անում, ջարդում և ճաճայի հետ լցնում ամանը ու եփ տալիս։ Ճաճան պահում են 2—3 օր և շիրան հանելով առանձին ամանում թողնում մինչև եփի վերջանալը։ Մուսկատ խաղողից ստացուած գինին մի քանի տարիներ պահելով միայն նրա մէջ զարգանում է այն անուշահոտութիւնը, որ յատուկ է այդպիսի գինիներին։

Եթէ մուսկատ գինին ուղում ենք, որ քաղցր մնայ, այն ժամանակ եփ գալու տուածը պէտք է վերոյիշեալ ձևերով առնել և նրա մէջ շաքարի քանակը հասցնել  $12—13^0/0$ , իսկ ալքօօլին  $15^0/0$ -ից աւելի։

ԳԼ. XI.

ՃԵՐՄԱԿ ԳԻՒՌԻ ՅԵՏԱԾԵԼԸ ԿԱՄ ՏԵՂԱՓՈԽՈՒ-  
ԹԻՒՆԸ:

1. Շիրան եփ տալուց մենք գիտենք, որ նրա  
մէջ գանւող խաշի ներգործութեամբ շաքարային հե-  
ղուկը փոխուում է ալքօօլի, ածխաթթու գազի, դի-  
ցերինի և այլ տարրերի: Քանի որ եփը շաբունակ-  
ուում է, գազ կայ մէջը, շիրան խառնուած է, նրա  
մէջ եղած խաղողի այս ու այն մասերը՝ ինչպէս թե-  
փուկը, չանչը են մեծ մասամբ վերեսում են գտնը-  
ւում, բայց հենց որ շաքարը լուծուում է, գազը թու-  
լանում, շիրայի մէջ եղած բոլոր կեղտոտութիւններն  
ել խաշի ու ճաճայի հետ տակն են նստում: Այդ գիր-  
տի մէջ բաւականին օրգանական մարմիններ լինելով,  
եթէ երկար թողնենք, կարող են լուծուել, այս ու-  
այն հանգամանքի շնորհիւ կրկին գինուն խառնուել  
և նրան պղտորել, համը և գոյնը փոխել: Այն ինչ  
մեզանում շատերը այն կարծիքի են, որ գինին գիրտի  
վրայ երկար թողնելով՝ նա կսերտանայ, շուտ կհասնի  
մինչև անդամ կթնդանայ: Տարակոյս չկայ, որ մեր  
թոյլ գինիների սեսնալու գլխաւոր պատճառներից  
մին հէնց գիրտի վրայ երկար պահեն է, մանաւանդ  
այն տարիներին, երբ անձրեների կամ հիւանդութեանց  
պատճառաւ խաղողը շատ ու քիչ մշասուած է լինում  
և տակառի յատակում հաստ շերտով գիրտ նստում: Այդպիսի տարիներին արտաքին եփից յետոյ, իսկոյն

շիրան պիտի քամել, հեռացնել դիրտից և թողնել, որ  
մեղմ եփը ուրիշ ամանում շարունակուի:

2. Եփի վերջանալը և յետածելու ժամանակը

կախուած է մի շարք պայմաններից, այն է՝

ա. Շիրայի մեջ եղած շաքարի քանակից:

բ. Շիրատան և շիրայի ջերմութեան աստիճանից:

գ. Խաշ բերող կամ սնուցանող տարրերի քանա-

կից:

դ. Օգի ազգեցութիւնից:

ե. Քացախային թթւութեան և ծծմբային թթւու-  
թեան շատ կամ քիչ պարունակելուց, որոնց մասին  
առիթ ունեցանք խօսելու:

Յամենայն դէպս ձեմակ գինիների տառաջին յետ  
ածելը պէտք է մեծ եփից յետոյ կատարել կամ այն  
ժամանակ, երբ գեռ շիրայի մէջ եփ գայ, առանց  
սպասելու, որ գինին բոլորովին պարզուի:

Յաճախ պատահում է, որ գինիները երկար ժա-  
մանակ չեն պարզուում, չնայելով որ եփը վազուց է  
վերջացել կամ եփի նշան չէ երկում: Այդ պէտք է  
վերագրել նրան, որ քաղած խաղողը կամ երկար ժա-  
մանակ բաց օդի տակ է մնացել կամ ջարդելուց յե-  
տոյ նրա ճաճան ժամերով առանձնացած է եղել և  
քացախել է, կամ թէ չէ շիրան ցած տեմպերատուրայի  
մէջ եփ գալով, նրա մէջ քացախային եփ բերող տար-  
րերը աւելի շուտ են զարգացել և շաքարի հետ միա-  
նալով եփը կանգնեցը: Այդպիսի գինիները չեն  
պարզուում, ինչքան էլ երկար պահենք գիրտի վրայ,  
այլ աւելի ևս կթանձրանան ու ծորկան կդառնան:  
թէ ինչպէս կարելի է ուղղել այդպիսի գինիները այդ

մասին կիսուենք երբ զինու հիւանդութեանց մասին կինի մեր խօսքը։ Միայն զործնական ճանապարհը շուտով դիրախից հեռացնելն է և այն նախազգուշութիւնները, որ յիշատակել ենք առաջին գլուխներում։

Յ. Գինին յետ ածելուց մի քանի օր առաջ տակառները և բոլոր զործիքները, ինչպէս ձագառ, ծուրակ, վեղոր, պոմպ ու խողովակ յստակ ջրով լուսցած պիտի լինին և առանց համ ու հոտի։ Եթէ բանեցնելու տակառը մի քանի օր առաջ ծծումըով ծխած է եղել, բաւական է միայն ջրով ողողելը, որ ծծմբի հոտը գնայ։ Այդ նախապատրաստութիւնից յետոյ գինին տեղափոխում են նոր ամանը հետևեալ միջոցները գործ գնելով։

Այն շիրատունը, որ ունի ձեռքի տակ գինու պոմպ կամ սիֆոն, կամ թէ ուետինէ 1 դիւյմի խողովակ, նրա համար հեշտ է զինու տեղափոխութիւնը, որ թէ շուտ է կատարում, թէ զինին չի փչանում և թէ քիչ ծախք նստում։

Պոմպով գինու տեղափոխութեան համար կառւչուկի խողովակի մի ծայրը մտցնում են դատարկ տակառի մէջ, իսկ միւսը փոխանակ լիքը տակառը ձգելու, որ կարող է ցնցումից զինին պղտորել, որ նում են կիսատակառի կամ տաշտի (րաճա) մէջ, որը գրած է լինում լիքը տակառի մօտ։ Ապա վերցնում են 3—4 արշին երկայնութեամբ կառւչուկի մի պարզ 1 դիւյմանոց խողովակ, ծայրին մի բարակ փայտ են կապում  $\frac{1}{2}$ —1 վերշոկ խողովակից երկար թողած, մտցնում են լիքը տակառի մէջ, որ գնում, նստում է յստակին, իսկ միւս ծայրից ներսի օղը ծծում են

ու բաց թողում իսկոյն, որով ազատ հոսանք է բացւում հեղուկին և զինին գալով՝ թափւում է տաշտի մէջ. այդտեղից ահա պոմպի միջոցաւ մղում են և լցնում յատկացրած տակառը։ Այն գէպքում երբ պոմպ չկայ, կառւչուկի խողովակով կարելի է գինին տաշտի մէջ գրած վեգրօների մէջ թափել և ձեռքով տանել տակառը լցնել։

Պոմպի և կառւչուկի խողովակի բացակայութեան գէպքում, գինին յետ են ածում և ծորակի միջոցաւ։ Եթէ տակառը բոլորովին նոր է և նրա ճակատին նախապէս ծորակատեղ չէ շինուած ու հասարակ կաղնէ խցան մտցրած, վերցնում են ծակ բացող ձեռքի գործիքը (ռոլովորտъ) նրա բրչի ետևում պնդացնում են խցանը, և պտուտակը շուռ տալուց քանի որ աախտակը տաշտում է, խցանն էլ հետը ներս է մանում և չէ թողնում, որ գինին դուրս գայ։ Երբ ծորակատեղը պատրաստուեց, հանում են գործիքի պտուտակը, իսկ տաշող բրիչը մնում է խցանում, մինչև որ նորից խցանը մի երկու անգամ աջ ու ձախ փայտէ մուրճով խփելով, դուրս է գալիս, որի տեղը իսկոյն մտցնում են պղնձէ կամ փայտէ ծորակը, ապա թէ բաց են անում տակառի վերի բերանը և զինին քամում։ Ծորակը դնելուց առաջ պէտք է նայել, որ տակառը բոլորովին լիք լինի և բերանն էլ փակած, որ ծորակը դնելուց՝ օդի ճնշմամբ զինին դուրս չշպրտէ։

Այն գէպքում երբ դատարկելու տակառի տեղը այնպէս բարձր է, որ կարելի է ուղղակի դատարկ տակառը տակ գնել, կամ սիֆոնի միջոցաւ պիտի քամել կամ խողովակի և կամ ծորակ դնելով։ Վեր-

Հին դէպքում մի թիթեղեայ զլուխը ձագտածի խոշ զովակ գնելով ծորակի բերանին՝ միւս ծայրը կարեւի գնել ներքեր գրած տակառի մէջ և այդպէս գատարկել:

Դատարկելուց երբ մօտենում է վերջանալուն, յաճախ պիտի նայել, որ զինու պղտորութիւնները ևս չգտն, հէց որ նկատուեց, իսկոյն ծորակը պիտի փակել և միւս տակառը նոյն կարգով բանալ:

Յետ ածելուց թերատ մնացած տակառների զլուշ խը պէտք է պարզ զինի լցնել, եթէ եփ ունի զինին, խցանը թեթև գնել բերանին, եթէ եփ չունի, բոլորովին փակել իսկ գատարկուած տակառների զիրար հաւաքել մէկի մէջ և թողնել որ պարզի: Դիբուց նոր և հասարակ զինին նեռացնելու սովորական ձևերը գրանք են, բայց երբ զինին հին է և ընտիր, այն ժամանակ աշխատում են, որչափ կարելի է զինին քիչ հաղորդակցութիւն ունենայ օդի հետ: Այդ նպատակի համար ծառայում է սիֆոնը, փուքուր և կատարելագործուած պոմպերը, որ անհրաժեշտ են մեծ զինեաներում և որոնց մասին կիսունք իր տեղը:

Գինիների առաջնու տեղափոխութեան ժամանակ բացի ամանեղինի մաքրութիւնը, պէտք է նոզալ նաև զինեան կամ շիրատան մաքրութեան համար և տակառների կանոնաւոր շարելուն:

Ամեն տակառ իր թւահամարը պիտի ունենայ և զինու այս կամ այն տեսակին որոշ տեղ տւած և առանձին մատեան մտցրած թէ քաղի օրը, թէ շիրայի քաղցրութիւնը, թէ եփի վերջանալը և թէ առաջի քաղցրութիւնը, որի մէջ պիտի զինին տեղափոխեն, իսկ եթէ շիշի մէջ զինին պարզուել է, ծիել պէտք չէ:

Նետեել նրանց կանոնաւոր զարգացմանը և այս ու այն պակասութեանց, որ հետզինեաէ կարող են երեան գալ:

4. Կարմիր զինիների յետ ածելու ձեզ և եղանակը բոլորովին նոյն է, ինչ որ ճերմակներին, միայն կան մանր բաներ, որոնց պէտք է ուշագրութեան առնել:

Կարմիր զինու հետ, չանից քամելուց, թէ շատ քիչ զիրտ է անցնում, բայց այդ քիչն ել կարող է զինու վրայ ներգոծել, մանաւանդ նրա զոյնի: Դիբուց զոյնը թուլացնելու յատկութիւն ունի և այդ կարելի է իսկոյն նկատել, եթէ շիշ կամ ամանը շարժենք և նրա տակը նստած զիրտը խառնուի զինուն:

Կարմիր զինին առհասարակ յետ են ածում, երբ բոլորովին պարզուած է լինում: Յած առքութեան ժամանակ այն է +3—4<sup>0</sup> R. չէ կարելի զինին տեղափոխել, ցրտութիւնը ևս կարում է զինու զոյնը, ուստի զինեան տաքութիւնը +8<sup>0</sup> R. պակաս չպիտի լինի:

Կարմիր զինին տեղափոխելուց՝ երբեմն պատահում է, որ զոյնը փոխում է, ցիկրու դոյն սահնում: Այդ դէպքում նախօրօք կէս շիշ զինի են վերցնում, մի քանի անգամ թափահարում, որ միջի գաղը դուրս գայ, ապա խցանը թեթև դնելով՝ թողնում են մինչև միւս օրը. Երբ նկատում են, որ շիշի զինին լացած է ու չէ պարզած, այն ժամանակ ծիում են այն տակառը, որի մէջ պիտի զինին տեղափոխեն, իսկ եթէ շիշի մէջ զինին պարզուել է, ծիել պէտք չէ:

Պէտք է նայել, որ թէ սկզբում ծորակից եկող զինին ու թէ վերջում՝ պարզ լինի, պղտորելուց պիտի գաղարեցնել և պղտոր զինին առանձին աման լցնել:

Ծ Ծ Ո Ւ Մ Բ Հ :

1. Ծծումբի գործածութիւնը գինեգործութեան  
մէջ շատ վաղուց է. նա վառուելով ծծմբային գազ  
է առաջացնում և գինու մէջ առաջ եկող և նրան  
փչացնող բոլոր մնկային մարմինները սպանում, խեղ-  
դում: Ծծումբը ինքը պարզ մարմինն է, այսինքն նրան  
անկարելի է տարրալուծել և ուրիշ մարմիններ ստա-  
նալ. նա բնութեան մէջ լինում է հանքերում ազատ  
կամ խառն ուրիշ մետաղների հետ, որ հանքագործա-  
րաններում հալելով՝ մաքրում են և գանաղան նալա-  
տակների համար գործադրում:

Գինու համար ընտրելի է մաքուր բաց դեղնա-  
գոյն ծծումբը: Նա հալում է 89,20 R. ջերմութեան  
ժամանակ, իսկ 120<sup>0</sup> R. ջերմութեան ժամանակ թան-  
ձրանում ու մզանում է գոյնը, իսկ 208<sup>0</sup> R. այնպէս  
է թանձրանում, որ կաչում է ամանից և շուռ տա-  
լուց անդամ չէ թափում. այդ ժամանակ նա բռնկ-  
տում, բոցավառում է:

Ծծմբային գազը ինքը անգոյն է, կծու ու վատ  
հոտ ունի, չնչառութեան ժամանակ սաստիկ հաղեց-  
նում է և ինչպէս ասացինք, սպանում է բոլոր բու-  
սական և մնկային մարմինները:

2. Ծծումբի պատրաստելը: Գինեգործութեան  
մէջ ծծումբը գործադրում են հետեւել կերպով, վա-  
ճառահանութեան մէջ եղող ծծմբի կտորները նախ  
հողէ կամ չուգունէ ամանում մեղմ կրակի վրայ հա-

լեցնում են, առանց թողնելու, որ եփ գայ և նրա  
մէջը թաթախում 3'' (դիւյմ) լայն և 18'' երկայն  
կտրուած հասարակ թղթեր, որոնց վրայ բարակ շեր-  
տով ծածկում է ծծումբը և հանելով շարոսում մինչև  
ստում է: Այդ թղթի կտորները քաշում են 1,3—  
 $1\frac{1}{2}$  գոլոսնիկ:

Առաջներում թղթի փոխարէն գործ էին ածում  
և բարակ կտաւներ, որոնց վրայ չափազանց ծծումբը  
էր մնում, որ այրուելուց՝ կաթում էր տակառի մէջ  
և լակ ձուի հոտ տալիս գինուն: Ծծումբը հալելուց՝  
պէտք է աշխատել, որ նրա մէջ մի փոքր մասը ան-  
հալ մնայ և հէնց այդ ժամանակ թուղթը մի փայ-  
տիկի միջոցաւ թաթախել մէջը և հանել: Եթե թող-  
նենք ծծումբը շատ հալ ընկնի, այդ ժամանակ նա  
կթանձրանայ և գոյնն էլ կփոխի: Պէտք է զգուշա-  
նալ, որ ծծումբը հալելուց ամանից չթափուի, որ կա-  
րող է բռնկուիլ: Ծծմբաթղթի ծայրերին առհասարակ  
աւելի է ծծումբ հաւաքւում, որ պէտք մկրատով այդ  
հաստ մասը հեռացնել: Այն գէպքում եթե հալոցի  
ժամանակ ծծումբը բռնկի, պէտք է փոքր ինչ խո-  
նաւ (և ոչ թաց) շորով ծածկել ամանը և նա կհանդի:

3. Ծծմբաթղթի գործադրելու եղանակը:

Եթե ծծումբը գործադրում է դատարկ տակառ-  
ները բորբոսից ազատ պահելու համար, նախապէս  
ամանը լաւ լուսանում են, ճրագով նայում ներսը և  
տմեն 10 վերը յին վերցնում 8 քառակուսի դիւյմ  
ծծմբաթղթի, այն է մօտ  $1\frac{1}{2}$  գոլոսնիկ մի տակա-  
ռին, անցնում լարի և մի ծայրը վառելով կախում

տակառի ներսը, մինչև վառւում, վերջանում է և ապա  
իսկոյն փակում են խցանով բերանը և թողնում:  
Ամիսը մի անգամ դատարկ տակառները այդ ձևով  
պիտի ծխել, որ նա ազատ մնայ վատ հոտ բռներուց  
կամ բորբոսելուց:

4. Ծծումբի այս ու այն կերպ գործադրութիւնը:

Երբ տակառը ծխում են շիրայ կամ զինի  
ածելու համար, այդ ժամանակ ծխելուց տակառի  
բերանը բաց են թողնում, որով ծծումբի մէջ եղած  
մկնդեղը, զուրս է գալիս և ցնդում, իսկ ծծմբային  
գազը ծանր լինելով, մնում տակառում: Երբեմն պա-  
տահում է, որ զինին դատարկելուց յետոյ, տակառը  
երկար ժամանակ մնալով՝ ծծմբաթուղթը մէջը չէ  
այրուում. դրա համար փուրքսի միջոցաւ նախ հեռացը-  
նում են միջի գազը, որ վառուելուն արգելք է լի-  
նում և օդի հոսանք մացնելով՝ նպաստում այրուելուն:  
Փոխանակ լարի անցնելու ծծմբաթուղթը կարելի է  
և զնել ծխիչ ամանի մէջ, որ ոչ այլինչ է, եթէ ոչ  
մի լարի ծայրի ամբացրած երկաթէ կամ հողէ աման,  
որի մէջ են դնում ծծումբը, իսկ միւս ծայրը անց է

Շիրայի համար, որպէս զի նրա եփը կանգնի  
առժամանակ, ամեն 10 վեդրօյի համար վերցնում  
են  $\frac{1}{4}$  ծծմբաթուղթ, վառում տակառի մէջ և ապա  
10 վեդրօ շիրայ ամանը լցնելով՝ խցանով ծածկում  
և տակառը հարում, յետոյ վառում են միւս  $\frac{1}{4}$  ժամ-  
բաթուղթը, զիսին դարձեալ շիրայ լցնում և նոյն  
ձևով հարում, մինչև գալիս երկու վեդրօ է մնում

լցնելու. առաջ բերանը փակում են դագահան խցանով  
և թողնում:

Փաած խաղողների շիրան եփ տալուց առաջ լաւ  
է ամեն 10 վեդրին 2 քառակ, զիւյմ ծծմբաթուղթ  
ծխել և քիչ պարզելուց, տեղափոխել:

Ճերմակ զինիների համար ծխելը լինում է  
սովորական ձևով, թեթև կամ ուժեղ: Սովորականի  
համար վերցնում են ամեն 10 վեդրօ բովանդակու-  
թեան 4 քառակ, զիւյմ ծծմբաթուղթ և դատարկ  
տակառի մէջ վառելուց յետոյ, զինով լցնում են: Թե-  
թև ծխելու համար վերցնում են ամեն 10 վեդրօյին  
 $\frac{25}{4}$  քառակուսի զիւյմ, իսկ ուժեղ ծխելու համար  
վառում են ամեն 10 վեդրօյին 4 քառ. զիւյմ ծծմ-  
բաթուղթ, ամանի կէսը լցնում են, կրկին 4 ք. զ.  
վառում և բոլորովին լցնում տակառը: Կարմիր զինի-  
ները ծխելուց, վերցնում են՝ ամեն 10 վեդրօյին 1—  
 $\frac{1}{2}$  քառ. զիւյմ ծծմբաթուղթ:

Այն գէպքում երբ ծծմբաթուղթը լայն է և տա-  
կառի բերանից չէ անցնում, կարելի է միջից ծալել  
և այնպէս բանեցնել:

Գինետունը ծխելու համար ծծումբը հալում են,  
մէջը թղթի կտորտանք թափում և հանելով՝ չորացը-  
նում: Ծխելու համար ամեն քառակուսի արշին տա-  
րածութեան համար վերցնում են  $\frac{1}{2}$  փնտ. ծծումբ և  
զինետան զանազան մասերում վառում, զուռ ու  
պատուհան պնդացրած՝ զուրս գալիս:

ԴԱՌՆԻԾԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ.

1. Ի՞նչ է դառնինը:

Դառնիճը (տանին, tanin de cachou) ասուա՞  
ենք այն տտպահամ նիւթին, որը գտնուում է մի քանչէ  
բոյսերի, ծառերի և պտուղների կեղեի և սերմի մէջ,  
այսպէս մենք պատահում ենք նրան ընկուզի գաղա-  
զի, նուան տտիպի, կաղնի փայտի և խաղողի սերմի  
մէջ, որոնք բերան առնելուց՝ հաւաքում են ու կոշ-  
տացնում:

Դառնիճի ներկայութիւնը դինու մէջ անհրաժեշտա-  
է, նա զինու էական մասերից մէկն է և առանց նրան-  
ենթակայ է զանազան հիւանդութեանց, ուստի բնա-  
կանապէս դառնիճ քիչ ունեցող զինիներին և նրանց,  
որոնք զտելու ժամանակ կորցնում են դառնիճի մէ-  
մասը և թուլանում, անհրաժեշտ է դառնիճ խառնելը:

Դառնիճը վաճառահանութեան մէջ մի մոխրագոյն  
անհոտ ու դառն փոշի է, որ ջրի կամ զինու մէջ  
լուծում է: Դառնիճի գործածելը շատ հասարակ  
կերպով է կատարում. այդ փոշուց վերցնում են  
ամեն մի 50 վեդրանոց տակառի համար 4—10 զօ-  
լոտնիկ, երկու բաժակ ջրի կամ զինու մէջ հարում,  
մինչեւ որ լուծում է, թափում են տակառը, խառնում  
և պնդացնում:

Ըստիր զինիների համար դառնիճը լուծում են  
նախապէս սպիրտի մէջ, որ աւելի լաւ է ներգործում  
և ապա խառնում:

2. Հասարակ դառնին պատրաստելը:

Բացի փոշեաեսակ դառնիճը, որ աւելի մաքուր  
է և պատրաստ գործադրելու, կարելի է խաղողի սեր-  
մից և պատրաստել: Դրա համար սպիտակ խաղողից  
զինի շինելու ժամանակ, երբ ճաման կորիզի հետ  
առանձնացնում են և շիրայի հետ եփ չեն տալիս,  
կարելի է այդ կորիզները հաւաքել, ցուրտ ջրում  
լուանալ և փոելով չորացնել ու պահել: Երբ ուզում  
են գործածել, տաք ջրում թրջոց են դնում, թեթև  
եփ տալիս և ապա ֆիլտրից անցնելով՝ ջուրը վեր  
առնում և խառնում տակառին. երբ հարկաւորութիւն  
չկայ այդ հեղուկը իսկոյն բանեցնելու, վրան լաւ  
սպիրտ են ածում որ չփշանայի ու պահում հով տեղ:

ՇԻՐԱԾՈՒԻՆ, ԳԻՆԵՏՈՒԻՆ, ՇԻՇԱԾՈՒԻՆ ԵՒ ՆՐԱՆՑ  
ԿԱՐԳՆ ՈՒ ՍԱՐՔԸ:

Գինի շինելու և զինին պահել ու զարգացնելու  
համար պէտք է յարմար շինութիւն ունենալ, որի  
մեծութիւնը և կազմը կտիւուած է թէ նիւթական  
միջոցներից և թէ այգու արդիւնաբերութեան քանա-  
կից: Յամենայն դէպս ամեն մեծ այգետէր, որ մի  
քանի հաղար վեդրո զինի է պատրաստում, պիտի  
ունենայ շիրատուն, զինետուն և եթէ շիշերով առու-  
տուր ունի և շիշատուն: Բացի այդ բաժանմունքները  
նա պիտի ունենայ և տակառի գործարան կամ տա-  
կառներ գարսելու տեղ, սարայ:

1. Շիրատունը, որտեղ եփ են տալիս թէ ճերմակ և թէ կարմիր խաղողի շիրան, պէտք է շինած լինի գետնի երեսին, գինետան կից կամ գինետան վերեփ յարկում, որպէս զի հեշտ լինի գինին խողովակով ներքե փոխադրելը։ Շիրատունը երկու բաժանմունք պիտի ունենայ, միջնորմով մէկմէկուց բաժանուած, առաջին մասում տեղաւորում են մամուլը, ջարդող մեքենան այս ու այն գործիքները, խաղողի տաշտերը, իսկ երկրորդ մասում շարում են քարէ կամ փայտէ պատուանդանների վրայ չանելը կամ շիրայ եփ տալու տակառները։ Շիրատանը յարմարեցնում են մի անկիւնում և շիրայ տաքացնելու պղինձն ու վառարանը և որոշ տաքութիւն պահպանում, այն է 12—16<sup>0</sup> R. շիրայ եփ գալու ամբողջ ընթացքում։

Շիրատան առաջին մասը—պիտի լոյս լինի, մաքուր, աղիւսի, ասֆալտի կամ տախտակի յատակով և պատերը ճերմակացրած։ Որչափ հնարաւոր է նա պատերը ճերմակացրած։ Որչափ հնարաւոր է նա պիտի լինի, որ չդժուարացնէ անց ու ընդարձակ պիտի լինի, որ չդժուարացնէ անց ու ունենայ և կշիռ, խաղողի կիսատակառներ կամ տաշտեր գնելու տեղ։ Շիրատան այդ մասումն է, որ եկած խաղողը ջոկջում են և ապա ջարդելուց յետոյ փոխադրում շիրան երկրորդ բաժանմունքը։

Շիրատունը, պատերի ներքե մասում, գետնի հաւասարութեամբ ամեն 5—6 արշին հեռաւորութեան վրայ, ածխաթթու դազը դուրս գալու 3 վերամագծով պիտի անցքեր ունենայ և պատերի միջ երդիկներ։ Շիրատունը կարելի շինել թրծած կամ

թէ հում աղիւսից, կարելի է շինել և փայտից, միայն երեսը սւաղած, կամ գարմանացեխով ծեփած, կարելի է շինել և քարաշէն։ Նրա բարձրութիւնը գետնից մինչև առաստաղը պիտի լինի  $4\frac{1}{2}$ —6 արշին։

2. Գինետունը մեծ նշանակութիւն ունի և կարելի է ասել նա է այն կրթարանը, որտեղ կարող է զարգանալ կամ փշանալ գինին, ուստի որչափ հնարաւոր է նրա շէնքը համալատասխան պիտի լինի այն պահանջներին, որը գիտութիւնը որոշել ու սահմանել է նրա համար։ Գինետան շինութիւնը կախուած է իր տեղի և գետնի կազմութիւնից, լաւ գինետունը այն է՝ որ շինուած է ժայռոտ տեղ, գետնի տակ և չորս կողմից բնական կամ ածովի հողով պատսպարուած է։ Փիրուն հողի մէջ շինածը, օդի և լոյսի ազգեցութեան տակ գտնուածը անյարմար է իբրև գինետուն ծառայելու։

Գինետան խորութիւնը կախումն ունի կլիմայից ու գետնի կազմութիւնից։ Թեթև աւազային հողում նա խոր պիտի լինի, ծանր—կաւային հողում երես, բայց յամենայն գէպս նա պէտք է միօրինակ ջերմութիւն պահպանէ, ոչ շատ ցուրտ լինի և ոչ շատ տաք—մօտաւորապէս ամառ ձմեռ նա պիտի ունենայ 8—10<sup>0</sup> R. ջերմութիւն, որը կարելի է ունենալ 6—10 արշին խորութեան մէջ, երբ ջերմաչափը մեծ ել և էջներ չէ անում։ Գինետան տաքութիւնը նոր գինիների համար 14<sup>0</sup> R. ջերմութիւնը այնքան վնասակարչէ, որչափ ցած ջերմութիւնը։ Առաջին դէպքում գինին ճիշտ է շատ է պակասում և ստէպ պլխները լցնել

պահանջում, բայց շուտով է զարդանում, այն ինչ  
7<sup>0</sup> R. ջերմութեան ժամանակ և դրանից ցած՝ նոր  
գինին չէ հասունանում և կարմիրը մինչև անզամ  
փոխում է իր գոյնը, իսկ պարզ գինին երբ հանում  
ենք աւելի տաք տեղ, գոյնը փոխում է, իրեն մէջ  
զեռ շաքար մնացած լինելով, որ տաք տեղում սկը-  
սում է եփ գալ: Բայց երբեմն պատահում է, որ գի-  
նետունը չէ կարելի շատ մեծ խորութեան մէջ շինել,  
մի 3—4 արշին խորութեան մէջ հանդիպում ենք  
ստորերկրեայ ջրի, այդ գէպքում ջրին կէս արշին  
չհասած, պէտք է կանգնել և գինետան յատակը ցե-  
մենտով ծածկել, որ մէջը խոնաւութիւն չմտնի:

Գինետան մեծութիւնը, նրա լայնութիւնն ու  
բարձրութիւնը կախուած է նրա մէջ բովանդակող  
ամանների քանակից և այդ ամանների մեծութիւնից:  
Այսպէս եթէ մենք ունենք 500 կամ աւելի վեդրա-  
նոց ամաններ, կարծիք չկայ, որ դրանց համապատաս-  
խան թէ բարձրութիւն և թէ լայնութիւն պիտի ու-  
նենայ գինետունը, այն ինչ 50, 60 կամ 100 վեդրա-  
նոց ամանների համար կարելի է աւելի ցած շինել:  
Գինետները առհասարակ շինում են քար ու կրից,  
կամ աղիւսից, կամարակապ, 6—10 արշին բարձրու-  
թեամբ, 10—12 արշին լայնութեամբ: Յատակը շի-  
նում են աղիւսից ու ցեմենտով սւաղում կամ տո-  
փալտից և քիչ թեք դիրք տալիս, որ լուանալուց  
կամ տակառ արաքելուց հեղուկը մի կողմի վրայ  
դնայ և հաւաքուի մի անկիւնում փորած և ցեմեն-  
տով լաւ սւաղած փոսի մէջ, որը միշտ մաքուր պիտի  
պահուի և փոսի բերանը ցանցածն դոնակով ծած-

կուած: Գինետան դոները շինում են մեծ և փոքր:  
փոքրը անց ու դարձի համար, իսկ մեծը՝ մեծ աման-  
ներ ներս տանելու կամ հանելու: Մեծ դուռը պէտք է  
ունենայ 3 արշին բարձրութիւն և 3 արշին լայնու-  
թիւն: Դրանից դէպի գինետուն տանող սանդուղքը  
քարից պիտի լինի և դռան լայնութեամբ: Գինետան  
օդը մաքրելու համար հիւսիսային պատի մէջ յատա-  
կից կէս արշին բարձր 12 վերշոկ երկայն և 6 վեր-  
շոկ լայն ամեն 6 արշինից մի մի անցք են բանում,  
շուշի դոնակով, իսկ հարաւային պատի թէ յատակից  
և թէ մի սաժէն բարձրութիւնից ծինելուզի անցքի  
պէս բացուածներ թողնում, մինչև հասնում է կտուրի  
տակը: Հիւսիսային կողմի դոնակները բանալով՝ մի  
քանի ժամում փոխում է ներսի օդը: Գինետան դոները  
և պատուհանները շինում են հիւսիս—արևմտեան կամ  
արևելեան կողմից:

Գինետունը հեռի պիտի լինի այն ամեն բանե-  
րից, որ կարող են վասակար ազդեցութիւն ունենալ  
գինու վրայ, ինչպէս են ճահիճները, աղբանոցները,  
երկաթուղու գնացքների անց ու դարձը: Պատերի մէջ  
պէտք է մի քանի պահարաններ ունենայ մանր գոր-  
ծիքներ մէջը պահելու: Եթէ հնարաւորութիւն կայ  
ջրհորի, լաւ է գինետանը ջրհոր ունենալ հարկաւոր  
ժամանակը օգտուելու:

Գինետանը բացի գինիները, ուրիշ բան չպիտի  
պահուի, ինչպէս զանազան թթուեղէն, կարտոփիլ,  
պանիր, որ առհասարակ սովորութիւն ունին շատերը  
կովկասաւմ:

Փոքր անտեսութեան ժամանակ, երբ մէկը ան-

ձեռնհաս է քարէ գինետուն շինելու, կարող է դետափոր գինետուն շինել, եթէ հողը կաւային է։ Այդ դէպքում քանի սաժէն խորութեամբ, երկայնութեամբ կամ լայնութեամբ որ կամենում են, հողը փորելով հեռացնում են և կտուրը ծածկում փայտէ գերաններով հորիզոնական կերպով ձգած կամ գերանները շեղադիր մէկմէկու հագցրած, ապա փայտերով կամ ցախով ծածկում են գերանների երեսը և վրայից էլ հող լցնում ու դարմանացեխով սւազում կամ դռում։ Երբ հողի կազմը և դիրքը ներում է, կարելի է և ստորերկրեայ ներքնատուն շինել 3—4 արշին լայնութեամբ, միայն մուտքը քարից շինելով։

Բացի ստորերկրեայ գինետները, կարելի է և գետնի երեսին էլ շինել գինետներ, միայն այդ դէպքում կրկնակի պատեր պիտի շինել մէկմէկուց 3/4 արշին հեռի և արանքը յարդով, մամուռով, սղոցուածքով կամ ածուխի փշտանքով ու մոխրով լցնել, որոնք ջերմութիւն հաղորդելու ընդունակ չեն, այսպէս էլ կտուրը 1—1½ արշին հաստութեամբ ծղօտով պիտի ծածկել և վրայից ծեփել կամ փայտէ ծածկ շինել։ Այդպիսի գինետան դռան առաջ մի փոքրիկ նախառենեակ պիտի ունենալ, որի դուռը կողքի վրայ պիտի բացուի և ոչ ուղղակի գինետան դռան դիմացը. դուռը պիտի աշխատել, որ հիւսիսային կողմի վրայ բացուի և երբէք դէպի հարաւ։ Այդպիսի գինետան շուրջը լաւ է և մի քանի շարք ծառեր տնկել, որ շուրջ ձգելով՝ կոտրում են դրսի ջերմութիւնը։

3. Շիւատուն։ Գինեվաճառը, եթէ շիշերով առետուր ունի, նա գինետան կից պիտի ունենայ և շիշատուն, որտեղ մի կողմում շարում են շիշերով գինիների ամանները. այդտեղ յարմարութիւն պիտի լինի լցնելու, շիշերի խցանը պնդացնելու, սեղաններ՝ վրան շիշեր դարսելու, դարիքներ՝ այս ու այն տեսակը տեղաւորելու, դատարկ շիշերի ու լուանալու տեղ, խցան ու կապսիւլ կամ էտիկէտ պահելու արկղներ, վերջապէս գինին զտելու, մաքրելու գործիքներ և այլ գործածական պարագայք պահելու տեղեր։ Շիշատունը կարող է և գետնի երեսին լինել, բայց նրա ջերմութիւնը չպէտք է +4° R. պակասի +14° R. աւելանայ։

Բացի վերոյիշեալ բաժանմունքները, ամեն մեծ գինետուն պիտի ունենայ իր սեպհական տակառ շինելու, նորոգելու կամ պահելու սարայը, տակառները տաք կամ ցուրտ ջրով լուանալու յարմարութիւնները և վերջապէս գրասենեակը։

#### ԳԼ. Xv.

#### ԳԻՆՈՒ ԱՄԱՆՆԵՐԸ։

#### ա. Փայտէ տակառները։

1) Գինեգործութեան մէջ լաւ ամաններ ունենալը մի անհրաժեշտ կարիք է և այդտեղ մարդ չպէտք է խնայողութիւն անէ մի քանի բուբլի աւել տալու լաւ ամանի համար, քանի որ վատ ամանում ոչ միայն գինին կարող է փչանալ ամանի պատերից

ծծուելով ու քացախելով, այլ և յաճախ տախտակների բարակութիւնից ծռծուել, փոխադրութեան ժամանակ կոտրուել, որդնակեր լինելուց՝ ծակերից լցել:

Դինու համար ամեն տեղ ընդունուած է կաղնի տախտակից շինած տակառները, որոնք թէ ամուր են, թէ գիմացկուն և թէ մէջը գինի պահելուց՝ այս ու այն համը կամ հոտը չեն փոխադրում, ինչպէս միւս ծառերի տախտակները: Կաղնի ծառերը ևս միատեսակ չեն, կան խիտ և նոսր տերեւ ունեցողներ կան լեռնային և տափարակի վրայ աճողներ, որոնք նոյնպէս տարբերուամ են շատ ու քիչ իրենց մէջ բովանդակող կաղնու տապութեամբ: Թէ խիտ տերեւ ունեցողները և թէ սարի կաղնին աւելի յարդի են քան միւսները:

Տակառների համար տախտակ ընտրելուց՝ պէտք է ուշ գարձնել որ նոր լինի, կոստղներ կամ ճերմակ շերտեր չունենայ: Տախտակները պէտք է համահաւասար հաստութիւն ունենան, նրանք պէտք է ճղուած լինին և ոչ սղոցուած: Կաղնի ծառից տախտակ շինելու համար նախ որոշ երկարութեամբ ծառը կտորում են, ապա ամեն մի կտորը չորս մաս բաժանուամ խաչաձև և ամեն մի մասից առանձին առանձին ոչ լայն 5 դիւյմ և ոչ նեղ քան 2<sup>1/2</sup> դիւյմ 40—60 վեզրանոցի համար տախտակ պատրաստում: Ծառը պէտք է կտրել ձմեռը, գարնանը և ամառը կտրածը շուտ է փշանում և որդնակեր գառնում, ինչքան տախտակները նեղ լինեն, այնքան տակառը ամուր կլինի: Տախտակները նախքան տակառ պատրաստելը բաց տեղ ցանցաձև պիտի շարել, որ նրանք լաւ

չորանան: Պատրաստի նոր տակառ առնելուց՝ պէտք է նայել, որ նրանք հին տակառների տախտակից չինեն, ներսը խորտ ու բորտ, ճղուածք չունենան ու փորի կողմից տաշած, բարակացրած: Տակառի ճակատի տախտակները երկաթէ կամ փայտէ մեխերով մէկմէկ կու հազցրած են լինում, մի ճակատի ներքինի մասում յատակի տախտակից  $\frac{1}{2}$  վերշոկ բարձր ծորակատեղ բացած, իսկ տակառի վերի մասում ճագառատեղ որոնք բոլոր միաչափ տակառների համար նոյն արամտագիծը (ծակը) պիտի ունենան:

40—50 մինչև 60 վեզրանոց տակառները կարելի է գործ ածել թէ գինի պահելու և թէ գինի ճանապարհելու համար: Այն տակառները, որ 60 վեզրայից աւել են պարունակում, կարծիք չկայ բովանդակութեան համեմատ էլ տախտակների հաստութիւնը և երկարութիւնը պիտի լինի: Այդպիսի տակառները ունենում են ճակատից դռնակներ, որոնց պնդացնում են պտուտակներով, առանց երկաթէ պատուտակի ծայրը հեղուկին դիպչելու: Այդ դռնակները մարդ մտնելու չափ մեծ են, որ պէտք եղած ժամանակը ներսը կարենան լուանալ, մաքրել: Դռնակները, որ լաւ նստեն ու գինի չգուրս գայ՝ ճարպ են քսում կողքերին:

2. Տակառների գօտիները շինում են երկաթից կամ փայտից: Երկաթէ գօտիների թիւը կախուած է տակառի մեծութիւնից—այսպէս 1—3 վեզրանոցի համար բաւական է 4 գօտի, 4—10-ի համար 6, 15—30-ի համար 8, 40—60 և դրանից մեծերի համար 10, երկաթի գօտիները ժանդ չբոնելու համար լաւ է ներկել:

Փայտի գօտիները, որ աւելի թանգ են նստում և այնպէս դիմացկուն չեն, շինում են կաղնի, վնաղի (տկողնի), շամալութի, գեչի և այլ ծառերից:

3. Տակառների խցանը շինում են կամ կաղնի փայտից կամ ապակուց, որոնք շատ կոկուած պիտի լինին և տակառի բերանին յարմարեցրած: Խցանը պէտք է քիչ երկայն լինի, որ ներքեփ մասը գինուն դիպչէ, իսկ վերեփ մասը յարմարութիւն ունենայ փայտէ մուրճով հանելու: Պէտք է թողնել այն սովորութիւնը, որ խցանին փալաս են փաթաթում և տակառը ծածկում, դրանից փալասի ծածք գինին օդի ազդեցութեամբ քացախելով, թթւութիւնը հաղորդում է և տակառին: Փայտէ խցան բանեցնելուց, ամեն շաբաթ տակառի զիները լցնելուց, պէտք է տաք ջրով լուանալ և այնպէս պնդացնել. անուշադրութիւնից փայտէ խցանի շուրջը և տակը ևս կարող են քացախի տարրեր դոյանալ:

4. Տակառների ձեւը լինում են ձուածեւ կամ կոլոր: Ձուածեւ տակառները թէ աւելի մեծ բովանդակութիւն ունին, թէ քիչ տեղ են բոնում և թէ գինին նրանց մէջ լաւ է պարզում: Միայն կոլորների առաւելութիւնը նրա մէջն է, որ հեշտ է նրանց տեղից տեղ փոխադրելը: Տակառները շատերը իւղաներկով ներկում են զինու գոլորշիացման առաջը առնելու և աւելի դիմացկութիւն տալու. ճիշդ է այդ տեսակէտից ներկը օգնում է, բայց մինոյն ժամանակ պէտք է աշքի առաջ ունենալ, որ դրանով տախտակների ծակերը ծածկում են և օդի ազդեցու-

թիւնը գինու վրայ թուլացնում, որով նա շատ ուշ է՝ զարգանում, ինչպէս ապակեայ ամաններում կամ կարասներում:

5. Տակառների չափը: Տակառները ամեն գինեզործական շրջանում միօրինակ չեն. կան տեղեր ուր շրջանադարձութեան մէջ է 20 վեդրանոցը, կան՝ որ 30, 40 կամ 50 վեդրանոցը. 60 վեդրանոցից աւել պարունակող տակառները միայն մէջը գինի պահելու կամ խառնուրդ անելու յարմար են, դրանք գործադրում են մեծ գինետներում և լինում են զանազան չափերի մինչև 1000 վեդրանոց: Գինու շուտ զարգացման տեսակէտից նախապատիւ են փոքր ամանները, իսկ միօրինակ գինի ունենալու համար՝ մեծ ամանները, որոնք թէ քիչ տեղ են բռնում և թէ գինին քիչ է գոլորշիանում:

Լաւ տակառները կարող են դիմանալ 50 տարուց աւել, եթէ հարկաւոր ինամքը տարուի:

### Բ. ՑԵՄԵՆՏԻ ԿԱՐ ԲԵՏՈՆԻ ՍՄԱՆՆԵՐԸ:

Կաղնի փայտի թանգութեան պատճառաւ, վերջին ժամանակներում մեծ գինետներում սկսել են գինու համար քարից, աղիւսից, ցեմենտից կամ բետոնից ամաններ շինել: Բետոնը խառնուրդ է ցեմենտի, կրի, աւազի և մանր քարերի. այդ ամենը շաղախելով՝ լցնում են կաղապարի մէջ, որ չորանալով քարանում է: Այդ ամաններին կարելի է զանազան ձև տալ, ինչպէս տակառի, չափի, ներսից լաւ ցեմեն-

տով ծեփելով և դոնակ կամ ծորակատեղ յարմարեցանելով։ Այդպիսի ամաների առաւելութիւնը նրա մէջն է, որ փայտի ամաների հետ համեմատած՝ շատ աժան են նստում, երկար գիմանում, չեն չորանում, գինին քիչ է գոլորշիանում, մեծ քանակութեամբ միօրինակ գինի է ստացում և միօրինակ ջերմութիւն պահում, բայց այդպիսի մեծ ամաները միմիայն լու են հասարակ և նոր եփեկող գինիների համար կամ թէ գինի խառնուրդ անելու համար։ Այդ ամանների պակասութիւնը նրա մէջն է, որ գինին մէջը դժուար է պարզում, շատ թթւութիւն է կլանում, մաշնաւանդ առաջին տարին և գինին գանգաղ է զարդանում։

Գ. ԳԻՆԻ ԼՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆՈՐ ՏԱԿԱՌՆԵՐԻ  
ՊԱՏՐԱՍՏԵԼԸ։

Նոր տակառները առանց նախապէս պատրաստելու, եթէ գինի լցնենք, կաղնի տախտակներից գուրս տւած տապութեան և ուրիշ տարրերի հետ խառնուելով գինին կոշտ ու վատ համ կստանայ։ Դրա առաջը առնելու համար տակառները եռացած ջրով լուանում են կամ թէ առժամանակ շոգու ազգեցութեան ենթարկում։ Եռացըած ջուրը ածում 50 վեդրանոցին 3—4 վեդրօ, խցանը փակում, լու հարում ամեն կողմը, յետոյ զլիսի վրայ կանգնեցնում, նորից հարում, վերի ճակատին էլ տաք ջուր լցնում և թողնում մի երկու ժամ, դեռ միջի ջուրը տաք՝ թափում են, նորից այդ ձևով 2—3 անգամ լուանում, ապա ցուրտա ջուր լցնելով՝ մի քանի օր պահում։ Եթէ միջի ջուրը

մաքուր է, գոյն ու տտիպ համ չունի, ասել է տակառը պատրաստ է միմիայն նոր զինու համար։ Տակառի պատրաստ լինելը կարելի է իմանալ և հետեւ կերպով վերցնում են մի կտոր երկաթի արջասպ (զաղ) ջրում լուծում են և կէս բաժակ լցնում տակառից հանած կէս բաժակ ջրի վրայ։ Եթէ ջուրը արջասպից սկանում է, ասել է տակառը դեռ կաղնու տտապութիւն է գուրս տալիս, ուստի և պատրաստ չէ, նորից պիտի տաք ու ցուրտ ջրով լուանալ։ Մի քանի տեղ սովորութիւն կայնոր տակառները լուանալուց կիրկամ սովա գործ ածել բայց գրանք իրենց նպատակն չեն ծառայում. շատ անգամ կրի մի մասը մնում է տախտակների արանքում, պոկ չեն գալիս և գինի ածելուց, լուծում, խառնում է նրան վատ համ ու հոտ տալիս և գոյնը թոցնում։ Շատերը նոր գինու տակառը եռման ջրով լուանալուց՝ գեղձենու կամ վազի տերեկի եփ տուած ջուրն են բանեցնում կամ օշինդրի (եաւշանի ԽՈՂԻՒ) բոյսը ձգում տակառը, որ որոշ համ ու հոտ տայ, գրանք անմեղ բաներ են և մեծ գինետներում անգործադրելի։

Նոր տակառները կարելի է հեշտ ու արագ պատրաստել շոգու միջոցաւ, գրա համար մեծ զինետներում առանձին շոգեկաթսայ են բանեցնում, որից խողովակով շոգին գնում է և բերանը գէպի ներքև երկու գերանների վրայ գրած տակառի տակիցներու մանում։ Շողին տաքացնելով ու մանելով տախտակների մէջ, թէ նրա գոյնն է հանում և թէ տտպութիւնը ու բերանից թափում։ Շողին այնքան պահում են, մինչեւ որ տակառից թափուած ջուրը բոլորովին պարզ է

գալիս, որ կարող է տևել  $\frac{1}{4}—\frac{1}{2}$  ժամ և աւելի։ Շուդ մաքրելուց յետոյ, երկու անգամ ցուրտ ջրով լուանում են տակառները և ապա բանեցնում։

Դ. ԳՈՐԾԱԾՈՒԹԵԱՆ ՄԷԶ ԵՂԱԾ ՏԱԿԱՌՈՒԵՐԻ  
ԼՈՒԱՆԱԼԻ ԵՒ ԽՆԱՄՔՅՀ։

1. Գինով լիքը տակառը, դատարկելուց անմիջապէս, պէտք է լուանալ 2—3 անգամ ցուրտ ջրով, յետոյ ճրագով նայում են ներսը, որ բան չլինի մէջը մնացած, ապա ծխում են և բերանը դէպի ներքեւ դնում, որ մէջը ջուր չմնայ. մի օրից յետոյ երկրորդ անգամ ծխում են, բերանը լաւ փակում ու շարում յատկացրած տեղը։

2. Տակառի բորբոսը։

Երբ տակառը դատարկելուց յետոյ խնամք չէ տարւում, նա կամ բորբոսով է ծածկւում կամ քացախի և այլ համ ու հոտ բռնում. այդ դէպքում ճրագը մէջը չէ այրւում, հանգչում է, որ նշան է տակառի հիւանդութեան։

Տակառը բորբոսում է երկու տեսակ, մէկը դեղին գունով, որ մաքրելուց յետոյ տեղ տեղ բծեր է թողնում, միւսը ճերմակ գունով, որ լուանալուց կամ քերելուց՝ նետք չէ թողնում։ Առաջին դէպքում տակառը անբուժելի է և անպէտք գինու համար, իսկ երկրորդ տեսակ բորբոսը կարելի է նեռացնել մի քանի միջոցներով. առաջինը՝ տակառի մէջ վազի մի քանի կարոններ են այրում, որից ներսի պատերը խանձռում են, սևանում, այդ սևացած մասերը քե-

քիչով քերում են, յետոյ տաք ջրով, շղթայ ձգած ամանի մէջը, լուանում, ապա ցուրտ ջրով ողողում։ Երկրորդ՝ հանում են տակառի ճակատը, ներսը լաւ քերում, ունդա տալիս, ցուրտ ջրով ողողում, ճակատը դնում տեղը և մի քանի վեգրօ եռացրած ջուր ածում մէջը, ամեն վեգրոյին մի զօլոանիկ ծծմբաթթու (събрная кислота) խառնած և մի ժամու չափ հարելով, որ ամեն անկիւն լաւ թրջուի, թափում են, մաքուր ջրով մի երկու անգամ ողողում, քամ դնում. յետոյ վերցնում են հինգ ֆունտ ոսկը ածում, ծեծում, մի վեգրօյ ջրի հետ թափում տակառը, լաւ հարում և նորից ցուրտ ջրով ողողում և քամ դնելուց յետոյ, ծխում ծծումբով։ Բորբոս դրած տակառները կրաջրով երբէք չպիտի լուանալ, կարծելով որ նա կմաքրէ։

3. Քացախի հոտ փշող տակառները մաքրելու համար մէջը նախ ծալամ (վազի կտրն) են վառում, յետոյ քերում են խանձռուած շերտը, լաւ եռցրած ջրով մի ժամ լուանում 2 վեգրայ ջրի մէջ 8 ֆունտ սողա խառնած, յետոյ դատարկում են, նորից եռցրած ջրով լուանում, վերջն էլ ցուրտ ջրով ողողում քամ դնում։ Քացախի թթւութիւնը անցած լինելը որոշելու համար լակմուսի կապոյտ թուղթ են կպցնում տակառի ներսի տախտակին, եթէ նա գոյնը փոխում, կարմրի է տալիս, ասել է դեռ թթւութիւն կայ և պէտք է նորից սողա ջրով լուանալ, մինչև թղթի գոյնի անփափոխ մնալը։ Երբ տակառը սաստիկ քացախած է լինում, վտանգաւոր է նրա մէջ գինի ածել։

4. Փտութիւնը՝ որ պատահում է հին տակառներին, եթէ շատ խորը չէ գնացած, կարելի է մի ճա-

կատը բանալ և տաշելով փառւթեան հետքերը  
հեռացնել, բայց խորը գնացած ժամանակը, ինչքան  
էլ չքերենք, նա իր փառւթեան հոտը կտայ զինուն:

### 5. Տակառների վաս հոտը:

Երբեմն պատահում է, որ դատարկ տակառ-  
ները երկար ժամանակ առանց ծխելու մալով՝ վատ  
հոտ են փշում և զինու վրայ ևս աղջում: Դրա հա-  
մար այս միջոցն են առաջարկում, 50 վեդրանոց  
ամանի համար վերցնում են կէս վեդրայ ջրի մէջ  
25 զօլոտնիկ մարգանցի փոշիացրած գերաթթւուտ  
(ուրեմն մարգանցի), 40 զօլոտնիկ աղ, 65 զօլոտ-  
ծծմբային թթու և այդ խառնուրդը թափելով տակառը՝  
լաւ հարում են, ողողում և երեք ժամ հանգիստ տա-  
լիս: Դրանից յետոյ այդ հեղուկը թափում են, ցուրտ  
ջրով լուանում մինչև որ կտրւում է արտաքին հոտը:  
Եթէ այդ միջոցաւ մի անգամից ամանը չէ մաքրւում,  
նոյն գործողութիւնը կրկնում են:

### 6. Սպիրտի տակառների մարելը:

Շատ անգամ պատահում է որ գնում են սպիրտի տա-  
կառներ, որոնց մէջը նախապէս տախտակներին քսած է  
լինում այսպիսի հիւթ, որ չէ լուծւում սպիրտում, այն-  
ինչ զինու մէջ կարող է լուծուել, այդպիսի տակառները  
ցուրտ ջրով ողողելուց յետոյ՝ եռման ջուր են ածում,  
50 վեդրանոցի համար 3—4 վեդրո և այդ ջրի մէջ  
խառնում են ծծմբաթթու (сърная кислота) հարիւրին  
1—2 տոկոս. ծծմբաթթուն նախապէս մի փոքր ցուրտ  
ջրի մէջ բանում են և յետոյ քիչ քիչ եռման ջրի

վրայ թափում ու շարունակ խառնում և ածում  
տակառը, ծածկում բերանը և ողողելով դեռ չսառած՝  
թափում և ապա ցուրտ ջրով լուանում:

### 7. Ջէրից տակառը մարելը:

Երբ տակառը ձիթու է և ձէթը նրա մէջ երկար  
մնալով կծում է, 10 փունտ ջրի մէջ 4 փունտ  
սողա են հալեցնում, յետոյ 1 փունտ չհանգած կրի  
վրայ ջուր են ածում, մինչև որ նա հանգչում է  
փոշի գառնում և այդ ամենը խառնում են իրար ու  
թափում տակառը, ոլորում ամեն կողմի վրայ, որ  
կպչի պատերին ու տաք ջուր ածելով գլխին, նորից  
հարում ու թափում, յետոյ ցուրտ ջրով ողողում,  
քամ դնում:

### 8. Կարմիր զինու տակառը:

Կարմիր զինու տակառը ճերմակ զինու համար  
պատրաստելուց՝ 8 փունտ ողա են լուծում երկու վե-  
դրո եռացած ջրի մէջ և թափում տակառը և մի ժամու  
չափ գոլորշիների ենթարկում ու դատարկելուց յետոյ,  
նորից եռացած ջրով լուանում և վերջն էլ ցուրտ ջրով  
ողողում, քամ գնում, որից յետոյ կարելի է ճերմակ  
զինու համար գործ գնել: Դարթից կամ մրուրից տա-  
կառը մաքրելու համար բանում են ճակատը և մէջը  
լաւ քերում, յետոյ ճակատը տեղը զնելով՝ վերցնում են  
ծծմբային թթուուտ 16 զօլոտնիկ կէս վեդրո ջրի մէջ բաց  
անում, եռացնում և լցնում տակառը լաւ ողողում ու  
թափելուց յետոյ, թողնում, որ չորանայ: Չորանալուց  
յետոյ կէս վեդրո ջրի մէջ  $\frac{1}{2}$  փ, աղ են լուծում և

դրանով ևս լուանում, վերջն էլ մաքուր ջրով ողոզում, քամ դնում:

9. Կարասների եւ տկերի գործածութիւնը:

Բացի տակառները մեզանում կովկասում և թէ ուրիշ տեղեր զինի պահելու համար գործադրում են շատ հին ժամանակներից կարասներ և ուռմբիներ (մեծ տկեր): Կարասները շինում են կաւից, թրծում են և կամ գետնի տակն են թաղում ներքնատան մէջ կամ դրսում բացօղեայ, շիրափակ անում ու հողով երեսը ծածկում կամ թէ շարում են մառանում գետնի երեսին առանձին փայտէ շրջանակներ շինած, որ միմիանց չդիպչեն կամ վայր չընկնեն: Այդ կարասներում եփ են տալիս շիրան և եփ գալուց յետոյ, երբ ճաճան տակն է նստում, զինին պարզում, տեղափոխում են ուրիշ աման ու կպրամորթով երեսը ծածկում: Կարասների գործածութիւնը գլխաւորապէս երեսնի նահանգումն է, Ղարաբաղում և Շամախու շրջանում, ուր տակառները թանգ են նստում. դրանք մեծ անյարմարութիւններ ունին և վաղուց թողնուած են կանոնաւոր զինետներում:

Տկերն ու ուռմբիները, ոչ այլ ինչ են եթէ ոչ անսումների կաշին, որ ամբողջապէս հանած ու շուռ տւած, ներսը կուպրով պատած. Մինքի տեղն ու առաջի ոտներից մին ծառայում են իրեն լցնելու և թափելու անցք, մնացած մասերը կարուած ու պընդապուած են: Տկերը ճիշտ է այն յարմարութիւնն ունին, որ նրանց կարելի է ճիռու բարձել այն տեղերում, ուր սայլի ճանապարհ չկայ, նրանք լաւ են այն

տեսակէտից, որ թերատ մնալով՝ միշտ կարող ենք հուկի տալ և միջի օդը հանել, որ չներգործէ զինու վրայ, լաւ են այն դէպքում, երբ դատարկելուց յետոյ մեծ խնամք չեն պահանջում, ինչպէս փայտէ ամանները և նրանց կարելի է ծալել, հեշտութեամբ փոխադրել, բայց մեծ անյարմարութիւնը նրա մէջն է, որ տկերում պահած զինին առնում է կուպրի և տկի համը և անախորժ շինում, երկրորդ ներսը դժուար է մաքուր պահել, քանի որ կեղասութիւնները կպչում են կուպրին և տաք ջրով լուանալը անկարելի է:

Գլ. XVI.

ԳԻՆԻՆԵՐԻ ԳԼՈՒԽԸ ԼՅՆԵԼԸ ԵՒ ԳԻՆԻՆԵՐԻ  
ՊԱՐԶԵՑՆԵԼԸ:

1. Գինիների գլուխը լցնելը:

Շիրան եփ գալուց յետոյ, երբ որ ճաճայից կամ դիրտից հեռացնում ենք ու փոխադրում զինետունը, այդտեղ տակառների մէջ կարող է մեղմ եփը առժամանակ շարունակուել կամ բոլորովին վերջացած լինելով՝ կտրուել և ոչ մի նշան չցոյց տալ: Առաջին դէպքում տակառների գլուխը լցնելով՝ խցանները թեթև կերպով դնում են բերաններին, որ միջի գազը ճաճապարհ ունենայ գուրս գալու, իսկ երկրորդ դէպքում՝ բերանը պինդ փակում են և հետեւում, որ զիները միշտ լիքը լինի: Առաջին շաբաթներում ամեն երկու երեք օրից տակառների գլուխը պիտի լցնել, իսկ

յետոյ շաբաթը գոնէ մի անգամ որոշած օրերին քլիները լցնելը անհրաժեշտ է, եթէ ինկատի առնենք, որ տակառի տախտակների միջոցաւ ջրի և ալքօօլի մի մասը գոլորշիանում է, հեղուկի ծաւալը փոքրանում, խցանատեղը չորանում, որով դրսի օդի համար ձանապարհ է բացւում տակառի դատարկութիւնը բռնելու և իր մէջ եղած սունիերի զանազան սպորաների միջոցաւ գինին այս ու այն հիւանդութեան ենթարկելու։ Գինու գոլորշիացումը մանաւանդ սաստիկ է, երբ գինետումը չոր է, տակառի տախտակները բարակ են և լաւ չեն շնուած ու ջերմութիւնը մեծ ելեկջներ է անում։ Գինու գոլորշիացումը մանաւանդ մեծ է լինում փոքր ամաններում, քանի որ բովանդակութեան կողմից, համեմատած՝ մեծ տակառների հետ, աւելի մեծ մակերեսոյթ ունին։

Ամեն անգամ զլուխը լցնելուց պիտի գործ ածել միևնոյն գինուց կամ մօտաւորապէս նրա նմանը։ Շատ տեղ սովորութիւն է դրա համար մի տակառ առանձին պահել և քիչ քիչ նրանից գործ ածել։ Սրա վատ կողմը այն է, որ տակառը թերատուելով փչանում է և փչացած գինին խառնուրդ անելով լաւերին՝ նրանց ևս փչացնում է։ Այդպիսի դէպքում կամ թերատ տակառի գինին շիշեր կամ փոքր ամաններ պիտի ածել և կամ թէ չէ ամեն անգամ գինի հանելուց ծծումը ծխել տակառի ներսը, որ գինին չփչանայ և միշտ համն առնել և յետոյ գործ դնել։ Հին գինիների գլուխը լցնում են հին գինով, նոր գինին և այն, որ պղտոր է կամ քաղցրութիւն ունի իր մէջ, երբէք չպէտք է խառնել հին գինիների։ Այն

դէպքում միայն նոր գինին կարելի է հսկն խառնել, երբ զտուած մաքրուած է, առողջ է և ծծմբով ծխուած։

Երբ հարկ կայ ընտիր գինիների գլուխը լցնել և նոյն տեսակից չունինք, փոխանակ քաշ գինի խառնելու, շատերը նախապատւում են կայծաքարի կտորանք թափել մէջը և այդպիսով միշտ լիքը և անվասս պահել։

Տակառները լիքը պահելու համար գործ են ածում ձերմակ թիթեղից շինած կամ էմալով ծածկուած յատուկ ամաններ, որ ծայրում կտուց ունին կամ խողովակ, կան և առանձին ապակեայ շիշեր, որոնց ստորին ծայրը խողովակաձեւ է և մանում է տակառի խցանի մէջ, իսկ գլուխն էլ հերմետիքաբար ծածկուած է ապակեայ խցանով։ Այդպիսի շիշերը գինով լցնելով դնում են տակառների բերանին ու լաւ պնդացնում։ Գրա մեծ յարմարութիւնը այն է, որ աչքի առաջ է միշտ, գինին ինչ չափով որ գոլորշիանում է, նոյն չափով էլ այդ շիշերից մանում է տեղը բռնում և շուտ շուտ գլմները լցնելուց ազատում։

## 2. Գինու պարզեցնելը։

Գինին պարզեցնելու մէջ մեծ դեր է խաղում Փիլար (գտիչ) գործիքը, որը միևնոյն ժամանակ նպաստում է գինու հասունութեանը։ Առանց արհեստական միջոցների գիմելու, տակառից տակառ փոխադրելով՝ շատ գժուար է գինուն այն շողշողուն ու խաղրելով՝ շատ գժուար է գինուն այն շողշողուն ու պղպղուն տեսքը տալ որը ընտիր գինու մի անհրաժեշտ յատկութիւնն է և առանց դրան շատ անգամ

Կորյնում նա իր արժանաւորութիւնը: Բացի այդ՝ գինին ինչքան էլ պարզ չէ լինում, նոր աման տեղափոխելուց, նա գոյնը շատ ու քիչ փոխում, պղտում է և մի քանի շաբաթներ են պէտք կատարեալ պարզելուն, այսինչ ֆիլտրով մենք թէ հասունութիւնը կարող ենք առաջ ձգել և թէ պարզեցնելը, այն է գինու մէջ եղած զանազան տարրերի հեռացնելը, որ ամեն մի պատահարից կարող են պղտորումն առաջ բերել: Նոր գինիները իրենց կատարեալ պարզութեանը հասցնելու համար հարկաւոր է մի քանի անգամ զտման ենթարկել, քանի որ մի անգամ պարզ զածը՝ մի քանի ժամանակից յետոյ կարող է նորից պղտորել, իսկ հիները մի անգամից էլ բաւականաչափ պայծառ տեսք են ստանում:

Առհասարակ ֆիլտրով պարզեցնում են թէ թանձը ու քաղցր գինիները, որոնք տեղափոխելով դժուարութեամբ են պարզւում և թէ շատ պղտոր կամ հասարակ գինիները:

Գինիների արհեստական կերպով պարզեցնելը կամ զտելը լաւացնում է համը, զօրեղացնում անուշահուառթիւնը, պահպանում հիւանդութիւններից, բայց միևնույն ժամանակ նա թուլացնում է գոյնը, տոտպութիւնը և թնդութիւնը: Ուստի մուսկատ և ընտիր գինիները որչափ հնարաւոր է օդի ազդեցութեան տակ չպիտի ընկնեն և ֆիլտրով չպիտի պարզեցնուին, քանի որ թէ կորցնում են իրենց համը, հոտը և թէ շատ անգամ ֆիլտրի համը առնում, թուանում:

Առաջներում գինիները պարզեցնելու համար

անցնում էին թղթից, աւազից, բայց այժմ հնարուած են գանազան գործիքներ, որոնցից կիշատակենք միայն հասարակ գործածական ֆիլտրը, հոլանդական ասուած ֆիլտրը, ազբեստի ֆիլտրը և վոլմարին:

ա. Հասարակ գործածական ֆիլտրը, որ կոնուածնեն է, կարում են ֆլանելից կամ թէ քիչ սերտ կտաւից, վերի կողմից ունի կոլոր շրջանակ, օդակներ անցրած, որ քօղ անցնելով օդակներից՝ կախում են մի յարմար տեղ և պղտոր գինիները դրանով պարզեցնում: Այդ ֆիլտրը լաւ է փոքրիկ գինետներում, ուր մեծ քանակութեամբ գինի չեն պարզեցնում:

բ. Հոլանդական ֆիլտրը երկու բաժանմունք ունի, վերեկ բաժանմունքը աւազանն է, ուր գինին են լցնում և ներքեկ բաժանմունքը, ուր կախուած են չորսից եօթը քսակներ ֆլանելից կամ բարակ քաթանից կարուած: Այդ քսակները կրկնակի են, այսինքն մէկ քսակը միւսի մէջ դրած և բերանը հազցրած է աւազանի յատակի եօթը զանգակածն խողովակներին: Ֆիլտրը ունի ներքեկ մասում ծորակ: Նա հաստատուած է երեք ուների վերայ գետնից բաւականաչափ բարձր: Գինին պարզելուց պէտք է նայել, որ քսակները միշտ լիքը լինին և յատակից բարձր: Ներքեկի աւազանի ծորակը միշտ բաց պիտի պահել, որ քսակներից դուրս եկած գինին թափուի և չմնայ մէջը ու ճնշելով քսակներին՝ կանգնեցնէ պարզեցնելը:

գ. Ազբեստի ֆիլտրը ամբողջապէս շինուած է մետաղից. նա գլանածն է, ունի երկու բաժանմունք, վերինը, որ ծառայում է իրրե աւազան և ներքեկնը, որի մէջ կախ է ընկած վերի աւազանի հետ պտու-

տակ խողովակով միացած՝ զլանաձեւ նուրբ մետաղեայ լարերից գործած դափիչ պարկը, որը դրսից շրջապատուած է աւելի խոշոր աչքերով մետաղեայ ցանցով։ Գինին մաքրելուց ազբեստը խառնում են մի վեդրօ զինուն, լաւ հարում և թափում վերևի աւազանը, որ խողովակից անցնելով պարկի մէջ, ծակերը բռնում է և զինին զտուելով՝ դուրս թափում ներքեւի ծորակով։ Ազբեստը պէտք է ասել, որ շատ քիչ է գնում, նա աժան է և զինու վրայ մատակար ազդեցութիւն չէ անում։

Դ. Վոլմարի ֆիլտրը տաշտաձեւ վերև լայն և ներքեր նեղ մի արկղ է, յատակին նաւ ունի ծորակով։ Այդ արկղում փայտի մի քանի շրջանակներ են դնում, որոնց երկու երեսին քաթան է քաշած։ Շըրջանակի ներքեւի մասի մէջ ծակ է բացած և ապակեայ խողովակ դրած, այդ խողովակի մի ծայրը դուրս է եկած շրջանակի այն է երկու քաթանների մէջ տեղը, միւս ծայրը մտած արկղի յատակում հաստատուած նաւի մէջ, այնպէս որ արկղը զինով լցնելուց՝ անցնում է շրջանակների քաթանից ներսը և խողովակներից անցնում նաւի մէջ, իսկ նաւից էլ ծորակի միջոցաւ տակը դրուած ամանը։

Վոլմարի ֆիլտրը հորանդական ֆիլտրից թէ շուտ և թէ աւելի մաքուր է պարզում. բայց արժողութեամբ նրանից թանգ է։

Ֆիլտրները թէ քաթանին և թէ մետաղեայ շատ անգամ խաշար լինելով՝ մանաւանդ սկզբում մեծ քանակութեամբ զինի են բաց թողում. ծակերը ծածկելու աւելի սերտացնելու համար գործադրում են

սոսինձը, կադառ կամ գեշի ծառի ածխափոշին կամ ազբեստը։

Գինի մաքրելու համար վերցնում են մի կտոր ժելատին, կէս բաժակ ջրի մէջ ձգում, մեղմ կրակի վրայ տաքացնում և նա հալում է խկոյն այդ խառնում են այնքան զինու հետ, որ միանգամից լցնի ֆիլտրը և թափում քսակը կամ աւազանը։ Գինին ֆիլտրից անցնում է առանց լաւ պարզած իսկոյն ֆիլտրից անցնում է առանց լաւ պարզած լինելու, որ նորից պիտի ածել մէջը և կրկնել մինչև որ բոլորովին պարզ կգայ։ Եթե մի քանի անգամ կրկնելուց՝ տեսնում են որ գարձեալ պղտոր է գալիս ու վարար, այդ ժամանակ մի թէյի գգալ ածխափոշի են ածում զինու մէջ, խառնում և թափում քսակը, որ դանգաղեցնում է զինու դուրս գալիք։

### Յ. Գինիների զենքը։

Գինիների զտելը առաջներում դադանիք եր և ամեն զինետուն ունէր իր որոշ եղանակը և գործ գրած միջոցը։ Այժմ զինեգործութիւնը իբրև զիտութիւն այլես գաղտնիք չունի։

Գինիների զտելը հիմուած է մարմինների կամ քիմիական յատկութեանց վրայ կամ նրանց մէկմէկու վրայ արած մեքենական ազգեցութեան վրայ, եթէ մենք սոսինձը ջրի մէջ հալեցնենք և նրա վրայ տանին աւելացնենք, այն ժամանակ սոսինձն ու տանինը մի անզուծանելի խառնուրդ կկազմեն ջրի մէջ և բաժանուելով ջրից՝ տակը կնստեն։ Եթէ սոսինձը թրջենք ջրում կամ զինու մէջ, նա ծաւալով կմեծանայ։ Այդ յատկութեանց վրայ էլ հիմուած է սո-

սընձով գինու զտելը: Պղտոր գինու մէջ աչքով անտեսանելի շատ մանր մասեր կան, որ մինչեւ անգամ ֆիլտրով դժուար է հեռացնելը, այդպիսի պղտոր հեղուկին տանին են աւելացնում և յետոյ սոսինձ, որից ծաւալը մեծանում է այդ խառնուրդի մէջ և երկուսն էլ միանալով՝ իջնում ներքև իրենց հետ տանելով հեղուկի մէջ լողող մասերը և ամանի տակը նստեցնում: Տանինը և սոսինձը համապատասխան չափով պիտի վերցնել, ապա թէ ոչ այս կամ այն մասը աւել վերցրած ժամանակը գինու մէջ այդ աւելը կմնայ ու չի միանալ: Շատ անգամ պատճում է, որ այս կամ այն մասի քչութիւնից գինին չէ պարզում, եթէ տանինի պակասութիւնիցն է, պէտք է տանին աւելացնել, եթէ սոսնձի, սոսինձ: Կարմիր գինիները բնականաբար իրենց մէջ շատ տանին ունին, ուստի հարկ չկայ նրանց տանին խառնել, բայց եթէ գինին չէ պարզում, կարելի է աւելացնել և նա կներգործի:

Սոսինձն ու ծուի սպիտակուցը թուլացնում են գինու մէջ եղած տապութիւնը: այդ յատկութեան պատճառաւ կարելի է և ուղել տոտիպ ու կոշտ գինիները, իսկ եթէ գինին մաղասային է, տանին աւելացնելով կարելի է բաժանել նրանից և արագացնել գինու հասունութիւնը:

Որովհետեւ գինի մաքրելու համար վերցրած այս ու այն նիւթի քանակը կախումն ունի գինու յատկութիւնից, ուստի աչքի առաջ պիտի ունենալ այս պայմանները:

ա. Այս կամ այն զտող նիւթից թէ շատ և թէ քիչ վերցրած դէպքում գինին մնում է պղտոր:

բ. Ինչքան գինին թունդ է, այնքան լաւ և շուռ տով է մաքրուում:

3. Պէտք է գինին մաքրել այն ժամանակ, երբ նրա եփը կտրուել, վերջացել է և այլ ևս ածխաթը թու գաղ չէ բաց թողում:

դ. Գինին տեղափոխելուց անմիջապէս չէ կարելի զտել, այլ պէտք է 5—10 օր սպասել:

ե, երբ առաջին անգամ զտելուց յետոյ գինին չզարգուի, պէտք է տեղափոխել և երկրորդ անգամը զտել, եթէ միայն գինին բաւականաչափ տապութիւն և թթւութիւն ունի իրեն մէջ:

զ. Ինչքան մի գինի իրեն մէջ աւելի տապութիւն ունի, այնքան նա լաւ է պարզում:

է. Զտած գինին կարող է մաքրուել երբեմն մի քանի օրից, երբեմն էլ մի քանի շաբաթից:

4. Զտելու նիւթերը եւ զործադրելու եղանակը:

Զտելու համար առհասարակ դործադրում են են այնպիսի նիւթեր, որոնք իրենց մէջ բովանդակում են սոսինձ: Այդպիսի նիւթերն են՝ կաթը, արիւնը, ձկան սոսինձը, ծուի սպիտակուցը, կաօլինը (Փարփօրի կաւը), սպանական նողը ևլն:

Այս կամ այն նիւթը ընտրելուց՝ պէտք է աչքի առաջ ունենալ հետևեալը.

ա) Կարմիր գինիները պէտք է մաքրել ծուի սպիտակուցով կամ ժելատինով և ոչ ձկան սոսինձով, որ թոցնում է գինու գոյնը:

բ) Ճերմակ քնքոյշ գինիները, որոնք քիչ տանին ունեն, պէտք է ձկան սոսինձով մաքրել, իսկ շատ

տապութիւն և մուգ գոյն ունեցողները լաւ է ժելա-  
տինով կամ ձուի սպիտակուցով մաքրել:

Պէտք է գիտենալ, որ միջին հաշուով ձկան սոսրն-  
ձի մի մասը զինու վրայ այնպէս է ներգործում,  
ինչպէս ժելատինի կամ ձուի սպիտակուցի 2—3 մասը:  
Կան գինիներ, որ իրենց մէջ շատ մաղասային  
(ըլիզիտի) նիւթեր պարունակելով չեն պարզում ոչ  
ժելատինով, ոչ ձկան կլէյով և ոչ էլ ձուի սպիտա-  
կուցով. այդ գէպքում լաւ է սպանական հողը և կաօ-  
լինը: Սոսինձը կարելի է ստանալ թէ կենդանիների  
ջղերից, կաշուց ու կակուղ ոսկրահիւթից, կրծուկնե-  
րից, երբ երկար ժամանակ եփ տանք վրանց և թէ  
ձկների (թառափի, բելուզայի) լողական փուչիկներից,  
փամփուշաներից:

Գինու համար գործածական սոսինձը պատրաս-  
տում են հորթի կակուղ ոսկրներից ու կրծուկներից,  
որը լինում է թափանցիկ, պինդ, ապակու պէս փշրւող  
և տաք ջրում շուտ լուծուղ: Գինու համար սոսինձի  
լաւը օստոկոլ կամ կուանէի ժելատինն է ու լէնէին.  
Երկուսն էլ ֆրանսիական արտադրութիւն. մնացած  
տեսակները գինու համար անպէտք են, իսկ մեզա-  
նում ընդհանրացած բարակ թերթիկներով ժելատինը  
թոյլ է և այն ներգործութիւնը չունի, ինչ որ լէնէին  
կամ կուանէին:

Զկան սոսինձը ստանում են ասետրա և բելու-  
զայ ասուած ձկների լողական փամփուշաներից, որ  
լուսալով, արիւնից ու ջղերից մաքրելով մի տախ-  
տակի վրայ փոռամ են մինչև չորսնում է ու այնպէս  
պահում մինչև գործադրելը:

Զկան սոսինձով դտելու համար մի քանի ձեեր  
կան.

ա. Վեր են առնում ձկան սոսինձը փայտէ մուր-  
ճով ծեծում, մաքուր ջրով լուանում ու ֆարֆօրէ  
ամանի մէջ դնելով վրան զինի կամ սպիրտ ածում.  
12 ժամից յետոյ հանում են, սուր մկրատով մանր  
կտրատում և կրկին 12—24 ժամ զինում կամ սպիր-  
տում թրջոց դնում, մինչև որ նա պաղպաղակի տեսք  
է ընդունում: Այդ պաղպաղակի վրայ նորից զինի են  
լցնում, ձեռքով լաւ ճմուռ ու քաթանից անցնում:  
Այդ ստացուած հեղուկի վրայ ածում են 2—3 կվարտ  
(5 շիշաչափ) զինի, աւելով հարում մինչև փրփրում  
է և ապա լցնում զտուելիք տակառը, տակառն էլ  
լաւ խառնելով փայտով կամ երկաթէ հարոցով, գլու-  
խը ծածկում և թողնում անշարժ մինչև պարզուելը  
և ապա տեղափոխում զգուշութեամբ:

բ. Երկրորդ ձեր այս է, սոսինձը մանր կտրա-  
տում են, ցուրտ ջրում թրջոց դնում մի քանի ժամ,  
ջուրը թափում և սոսինձը հարում, խմոր շինում ու  
R. 6° աստիճան տաք ջրի մէջ բանում: Չուրը վերց-  
նում են՝ մի գրամ սոսինձին 100 գրամ ջուր, լաւ  
հարում են խառնուրդը մինչև որ կաթի գոյն է ստա-  
նում, ապա դրան խառնում են  $\frac{1}{2}$ —1 գրամ զինու-  
թթւուտ ամեն մի գրամ սոսինձին, որ խալոյն պաղ-  
պաղակի տեսք է ընդունում խառնուրդը և ձեռքով  
սղմելով անցնում են քաթանից ու զինու մէջ հարե-  
լով բանեցնում:

Լուծուած սոսինձը կարելի է անվկաս պահել  
ցուրտ տեղ երկար ժամանակ. հսացածը աւելի լաւ

է ներգործում, քան թարմ բաց արածը:  
Գինին զտելուց պէտք է ուշ դարձնել, որ սոսին-  
ձը որոշ չափից աւել չլինի, որը փոխանակ պարզե-  
ցնելու, պղտորում է։ Այսպիսի դէպքում ամեն մի  
գրամ սոսնձին վերցնում են 1—2 զօլոտնիկ տանին,  
ջրի մէջ լուծում են, երբ տակն է նստում պղտորու-  
թիւնը, պարզ պարզ քամում են և այդ հեղուկը գի-  
նուն խառնում։

Երբեմն պատահում է, որ գինին չէ գտնում գի-  
նեքարի պակասութեան պատճառաւ, այդ դէպքում  
50 վեդրանոցին խառնում են մօտ  $1\frac{1}{2}$  փունտ գինե-  
քար. ճերմակ գինու ամեն 10 վեդրին վերցնում են  
 $1\frac{1}{2}$ —2 զօլոտնիկ ձկան սոսինձ, երբ գինին զգալի  
տապութիւն չունի. շատ տտիպ ու կոշտ գինու  
համար պէտք է վերցնել 2—3 զօլոտնիկ։

Լէնէի կամ կուանիէի ժելատինով զտելը այս-  
պէս են կատարում, ժելատինը փշրում են, մաքուր  
ջրով լուանում, դնում հողէ կամ ֆաեանսի ամանի  
մէջ և ամեն 7 զօլոտնիկ ժելատինին  $1\frac{1}{2}$  շիշ ջուր  
ածում, դնում կրակի վրայ ու անդադար խառնում,  
մինչև լուծում է, առանց թողնելու որ եփի, երբ  
այդ քիչ սառում է, խառնում են գինու հետ, հա-  
րում և լցնում տակառը ու տակառի մէջն էլ մի  
քանի անգամ խառնում ու ծածկում բերանը։  
Ժելատին վերցնում են ամեն 60 վեդրին՝

Ճերմակ գինու համար 15 զօլոտ.

Կարմիր      »      8      »

Քնքոյշ գինիների համար 7      » , իսկ տը-  
տիպ գինիների համար քիչ աւել. ժելատինը առհա-

սարակ բանեցնում են ճերմակ գինիների համար։  
Չուի սպիտակուցով մաքրում են գլխաւորապէս  
կարմիր գինիները։ Չուի սպիտակուցը այն յատկու-  
թիւն ունի, որ լուծում է ցուրտ ջրում և սառչում  
ու թանձրանալով՝ ալքօօլից ու դառնիճից մի փառ  
կազմում, որ աւելի ծանր լինելով քան գինին կամաց  
կամաց տակն է նստում և իրեն հետ տանում գինու  
մէջ լողացող մարմինները։

Չուի սպիտակուցով մաերելու համար վերցնում  
են 50 վեդրանոցի համար 15—18 թարմ ձուի սպի-  
տակուց. որը 12 զօլ. աղի հետ հարում են փոքրիկ  
ցախաւելով մինչև փրփրում է, յետոյ վրան հետզհե-  
տէ ածում են ամեն ձուի սպիտակուցին մի թէյի  
բաժակ ջուր կամ գինի ու լաւ հարելուց յետոյ թա-  
փում են տակառը ու նորից խառնում, վերջը գլուխը  
լցնելով, թողնում մի քանի օր մինչև պարզելը։ Պար-  
զելուց յետոյ ծորակով գինին տեղափոխում են և  
երբ գինին ծորակին է համառում, կիսով չափ փակում  
են, բերանին էլ բարակ շոր անցնում, որ ձուի սպի-  
տակուցի մանր փշրտանքը լողալով չթափուի ներքեւ։  
Կաօլինով. այն է ֆարֆօրի կաւով զտելու հա-  
մար վերցնում են 50 վեդրանոցի համար 6—15  
փունտ կաօլին, մի քիչ դինու մէջ բաց անելով՝ կաթ-  
նագոյն հեղուկ է ստացվում, որի երեսին լողացող  
աւելի խոշոր մասերը հեռացնելուց յետոյ՝ թափում  
են այդ հեղուկը տակառի մէջ ու լաւ խառնում ու  
թողնում մինչև պարզելը։

Կաօլինը պէտք է մաքուր լինի և արտաքին հոտ  
չունենայ և այդ կարելի է իմանալ նախօրօք մի քիչ

բաց անելով գինու մէջ ու 12 ժամ պահելով բերանը փակ շիշի մէջ. եթէ վատ հոտ չէ գալիս, ասել է կարելի է գործ ածել:

Սպահական հողը, որ նախապատիւ է քան կաօմինը, գործ են ածում զլխաւորապէս թանձր, քաղցր կամ մաղասային գինիներ մաքրելուց կամ այն գինիները, երբ ժելատին կամ միւս զտիչ նիւթերը լաւ չեն ներգործում:

Սպահական հողով զտելուց՝ վերցնում են 50 վեդին 5 փունտ հող. վրան գինի են լցնում, լաւ խառնում, երկու ժամ հանգիստ թողնում, երբ ուռչում է, վրան քիչ քիչ գինի են լցնում և հարում ու պարզ պարզ ածում տակառը, տակը նստած կոշտերի վրայ նորից գինի լցնում, հարում թափում մինչև բոլորովին վերջանալը:

Բացի վերոյիշեալ միջոցները գինիները մաքրում են չորացրած ու փոշիացրած արինով, կաթով, շիբով և այլ նիւթերով, որոնք ունին իրենց պակասաւոր կողմերը, ուստի և դրանց մասին չենք խօսիլ: Եթե կանոն պէտք է ընդունել—ձկան սոսինձով զտել՝ երբ գինին քիչ տանին ունի: Երբ գինին քաղցր է ու մաղասային՝ ընտրելի է սպահական հողը:

Երբ գինու մէջ թթւութիւնը նւազ է ու չէ զտում, փոշիացրած գինեքար կամ գինու թթւուտ և կալի են աւելացնում:

Մուգ ձերմակ գինիները պարզում են ժելատինով, որ թոցնում է միաժամանակ և գոյնը. ժելատինի և ձկան սոսնձի այդ յատկութեան պատճառաւ,

կարմիր գինիները դրանցով չեն պարզեցնում, այլ գործ են ածում ձուի սպիտակուցը:

Տապութիւնը պակաս գինիներին նախապէս դառնիմ են աւելացնում, այդ գէպում դառնիմը տաք ջրում լուծում են և զտելու գինուն խառնում մի օք առաջ և լաւ հարում:

Պէտք է աշխատել զտելուց գինին քիչ օդի ազդեցութեան ենթարկել:

Գինին կարող է չպարզուել, երբ բաւականաչափ տապութիւն չունի:

Տապութիւնը աւելցնելու համար գործ են ածում դառնիմը (բանակ), որը պատրաստում են գլխարից, գեղին գունով է առանց հոտի և լուծում է ջրի ու ալքօօլի մէջ: Այդ փոշին չոր տեղ պիտի պահել, որ չփշանայ:

5. Գինիների երկրորդ եւ յաջորդ յետ ածելը կամ դիրտից նեռացնելը:

Նոր գինինի ինչքան շուտ շուտ հեռացնենք իր դիրտից, այնքան նա շուտով կզարգանայ, կմաքրուի և պատրաստ կլինի վաճառահանելու: Երկրորդ անգամը յետ ածելուց առաջ բոլոր տակառներից կէս կէս բաժակ գինի պիտի վերցնել, համը առնել և նայել արդեօք պարզ է, թանձրացած չէ կամ մէջը մշուշի պէս պղտորութիւն չունի և այդ բաժակների գլուխը թղթով ծածկելով, պահել մինչև միւս օրը: Եթէ գինին առողջ է, առանձին պակասութիւն չունի, կարելի է ուղղակի մաքուր լուացած և թեթև ծխած ամանների մէջ տեղաւորել, եթէ նա մշուշով պա-

տած է կամ թանձրացած և բաժակի մէջ պղտորուել է, զոյնը փոխել պէտք է անցկացնել մաղից և այնպէս լցնել ծծումբով թեթև ծխած տակառի մէջ։ Յետ ածելուց յետոյ տակառների զլուխը պէտք է լցնել խցանները պնդացնել և մաքուր լուանալ, ու շորով սրբել։ Երկու շաբաթից նորից պիտի նայել բոլոր տակառներին և եթէ հիւանդութեան որ և է նշան երևաց, պատճառը իմանալ և առանց ուշացնելու բժշկել։

Եթէ ուզում ենք գինին շուտ զարգանայ, պէտք է առաջին տարին յետ ածել չորս անգամ։ Առաջին անգամը նոյեմբեր կամ գեկտեմբեր ամսին, երկրորդ անգամը փետրուարին կամ մարտին դեռ վաղը չուր չընկած, երրորդ անգամը մայիսին տաքերը ընկնելուց առաջ, չորրորդը՝ օգոստոսին կամ սեպտեմբերին այգեկութից առաջ։ Երկրորդ տարին բաւական է երկու անգամ յետ ածելը յունվարին և օգոստոսին, իսկ այնուհետև տարին մի անգամ։ Չորս հինգ տարուայ գինիները, եթէ լաւ պարզ են, հարկ չկայ յետ ածելու, միայն պէտք է խցանները լաւ պնդացնել և կողքի վրայ շուր տալ և այլ ևս նրանց զլուխը լցնել ու զլուշանալ օդի ազդեցութեան ենթարկելու, որից նրանք աւելի շուրով են փշանում քան նոր ժամանակը։

Կարմիր նոր գինիները հարկ չկայ չորս անգամ յետ ածելու, բաւական է երեք անգամը—գեկտեմբերին, մարտին և օգոստոսին։ Կարմիր գինիների գոյնը շուր շուր յետ ածելուց թուլանում է։

6. Պոմպով գինու յետ ածելը:

Պոմպերի տեսակները շատ են, բայց զինու համար պէտքականը ճախարակաձևն է (րուազոնայ պոմպա), որը շինուած պիտի լինի արոյրից (լացուի) և կարմիր պղնձից։ Անպէտք են գինետան համար երկաթից կամ չուգունից շինած պոմպերը, որոնք ժանդ են բռնում, սոյնպէս և այն պոմպերը, որոնք շատ են ծեծում գինին, նրա մէջ եղած ածխաթթու գաղը հեռացնում, որը վնասում է հին գինիներին և նրանց պէտք կորցնում։

Ճախարակաւոր պոմպով գինին յետ ածելու համար լիքը տակառի ճակատին ամրացնում են ծորակը, գինին բաց թողում մինչև որ մաքուրն է գալիս և ծորակի ծայրին ամրացնում պոմպի խողովակի ծծող մասը, որը լաւ է եթէ ապակեայ վերջաւորութիւն ունենայ, որ տակառի գինին վերջանալու վրայ միջից երևայ նրա պղտորութիւնը։ Պոմպի միւս կողմից ամրացնում են շապտող կամ մղող մասը, որի ծայրը վերջանում է պղնձէ ծորակով, որը գնում են գատարկ տակառի բերանին և սկսում գինին միել մինչև տակառի լցուելը։ Պոմպով գինի յետ ածելուց հարկաւոր են երկու հոգի, մէկը պոմպի ճախարակը պտտող, միւսը տակառի մօտ հսկող, որ լցուելուց իսկոյն իմաց տայ և ծորակը փակէ։

Պոմպի առաւելութիւնը նրա մէջն է, որ 20 բուպէտում կարելի է 100 վերո գինի տեղափոխել, օդը նրա վրայ քիչ ազդեցութիւն ունի և պոմպով հարաւոր է առանց նեղութեան գինին հեռու և մօտ տեղ

փոխադրել վերևից ներքեւ կտմ ներքեց վեր և բան-  
տրը այնպէս չէ յոգնում ու զինին չէ թափւում,  
ինչպէս այդ լինում է վեղբաներով կրելու ժամանակ:

7. Սիմոնով զինու յետ ածելը:

Սիֆոնով զինին յետ ածելու համար անհրա-  
ժեշտ է, որ լիքը տակառը աւելի բարձր դրուած  
լինի քան այն ամանը, որի մէջ պիտի զինին դարտ-  
կենք: Սիֆոնով տեղափոխելուց նրա խողովակի մի-  
ծայրը կախում են լիքը տակառի մէջ և կախում այն-  
քան, որչափ ենթադրում են, որ պարզ պիտի լինի,  
յետոյ ծածկում են խողովակի ծայրի ծորակը, սիֆոնի  
վրայ շինած կողմնակի փոքրիկ խողովակով ծծում  
ներաի օդը, հէնց որ զինի գալիս է բերանը, կապում  
են այդ փոքրիկ խողովակի բերանը, ծորակը բանում  
և զինին ծորում է գրուած ամանի մէջ:

Վերջին ժամանակներս մեծ գործածութեան մէջ  
է և կառւչուկի խողովակը, թէ չաներից և թէ տա-  
կառներից զինի դարտկելու համար: Տակառից զինի  
տեղափոխելու համար խողովակը կապում են փայտի  
երկար ծողիկի, 2—3 մատ բարձր վերցրած, որ  
դիրար ներս չմտնէ և մտցնում տակառի մէջ մինչև  
ծողը յատակին դիպչելը և միւս ծայրից օդը ծծելով  
զինին բաց թողում ամանի մէջ:

Տակառից շիշեր լցնելու համար գործ են ածում  
հաստ պատերով կառւչուկի բարակ խողովակ, թոյլ  
պատերովը ծոծուում է և օդը քաշելուց՝ պատերը  
իրար կպչում:

8. Կառւչուկի խողովակը ծակուելուց՝ նրան կա-

րելի է կարկատել հետեւեալ կերպով: Վերցնում են  
մի կտոր կառւչուկ, մանր կտրատում մի շիշի մէջ  
լցնում և վրան խորոֆորմ ածում: Խորոֆորմից  
կառւչուկը կակդում է խմորի պէս մի զանգուած  
դառնում: Այդ խմորը բարակ շերտով քսում են փչա-  
ցած տեղին, որը նախապէս տաքացնում են հարթու-  
կով: Երբ առաջին շերտը պնդանում է, երկրորդն են  
քսում և ապա երրորդը: Վերջին անգամներին տա-  
քացնելու պէտք չկայ:

9. Գինու դիրտը կամ մրուրը:

Գինիները յետ ածելուց, տակառների տակը միա-  
ցած պղտոր մասը պէտք է մի ծխած տակառի մէջ  
հաւաքել և մի քանի շաբաթ թողնել որ պարզի: Պար-  
զելուց՝ նախապէս մի բարակ ճիպոտի ծայրի փոքր  
մեխով մի տախտակ են կպցնում և կոխում մէջը  
դիտելու թէ թանձր մասը որտեղից է սկսում և այդ  
ուղղութեամբ ճակատից ծակելով ծորակ դնում և  
պարզը հանում: միացած պինդ կամ թանձր տական-  
քը կարելի է գործադրել օդու համար:

Գլ. XVII.

ԳԻՆՈՒ ՏԱՔԱՑՆԵԼԸ (ՊԱՍՏԵՐԻ ԶԱՅԻՆ) ԵՒ ՄԱ-  
ՐԱՆ ՈՒ ՌԵՎԵՆ ՈՒ ԵՎԵՆ:

Ա. Գինու տաքացնելը:

Ֆրանսացի յայտնի գիտնական Պաստերի 1863թ.  
պինու վրայ արած հետազօտութիւնները ցոյց տուին,

որ այն բոլոր հիւանդութիւնները, որոնք առաջանում են գինու մէջ—ինչպէս քացախելը, դառնանալը, թանձարանալը, շուռ գալը, բոլորը հետևանք են այն մանրադիտական սունկերին, որոնք մտնելով գինու մէջ նրա հաշեով սննդում, զարգանում են և նրա միջի այս ու այն տարրը լուծելով՝ հետզհետէ փչացնում։ Պատեօրը գտաւ, որ առողջ գինին թէկուզ մի վարկեան տաքացնելով 55<sup>0</sup> Ց. կամ 44<sup>0</sup> Ռ. կարելի է այդ սունկերի վնասակար ազդեցութիւնից ազատել, իսկ արդէն հիւանդ գինիները տաքացնելով՝ սունկերը փչացնել և հիւանդութեան առաջ զնալը կանգնեցնել. սակայն յետոյ եղած փորձերը ցոյց տուին, և այժմ ընդունուած է, որ աւելի նպատակայարմար է գինին 65—70<sup>0</sup> Ց. կամ 52—56<sup>0</sup> Ռ. տաքացնել 1—2 րոպէ, որովհետեւ այդ ժամանակ շատ դիրտ է գինու տակը նրանում և այն ըստ մէծի մասին սպիտակուց, որը այս ու այն մակաբոյծի համար լաւ մնունդ է կազմում։

Առհասպարակ մի գինի որչափ առատ սպիտակուց ունի, այնքան նա շուտով է հիւանդութեան ենթարկում, ուստի տաքացնելուց յետոյ երբ հետացնում ենք դիրտից, նա աւելի դիմացկուն է դառնում։ Բացի այդ, տաքացնելու մի առաւելութիւնը ևս նրա մէջն է, որ գինին, համը առնելուց՝ թւում է թէ մի երկու տարով նա հնացել է։

Եթէ գինին տաքացնենք և տաք տաք օդի ազդեցութեան թողնենք, նա կվորցնի իր անուշահոտութիւնը և համը դէպի վատը կփոխուի։ Դրա համար տաքացնելուց պէտք է հետեւել նախազգուշութիւնները. 1) շատ կարճ միջոց տաքացնել և այն ոչ

բարձր քան 56<sup>0</sup> Ռ. և 2) նրան սառեցնել առանց օդի նելդործութեան ենթարկելու մի երկու աստիճան բարձր, քան որ գինետան տաքութիւնն է։ Այդ բանը կարելի կատարել այս ու այն կատարելագործուած գործիքների միջոցաւ, որ այժմ տալածուած են արտասուհմանում և ոչ մի դժուարութիւն չկայ մեզանում ևս պատրաստել տալու։ Ամենահասարակ գործնական և աժան ապարատը այդ լէյքէնֆրոստինն է, որը բաղկացած է հետեւել մասերից. ա. ընդունարանից, բ. մի տակառից, որի մէջ օձապտոյտ խողովակ է անցըած, և գ. վառարանի վրայ դրուած կաթսայից, որի մէջ մտնում է օձապտոյտ խողովակի մի մասը և գինին նրա մէջ տաքանում։ 1. Ընդունարանը՝ որ մի հասարակ չան է գետնից շատ բարձր դրուած, ունի ներքեկի կողմից ծորակ, որին անց են կացնում կառուչուկի խողովակ և ծայրը բերում տակը դրուած տակառի մէջ մտցնում, որի մէջ օձապտոյտ խողովակն է։ Մեծ քանակութեամբ գինի տաքացնելու համար ընդունարանից տաքացնելիք գինին բաց են թողում այդ տակառի մէջ, որ գալով լցուում է և վերի կողմում մի ուրիշ խողովակով գնում է վառարանի վրայ դրուած տաք ջրով լի կաթսայի մէջ պտոյտ պտոյտ պտոյտ անելով տաքանում և վերադառնում նորից նոյն տակառը և պտոյտ անելով սառչում, գնում ներքեկից կառը և պտոյտ շանի կամ այլ ամանի մէջ. դուրս գալիս և թափւում շանի կամ այլ ամանի մէջ. խողովակները շինուած են անագից (ՕԼԵՅՈ)։ Վառարանի կաթսայի ջրի տաքութիւնը չափելու համար նրա մէջ կախում են ջերմաչափը, մի ջերմաչափ էլ դնում են կաթսայից դուրս եկող գինով տաքացած

իողովակի վրայ և հսկում, որ ջուրը որոշ տաքութեան լինի միշտ և միաժամանակ խողովակի վրայ դրած ջերմաչափը նոյն աստիճանին կանգնած. արտասահմանեան աւելի կատարելագործուած ապաւրատները, ինչպէս Շանցերի, Նէյկոմի, Ֆիալայի և այլոց, կարելի է ձեռք բերել Թիֆլիզի մի երկու ֆիբրմաների միջոցաւ, միայն դրանք պէտքական են մեծ գինետներում, ուր մի քանի տասնեակ հազար վեղրօ գինի են պատրաստում:

Գինին տաքացնելուց յետոյ տակառները լցնելով՝ գլուխները փակում են և մի շաբաթ թողում։ Մի շաբաթից յետոյ տակառի վերևից վերցնում են գինին փորձի համար, եթէ նա պարզում է, գլխները լցնում են և մի ամսից միայն տեղափոխում թեթև ծխած տակառների մէջ, իսկ եթէ պղտոր է, մի 7 օրից նորից վերցնում են փորձի համար, եթէ դարձեալ պարզելու նշան չէ երեսում, փորձում են մի մի կաթիլ ձկան սոսինձ, սպիտակուց կամ տանին տեղացնել փորձի համար բաժակում վերցըրած գինուն և խառնում, մի ժամից փորձի որ գինին սկսում է պարզուելու նշան ցոյց տալ, այն նիւթից էլ նրան պիտի աւելացնել ու ապա տեղափոխել։

Նոր ձերմակ անտափակ գինիները տաքացնելուց յետոյ առատ տականք են թողնում, մինչև անգամ 3 ամսից յետոյ էլ չեն պարզում։ Այդպիսի գինիները տաքացնելուց առաջ պէտք է ամեն 10 վեղրօյին 3 զօլոտնիկ տանին աւելացնել և լաւ խառնել։ Տանինը սպիտակուցային նիւթի հետ խառնուելով՝ տակն է նստում և շուտով պարզում։ Կարմիր գինիները

առհասարակ չեն տաքացնում. տաքացնելուց գոյնը թուչում է։ Սոյնպէս հարկ չկայ և ընտիր ու անուշահոտ գինիների տաքացնելը։

2. Շիշերով գինի տամացնելը։

Եթէ գինին շիշերով է, տաքացնում են կաթսայում կամ վաննայում. զրա համար յատուկ զամբիւղ են շինում, շիշերը մէջը գլխները վեր շարոտում, զամբիւղի տակից անկիւններում երկու վերշոկաչափ փայտէ ոտիկներ դնում, որ զամբիւղը կաթսայի յատակին չգաչի, ապա նրա մէջ այնքան ջուր են լրցնում, մինչև որ գալիս է շիշերի պոունդին համում. Կաթսայի տակը վառում են և ջուրը տաքացնում մինչև ուզած աստիճանը։ Երբ ջերմաչափը, որ ջրով լիբը մի շիշի մէջ դրած պիտի լինի միւս շիշերի հետ, ցոյց տւեց 52—55° R. վերցնում են և ուրիշ շիշեր նոյն ձևով տաքացնում, նախապէս սառեցնելով միշի ջուրը։ Շիշերով գինի տաքացնելուց՝ պէտք է շիշը 3 մատ թերատ լինի և խցանը լարով լաւ պնդացրած։

բ. Գինու սառեցնելը։

1. Գինին լաւացնելու միջոցներից մէկն էլ բացի շիրային շաքար խառնելը, սառեցնելն է, որով առանց արտաքին միջոցի դիմելու գինու թնդութիւնը բարձրանում է և նոր յատկութիւններ առաջ գալիս։ Սառեցնելու համար տակառները սաստիկ ցրտերին (այսպներին) հանում են դուրսը, մէկ մէկուց քիչ հեռաւորութեամբ շարում բոլորովին բաց տեղ և հիւ-

սիսահայեաց, խցանները թեթև դրած բերանին և  
քիչ թերատ, որ սառչելով երբ գինու ծաւալը մեծա-  
նում է տեղ լինի և վսաս չհասնի տակառին։ Վեց  
աստիճան ցրտութեան ժամանակ սկսում է տակառի  
երեսին բարակ սառուց կապել, որ հետզհետէ զնա-  
լով հաստանում է. մի քանի գիշեր եթէ 9 աստիճան  
ցրտութեան մէջ մնաց կամ մի երկու գիշեր 15 աս-  
տիճան, այդ բաւական է և գինին պիտի հանել ա-  
ռանց թողնելու, որ ցրտութեան աստիճանը 6-ից  
նուազի, որով սառուցը հալում է և գինուն խառ-  
նուելով՝ փչացնում։

2. Գինու հանելը։ Գինին տակառից հանելու  
համար մեծ զգուշութիւն է հարկաւոր, որ տակառը  
չշարժուի, միջի սառուցը չփշրուի և գինուն խառնուի։  
Գինին հանում են ծորակի միջոցաւ և այդ թողնում  
շիրատանը կամ մի այլ ցուրտ տեղ և մի վեց շաբա-  
թից, դիրտը հեռացնելուց յետոյ, փոխազրում գինե-  
տունը։

Այդ յետածելու ժամանակ տակառը պիտի չծխել  
որ ներսը չտաքանայ և գինուն վնասէ։

Նոր գինին սառեցնելուց, լաւ է առաջին դիրտից  
հեռացրած լինի։

Տակառից սառուցը հանելու համար ճակատի  
տախտակը պիտի բանալ։

Այսպէս սառցրած գինին ճիշտ է թէ և կորցնում  
է իւր գոյնը, իւր քանակութեան մի մասը, բայց  
միւս կողմից թնդանում է, համը լաւանում, աւելի  
քիչ ենթակայ լինում հիւանդութեանց և քիչ դիրտ  
կապում։

Գինու սառեցնելը անհաշիւ պիտի չկատարել։  
այստեղ աչքի առաջ պիտի ունենալ երկու բան, նախ  
նիւթական շահը, որ գինու մի մասը կորցնելով ստա-  
ցած օգուտը պիտի փոխարինէ և երկրորդ՝ գինու  
դրութիւնը. օրինակ եթէ գինին շատ հասարակ է և  
շուտով ծախու պիտի հանուի՝ հարկ չկայ սառեցնե-  
լու, ինչպէս և ընտիր գինիները, որոնք առանց այդ  
էլ իրենց յարգը ունին, լաւ չէ նոյնպէս սառեցնել  
շատ թթու և ուրիշ համ տուող գինիները, որից աւելի  
ևս փշանում են. միայն լաւ է այն գինիները սառեց-  
նել, որոնք խառնուրդ են տեսակ տեսակ գինիների,  
շաքարած են, եփ գալու ենթակայ, թոյլ և չնայելով  
խաղողի ընտիր տեսակին՝ տարուայ անյաջողութիւ-  
նից վնասուած։

3. Գինու արեի առաջ դնելը։ Արեի առաջ  
գնելու նպատակն է նրա հասունութիւնը առաջ ձգել։  
Գինին արդարե ամառը մի քանի ամիս արեի տակ  
թողնելով՝ նա մի տարով առաջ է ընկնում հսութեամբ։  
Արեի առաջ շարքերով դնում են թունդ, ոչ պակաս  
քան 17 աստիճան թնդութիւն ունեցող գինու տա-  
կառները. որչափ ամանները մանը լինին, այնքան  
ուժեղ կլինի արեի գինու վրայ արած ազդեցութիւնը,  
հետևաբար և շուտով նա կհասդնանայ։

Գինիների ուղղելը կամ խառնուրդը։

Ոչ միայն վազի զանազան տեսակները մեզ  
տալիս են զանազան արժանաւորութեամբ, զանա-

գան համերով գինի, այլ և հողի կազմութիւնը, նրա դիրքը, մշակութիւնը, կլիման, տարուայ եղանակը և նոյն իսկ շիրայ պատրաստելու ձեր կարող է շատ փոփոխութիւնների ենթարկել նրան, այսպիսով մի գինի յաջողուած է լինում շատ ու քիչ, երբ նրա մէջ բոլոր մասերը ներդաշնակ են, այնպէս որ ախորժանք է պատճառում խմողին, իսկ միւսը թերի և պակասաւոր, որ մարդը զեղջ է զգում խմելուց և առանց համեմելու, առանց խառնուրդի կարծիք չկայ, որ նա վաճառահանութեան մէջ շատ պակաս արժէք ունի:

Գինու այս բնական պակասութեանց պատճառներն են՝ նրա մէջ եղած հարկաւոր տարրերի պակասութիւնը, այդ տարրերի ոմանց չափազանց գըտնուիլը, գեանից ստացած գինու անախորժ համերը, կոշտութիւնը կամ բերանի տաշելը, երբ խաղողը խակ է քաղուած և վերջապէս տակառի կամ ճաճի համը, երբ երկար ժամանակ շիրան ճաճի հետ եփ է գալիս գինու պակաս տարրերը ուղղելու համար անհրաժեշտ է գինիների խառնուրդը, որը լինում է այսպէս.

Եթէ գինին ալքօօլ քիչ ունի, նրան թոյլ (թօշ) անունն ենք տալիս, թէն համը տեղը ունենայ. դրան կարելի է ուղղել սպիրտ խփելով կամ թունդ գինի խառնուրդ անելով մինչև որոշ աստիճան:

Թոյլ գինու մէջ պակասում է շատ անգամ և գոյնը, որ պէտք է մգացնել սկ գինու խառնուրդով. պէտք է խուսափել այն արհեստական ներկերից, որ գործադրում են շատերը շահախնդրութիւնից, շա-

տերն էլ չհասկացած: Կովկասի գինին կարօտութիւն չունի դրանց, քանի որ բնական սկ գինիները առատ են մեղանում, իսկ ճերմակ գինիները ճաճի հետ եփ տալով բաւականին մուգ ճերմակ գինիներ ունենք, իսկ չեղած տեղերում գոյնը կարելի է մգացնել այրած և լուծած շաքարով, եթէ այդ է պահանջը:

Երբ մի գինի ներկով հարուստ է, նա ծանր է, այն որ շատ տտպութիւն ունի՝ տաշում է բերանը. գրանց կարելի է ուղղել թեթև, աւելի բաց գինի խառնելով:

Մի քանի հասարակ գինիներ թանձր են և անհամ և երկար չեն դիմանում, ուրիշները ընդհակառակն չոր են եւ զոգուն (թթու). առաջինները կարելի է ուղղել թեթև և քիչ չոր գինով, երկրորդը քաղցրացնելով կամ սպիրտ խփելով:

Գինին նայելով հողի կազմութեան, առնում է շատ անգամ և նրա համը. ծովափնեայ կամ պարարտ հողի գինեստանները առհասարակ հողի համ են տալիս և անսովոր մարդին դուր չե գալիս այդ, ուրիշ տեղ ծծումքի համ ունին. գրանց կարելի է ուղղել անուշ գինիով, իսկ ծծմբահամը թէ յաճախ յետ ածելով և թէ զտելու ժամանակ գինին լաւ ծեծելով:

Ակզեռում կոշտ ու կոպիտ գինիները հնանալով լաւանում, ընտիր համ են առնում. բայց եթէ ստիպուած ենք այդպիսին շուտ գործածել, պէտք է խառնուրդ անել հին, թոյլ և լաւ համով գինով, բայց աւելի ձեռնատու է թողնել, որ հնանայ:

Վատ վազից ստացուած գինին, սոյնպէս և ցուրտ ու լեռնային կողմերինը կոշտ են, թթու և թոյլ:

թափել, նորից ողողել պարզ ջրում, որը տակառի կամ այլ ամանի մէջ պիտի լինի և ծորակից գայ և ոչ թէ տաշտի մէջ ածած բոլորի համար, որ պղտորւում է ի հարկէ։ Ներսը և դուրսը այսպէս մաքրելուց յետոյ, շիշերը գլխիվայր պիտի քաղել ցցերի վրայ, որ ջրից մաքրուին և միջի հոտը դուրս գայ։ Շիշեր լուանալու և մաքրելու համար այժմ կան բաւականին յարմար գործիքներ, ոտով ու ձեռքով բանեցնելու։ Դրանք անհրաժեշտ են այն մեծ զինետներում, ուր շիշերով զինու առուտուր ունին։

3. Խցանը մեծ նշանակութիւն ունի շիշի զինու համար. մի վատ խցանը բոլորովին փչացնում է զինին, ինչքան էլ որ նա ընտիր չինի. ուստի որչափ կարելի է պիտի ջոկել լաւերը, որոնք ծակծկոտ չեն ու փչացած և երբէք ինայողութիւն չանել։ Այդ խցանները մի օր առաջ տաք ջրի մէջ պիտի զնել, որ փափկին, ուռչին և բանեցնելուց ցուրտ ջրով ողողել, իսկ ընտիր զինիների համար կիսից սպիրտի մէջ թաթախել։

4. Շիշեր լցնելը եւ պնդացնելը։ Ամեն բան նախապէս պատրաստելուց յետոյ, շիշերը տանում են զինետունը և տակառի մօտ տեղաւորում. գործողութիւնը արագ կատարելու համար երկճիւղ կամ բազմաճիւղ ծորակ պիտի բանեցնել կամ կառչուկի խողվակներ, որոնք ուղղակի մտնում են շիշերի բերանը և աղատում ձագառի տուած թէ վնասից և թէ չարչարանքից։ Շիշը լցուեցաւ թէ չէ, իսկոյն պիտի խցանը պնդացնել և չթողնել օդի հետ շատ յարաբերութիւն ունենայ։

Պնդացնելը լինում է կամ ձեռով և կամ խցանափակ մեքենայով, որով թէ շուտ և թէ կարգին է գնում գործը։

Եթէ զինին տան համար է և շուտ պիտի գործածուի, հարկ չկայ բոլորովին լցնելու և խցանը ամբողջապէս կոփելու, բաւական է կէսը, որ կարելի լի լինի ձեռքով հանել և միւս անգամ ևս բանեցնել. բայց եթէ երկար պահելու կամ հեռու տեղ ճանապարհելու համար է, ամբողջապէս պիտի լցնել և խցանի ու զինու մէջ շատ անշան զատարկութիւն թողնել. այդպիսով թէ գոլորշիացումը քիչ կլինի և թէ լիսկանարուիլը, որից միշտ վնասում է զինին։

Բացի այս, խցանը զինետան խոնաւութիւնից, միների և որգերի յարծակումից պաշտպանելու համար լաւ է զանակով աւել մասը կարել, լաք կամ զմուռ քանել և այնպէս տանել շարել։

5. Շիշերի օարելը։ Շիշերը շարում են շիշատանը, բոլորովին փորի վրայ ընկած, գրա համար յատուկ պատրաստած ձողիկների վրայ։ Այդ ձողիկների երկու ծայրերին պէտք է փոքրիկ սեպեր ամրացրած, որ շիշերը չմթափուին. շիշը շարում են մէկ ու մէջ, այսինքն մէկի բերանին կից է միւսի հաստ կողքը. մի կարգ այսպէս շարելուց յետոյ նրանց վրայից դնում են երկու ձող և նոյն ձեռով շարում ինչքան որ հարկաւորութիւն կայ։ Շիշեր գարսելու համար մեծ զինետներում շինում են երկաթէ վանդակածն պահարան, մէջը մի քանի բաժանմանքներով և իրեն գոնակով, որը կողպւում է։ Շիշերը երկար անվասպ պահելու համար կարելի է գարսել և արկղներում և

արանքը չոր աւագ լցնել։ Շիշերի տեղը շատ տաք չպիտի լինի, լաւ է 14<sup>0</sup>—16 R.

Այսպիսի պայմանների մէջ թողնելով գինին, զարգանում է, մի քանի տարուց այնպիսի նուրբ համ ու հոտ է առնում, որ ամենեին չէ պատահում այդ տակառի մէջ եղած ժամանակ։ Շիշեր լցնելու գինին առնուազն տարին անցած պիտի լինի։

6. Շիշի գինու յետ ածելը։ Շիշի մէջ գինին երկար մնալով, ինչքան էլ որ պարզ չլինէր, այնուամենայնիւ դիրտ է թողնում, որ շարժելուց կարող է խառնուիլ և պղառիլ, ուստի այդպիսի գինին, գործածելուց կամ այլ տեղ փոխադրելուց առաջ, պիտի դիրտից հեռացնել զգուշութեամբ։

Դիրտից հեռացնելու համար յատուկ գործիքներ կան, օրինակ երկու քիչ թեք դրութեամբ արկղներ, որոնք տակից միացած են կոճակով—մէկը շարժական է, միւսը անշարժ։

Շարժականի մէջ դնում են լիքը շիշը հորիզոնական կերպով բռնած, ինչպէս որ շարած էր, իսկ անշարժի մէջ դատարկը դիմացէ դիմաց։ Խցանը հանելուց յետոյ, իսկոյն երկուսի բերանն են մտցընում մի խողովակ, որի երկու ծայրերը ծակ խցանեն եր ունի և մէջ տեղից մի ծորակ (կրան), որ ուղած ժամանակը փակում է անցքը։ Այդ խողովակը պնդացնելուց յետոյ, ծորակը բանում են և շարժական արկղը կամաց կամաց բարձրացնում կամ ձեռով կամ նրա տակ հաստատած նեցուկով։ գինին խողովակով լցւում է դատարկ միշտ և երբ մօտենում է վերջին բաժակին, որ միշտ պղառը է լինում, ծո-

րակը փակում են և խողովակը հանում։ Առանց այս ու այն գործիքի ևս կարելի է շիշը շիշ դատարկել հին գինին, միայն դրա համար որոշ հմտութիւն և զգուշութիւն է պէտք։

7. Շիշերի չափը եւ չաըր։ Շիշերի երկայնութիւնը լինում է 7—9 վերշոկ, իսկ հաստութիւնը  $1\frac{3}{4}$ — $2\frac{1}{2}$  վերշոկ։ Կէս շիշանոցին՝ երկարութիւնը  $5\frac{1}{2}$ — $6\frac{1}{2}$  վերշ։ հաստութիւնը  $1\frac{1}{2}$ —2 վ։ Քաշը  $1\frac{1}{2}$  կնտ. բովանդակութիւնը  $\frac{1}{16}$ — $\frac{1}{20}$  վերո, այն է մի վերո գինին լցնում է 16 կամ 20 շիշ։

#### Գլ. XX.

«Գինու արժանաւորութիւնը պէտք է չափել իւր գոյնից, պարզութիւնից, համից, հոտից և թնդութիւնից»։

1. Բայց այդ արժանաւորութիւնը հասկանալու համար նախ փորձառութիւն է հարկաւոր և երկրորդ առողջ կազմուածք ընարողի կողմից։

Սովորաբար մի գինու վճիռը տալու համար չպէտք է բաւականանալ երեք բառով։ լաւ է, վատ է կամ միջակ է ասելով, հմուտ գինեճանաչը համը լաւ տեսնելուց յետոյ, վերլուծութեան տակ է ձգում և նրա ամեն մի տարբերը կշռում իւր մտքում, լաւ և վատ կողմերը մէջ տեղ բերում և այսպէս ասած գինու ներկայ գրութիւնից եզրակացնում ապագան և ապա թէ մի վճիռ տալիս։ Գինի ջոկողից բացի հրմտութիւնը, ինչպէս ասացինք, պահանջւում է առողջութիւն եթէ ոչ սուամոքսի, գոնէ աչքի, քթի և

Եղուի, աչքով գինու պայծառութիւնը պիտի որոշէ, քթով նրա հոտը, բուկետը և լեզուսվ համը, առանց այդ երեք զզայարանքների միշտ թերի է դինեճանաչութիւնը: Բացի այս բռնութաքաշը, ծխախոտ քաշողը, խարփուխոտը պիտի զգուշանայ գինուն վճիռ տալուց և ասպարէզը ուրիշն թողնէ:

2. Համը տեսնելը պիտի լինի միշտ ճաշից առաջ քիչ գատարկ փորով, որ աւելի զզալի լինի զինու բարակութիւնները: Համը տեսնելը լինում է այսպէս. զինին համդարտ ածում են արծաթէ փոքրիկ գաւաթի մէջ կամ մի մաքուր բաժակ կիսից և պարզութիւնը լաւ զիտելուց յետոյ, զլուխը կուացնում, բերանը լուալու ձեռվ բռնում և զինին վեր քաշում նախ բերանի առաջին մասը, ուր յայտնի է լինում նրա քաղցրութիւնը, թթւութիւնը և այլ համերը, որոնք եթէ ներդաշնակ քանակութեամբ են՝ հաճոյք են բերում և ոչինչ կծու համ չեն թողնում բերանում: Ապա զլուխը պէտք է բարձրացնել դէպի յետ և զինին գնում է բերնի յետին խորշը, այդ տեղ որոշնում է նրա թնդութիւնը, կամ թուլութիւնը, հողի, տակառի համը, զառնութիւնը և անհամութիւնը:

Ելք այդ տեղ ևս ոչինչ անախորժ զգացմունք չթողեց, պիտի իսկոյն չթափել բերանից, այլ կուլ տալ, կուլ տալից զինին երբ ողողում է կատիկը և անցնում որկորը, հոտը իսկոյն քթափուերին է դիպչում և նոր հաճոյք կամ տհաճութիւն պատճառում:

3. Եթէ մի զինի պարզ ու պայծառ է, գոյնը պլալուն, համը տխորժ և բերանի առաջի մասում

թթւութիւնը, քաղցրութիւնը կամ տապութիւնը ներդաշնակ ու դուրեկան, իսկ բերանի ետևի մասում թնդութիւնը զգալի, և կուլ տալուց կամ թէ առանձին հոտ առնելուց տալիս է իւր բուրմունքը—բուկետը, ապա այդ զինին ընտիր է և կտարեալ բայց երբ դրանցից մէկը կամ մի քանիսը պակասում են, այնքան ևս զինին անկատար է համարւում և իւր արժէքը պակսեցնում: Դինի ընտրողը այդ ամեն մանրամասնութիւնները իւր յիշողութեան մէջ պիտի պահէ և բերանը ողողելուց յետոյ մի ուրիշը ձեռնարկէ և համեմատութիւն կազմելով՝ վերջը իւր ընտրութիւնը անէ:

Այս էլ յիշենք, որ զինին քանի նոր է, նրան դժուար է ճանաչել, առնուազն կէս տարին անցած միայն կարելի է լաւ գտղափար կազմել նրտ ինչ դառնալուն:

4. Եթէ մի քանի տեսակ զինիներ կան համը տեսնելու համար, առաջ պէտք է ճերմակին տեսնել յետոյ կարմրին, առաջ սովորական սեղանի զինիներին և յետոյ քաղցր կամ լիկեօրնի զինիներին: Փորձի համար զինին պիտի հանել տակառի միջի մասից և ոչ վերեկից կամ տակից, վերեկում զինին թոյլ ու քնքոյշ է, իսկ ներքեռում թունդ և տախու: Ի նկատի պիտի ունենալ ա. որ զինետան մէջ զինին աւելի համավ է թւում, քան սենեակում, բ. կապուտի տւոզ կարմիր գոյնը ցոյց է տալիս, որ զինու մէջ քիչ ազատ թթւութիւն կայ. գ. եթէ զինուց սպիրտի հոտ է փչում, այդ գեռ չէ նշանակում, որ նրան արհեստական կերպով սպիրտ են խփել, որովհետև թէ 15—18%

թնդութիւն ունեցող գինիները և թէ մի քանի  
8—12% նոր գինիներ նոյն հոտն են փշում. դ. փորձի  
գինին 8—10% R. տաքութեան պիտի լինի, ոչ շատ  
ցուրտ և ոչ տաք. ե. ամեն փորձից յետոյ թէ լիվերը  
և թէ բաժակը մաքուր պիտի լուանալ կամ ուրիշ  
բաժակ վերցնել:

Գլ. XXI.

ԳԻՆՈՒ ՃԱՆԱՊԱՐՀԵԼԸ:

1. Նոր զինի ճանապարհելը: Երբ հարկ լինի  
վրա կամ նոր զինի ճանապարհել, այն որ գեռ եփ է  
գալիս, տակառը լցնելուց յետոյ պիտի գազահան  
խցանով պինդ փակել, որ գազը մեջից դուրս գալու  
տեղ ունենայ և ամանը չվասի. գազահան խցան  
չունենալուց՝ յարմար է այդ բանին և սպիտակ թի-  
թեղից շինած փոքրիկ ձագառները (ուահաթի), որոնց  
երկուաը լայն կողմերով միացած մի ամբողջն են  
կազմում. դրա մի նեղ խողովակը անցնում են խցանի  
միջից տակառի ներսը, այնինչ միւսը օդի մէջն է.  
զինին լիկահարելուց՝ լցում է ձագառի լայն մասը և  
առանց թափուելու կրկին իջնում, իսկ գազը իւր  
աղատ ճանապարհը ունի:

2. Հին զինի ճանապարհելը: Հին կամ եփը  
վերջացած գինին երբ ուզում ենք ճանապարհ ձգել,  
տակառը լաւ լուանալուց ու լցնելուց յետոյ խցանը  
մաքուր քաթանի կտորում փաթաթած՝ պնդացնում  
են և աւել մասը ուրագով տաշում, վերցնում. այդ

խցանի երեսը կաւացեխով լաւ ծածկում են կամ  
կանեփի թոկը քանդած, ցւցւած կնում վրան և վրայից  
մի քառակուսի վերշոկ մեծութեամբ սպիտակ թի-  
թեղից ծածկոց քաշում և մասը բեկոներով լաւ  
պնդացնում. Տակառը եթէ հեռի տեղ պիտի գնայ և  
այն էլ շոգերին, լաւ է նրա երկու ճակատներին մի  
մի մատ հաստութեամբ գաճ ծեփել, որ արեից պաշտ-  
պանուած լինի. միւնոյն ժամանակ այդպէս ծեփածը  
մաքուր տեսք ունի:

Տակառի ճակատին պիտի մուրով նշանակած  
լինի համարը և գինետան կամ ֆիրմայի անուան  
ոկրնատառերը:

Տակառը թէ դատարկ միջոցին և թէ լցնելուց  
յետոյ պիտի կշռել, քաշն իմանալ և նշանակել: Ճա-  
նապարհելու գինին յետ ածած և թեթև զտած պիտի  
լինի, եթէ թնդութիւնը պակաս է սպիրտ խփած կամ  
գառնիճ աւելացրած, որ կարողանայ դիմանալ շոգե-  
րին:

Շատ անգամ զտում են և իսկոյն ճանապարհում,  
բայց տեղ հասնելուց մի 15 օր հանգիստ պիտի տալ  
և ապա յետ ածել:

3. Շիշի զինին: Շիշերով գինի ճանապարհելը  
աւելի աշխատութիւն է պահանջում. եթէ այդ գինին  
հին է և վաղուց շիշի մէջ ածած, առաջ դիրտից  
պիտի հեռացնել. եթէ նոր ենք լցնում շիշը, ուղղակի  
տակառի ծորակից պիտի ածել և իսկոյն պնդացնել:

Խցանի և գինու մէջ գրեթէ դատարկութիւն  
պիտի չթողնել, որ գինին մէջը չլիկահարուի. խցանի  
վերևից կամ արձձէ սիրեկ (կապսիկ) պիտի քաշել

կում զմուռով և կամ թէ չէ լաքով մինչև շրթունքը ծածկել. զրա համար զմուռը կամ լաքը կրակի վրայ նախ հալեցնում են և առանց թողնելու որ սառի, շիշի բերանը ուղղահայեաց թաթախում մէջը և վերցնում կնիք խփում և գնում մի կողմը:

Սրճճէ սիրեկով ծածկելը լինում է զրա համար յատուկ գործիքով կամ ձեռով, ձեռքով անելուց՝ սիրեկը շիշի բողազի վրայ պիտի ոլորել նախ ձեռով առլա շաքարի քողի միջոցաւ, որի մի ծայրը սեղանից կապած պիտի լինի: Այդ աշխատութիւնից յետոյ որբում են կողքերը և կպցնում վերագիրը, որի վրայ պիտի նշանակուած լինի գինու տեսակը, տեղը և գինետիրոջ անուն տպանունը. վերագիրը կպցնում են կրախմալով և կամ ժելատինով և կամ ծառի խեժով (սատանի մաստաք, զառղա ծամոն):

Շիշի վերաբերեալ այդ գործողութիւններից զինի թղթում փաթաթում են և ապա ծոստով կամ չոր խոսով պնդացնում արկղում, այնպէս որ կողքերը մէկ մէկու չզփաշին, փշրուին: Վերջերս մեծ գործածութեան մէջ են ծզօտից գործած փաթեթները (չեխլի), որ հազցնում են շիշերին և գարսում արկղում:

Արկղը լցուելուց յետոյ, երեսը լաւ ծածկում էն, մեխերը խփում և հասցէն զբում:

4. Արկղի չափոր: Արկղի չափոր կախուած է ժիշերի քանակից և մեծութիւնից:

Պէտք է վերցնել արկղը

	երկայն՝	բարձր՝	լայն՝
6	շիշերի համար	10 $\frac{1}{2}$	վերշ.
12	"	10 $\frac{1}{2}$	վերշ.
24	"	10 $\frac{1}{2}$	վերշ.
50	"	15	10

5. Հեռի տեղ վոխադրութեամ ազդեցուրիւնը գինու վրայ: Փոխադրութիւնը օգտակար ներդրծութիւն ունի թունզ գինիների վրայ, իսկ թոյլերին ընդհակառակը չեսի տեղից ստածուած գինին սկըզբում քանի որ նա չէ հանգստացել, դուրեկան չէ, համը փոխած է լինում. որ շուտով վերականգնում է: Յրացից ձերմակ գինին մգանում է, իսկ կարմիրը կորցնում գոյնը: Սաստիկ ցրտերին լաւ է գինի չճանապարհել:

Շիշերով—10<sup>0</sup> R. ցրտերին զինի ճանապարհելոց՝ կարող են շիշերը տրաքուել և գոյնը փոխել:

Գլ. XXII.

### ՊԵՏԻՈՑԻՉԱՅԵԱԿՆ:

(Ս. թեսական կերպով գինու քանակով մեծացնել):

ա. Յայտնի է, որ խաղողի ճաճան, ինչքան էլ լու չմգենք մամուլի տակ, այնու ամենայնիւ նրա մէջ բացի շաքարը, մնացած տարրերից բաւականաչափ մնում է և եթէ այդ ճաճայի վրայ մենք ջուր և շաքար աւելացնենք, կստանանք մի հասարակ դուրեկան զինի, որը կարելի է անվես գործ ածել:

Գործնականապէս այդպէս էլ անում են, ճերմակ խաղողը մամուլի տակ մզելուց յետոյ, առանց երկար պահելու քանդում են, կոշտերը մանրացնում, և վրան որոշ քանակութեամբ 16—20<sup>0</sup> R. տաքացը բած շաքարաջուր աւելացնում և սովորական կարգով եփ տալով՝ քամում: Նոյն ճաճայի վրայ առանց մզելու, կարելի է դարձեալ երկրորդ անգամը շաքա-

բաջուր աւելացնել, դարձեալ եփ տալով՝ գինի ստանալ: Երկու անգամից աւել խուրհուրդ չեն տեսնում ճաճայի վրայ ջուր ածելը: Վերջին անգամը ճաճան պրեսի տակ են ձգում և ինչ որ մզուեցաւ, այդ էլ հաւասար բաժանում են ստացուածի վրայ: Նոյն ձեռվ վարւում են և կարմիր գինու ճաճայի հետ:

Բ. Պետիոտիզացիան կայանում է նրա մէջ, որ կարմիր շիրան սաստիկ եփից յետոյ ծորակից բաց թողնելով, ինչքան հեղուկ որ չանից ստացւում է, վերցնում են, իսկ չանի մէջ մնացած առանց պրեսի տակ ձգելու ճաճի վրայ այն քան 16—20<sup>0</sup> R. տաքացրած շաքարաջուր ածում, և թողնում մինչև լաւ եփ է գալիս և քաղցրութիւնը կորցնելով՝ համանում մօտ 2 աստիճանի, այն է գինի հանելու ժամանակը: Այդ հեղուկը քամում են և եթէ ցանկանում են՝ նորից շաքարաջուր են աւելացնում նոյն չափով և նոյն ձեռվ եփ տալիս, կամ մի անգամ բաւականանալով, ճաճան մզում, դէն ձգում կամ օղի քաշելու գործ ածում: Այս ձեի մի պակասութիւնը նրա մէջն է, որ չմզուած ճաճի մէջ 20<sup>0</sup>/<sub>0</sub> դեռ շիրայ է մնում և թէն այդ չէ կորչում, աւելի է նպաստում երկրորդ տեսակի գինուն, բայց թանգացնում է վերջինիս արժեքը և մի և նոյն ժամանակ առաջին տեսակի գինուն զրկում թէ մեծ քանակութեամբ գոյնից և թէ այլ տարրերից, որ գտնուում են ճաճի մէջ:

Գ. Թէ ինչ քանակութեամբ շաքար պէտք է աւելացնել ջրին, պետիօ կամ երկրորդական գինի ստանալու համար, աչքի առաջ պիտի ունենալ հետեւ հաշիւը:

Կէս գինու. շաքարեղէկի շաքարը եփը վերջանալուց տալիս է 1/10 կվարտ ալքօօլ գինու մէջ կամ 10<sup>0</sup>/<sub>0</sub> սպիրտ: Այդ հիման վրայ, եթէ ցանկանում ենք 10<sup>0</sup>/<sub>0</sub> թնդութիւն ունեցող գինի ունենալ, պէտք է ամեն մի վերջո ջրին 5 գինու. շաքար վերցնել, 12<sup>0</sup>/<sub>0</sub> թնդութիւն ստանալու համար 6 գինու կիս:

Բացի այս աչքի առաջ ունենալ, որ մի վերջո ջուրը քաշում է 30 գինու. որի մի տոկոսը կազմում է 0,3 ք. կամ 28, 8 զօլօտնիկ—կոլոր թւով 29 զօլօտնիկ. ուրեմն 29 դ. շաքարը մի վերջոյին ըստ կշռի կազմում է 1 տոկոս. եթ ցանկանում ենք շաքարի խառնուրդը ունենալ 18<sup>0</sup>/<sub>0</sub>-ի, պէտք է իւրաքանչիւր վերջո ջրին վերցնել (29+18=522) զօլօտնիկ կամ 5<sup>1</sup>/<sub>2</sub> փունտ:

Երկրորդական գինի պատրաստելուց՝ լինի այդ ճերմակ կամ կարմիր, աչքի առաջ պիտի ունենալ հետեւալները. 1) որ որչափ հնարաւոր է ճաճան քիչ ենթարկուի օգի աղեցութեան և շուտով եփ գալը սկսուի:

2. Շաքարի փոխարէն կարելի է մաքուր սպիրտ խառնել, հաշուի առնելով, որ 5 գինու. շաքարին փոխարինում է մի կվարտ սպիրտը, միայն սպիրտ գործածելուց՝ հեղուկը պէտք է 20—24<sup>0</sup> R. տաքացնել, որ շուտով եփը առաջանայ:

3. Կարմիր երկրորդական գինին աւելի լու է է դուրս գալիս քան ճերմակը:

4. Երկրորդական գինին կամ պետին, եթէ 10—12 աստիճանի թնդութիւն ունի, բնական գինու դիմացկանութիւն ունի և համարւում է անպայման առողջարար խմիչք:

ՔԱՅԱԿԱՆ ԵԿԱՆ ԱՐԱՐԱՏԻ ԱՐԱՐԱՏԻ

ԵՐԲ մի գինու մէջ քացախալին թթուն 20/00-ի է  
համսում, այդպիսի գինին անպէտք է խմելու և միայն  
իրբև քացախ կարելի է գործածել: Կանոնաւոր գի-  
նեգործութեան ժամանակ գինու քացախելը հազիւ է  
տեղի ունենում, միայն իրբև հետևանք այս ու այն  
հիւանդութիւնից երբ գինին փշանում է կամ տա-  
կանքներ մնում, կարելի է նրանից քացախ պատրաս-  
տել, որը աւելի թանգ է գնահատում, քան ուրիշ  
սիւթերից պատրաստածը: Քացախի համար քացի  
գառնացած ու ծաղկած գինիները բոլորը պէտքա-  
կան են:

Քացախ պատրաստելու համար մի քանի ձեռք  
կան, մենք կցիշենք միայն հին ձեր, որ ամենից  
հեշտն է:

Քացախ ստանալու համար լցնում են տակառի  
3/4 մասը գինով, նրա մի մասը տաքացնում են այն  
աստիճան, որ խառնելով ընդհանուրի տաքութիւնը  
համսում է 24<sup>0</sup> R. որ աւելի նպաստում է քացախի  
սունկերի զարգանալուն: Տակառի ճակատի վերևում  
1/4 դիւյմ մեծութեան մի ծակ են բանում, իսկ տա-  
կառի վերեկի սովորական ծակը շորով ծածկում և  
մի քանի ամիս այգպէս թողնում հարաւում բակում  
դրած, իսկ աւելի ցուրտ տեղերում—տաք պահես-

տում: Երբ գինին բոլորովին քացախում է կէսից  
աւելին հանում են և նորից մինչեւ ճակատի ծակը  
գինի լցնում և այս շարունակում են մինչեւ որ տա-  
կառի մէջ շատ դիրտ է կապում կամ այլ ևս գինին  
քացախ չէ դառնում մէջը քացախի խաշի (մայի)  
չափագանց շատանալուց:

Քացախի մայան, որը ժամանակի ընթացքում  
գոյանում է կարասում կամ տակառում և մի լուր-  
ծուն թափանի կամ կաշու տեսք առնում, ոչ այլ  
ինչ է, եթէ ոչ քացախի մերսաքը—խաշը (mycoderma  
acetii), որ մեծ քանակութեամբ միմեանց վրայ հա-  
ւաքուելով թանձրանում է, իրար կպչում և ծանրու-  
թիւնից տակը նստում: Եթէ այդ մայից մի կտոր  
վերցնենք և գինու մէջ ձգենք, այդ սունկերը կբա-  
ժանուեն իրարից, կբարձրանան և օդի ազդեցութեան  
տակ կսկսեն քացախեցնել գինին: Երբ քացախը պատ-  
րաստ է, այդ թանձրացած խաշը այլևս պէտք չէ.  
Նրան պէտք է հեռացնել, կամ նոր սնունդ տալ, ապա  
թէ ոչ նա հետզհետէ քացախի հաշւով ազդելով, նրա  
թթուութիւնը վերջանում է, ինքն էլ մեռնում, իսկ  
հեղուկը սկսում է նեխել:

Քացախ պատրաստելու տեղը գինետնից հետի  
պիտի լինի և առանձնացրած, ապա թէ ոչ կարող են  
առողջ գինիները ևս վարակուիլ այս ու այն միջու-  
ցաւ քացախի մերանքից իր մէջ ընկնելով:

Տան գործածութեան համար քացախ պատրաս-  
տելուց, պէտք է վերցնել գինու մնացորդները, պրե-  
սից քամ եկածը, մի քանի անգամ պարզեցնել, ածել  
3—5 վեղրանոց լաւ մաքրած տակառի մէջ և գլխին

3—5 կվարտ լաւ տաքացրած թունդ քացախ ածել,  
տակառը պնդացնել և հարել: Երկու ժամից ճակատի  
վերի մասում, 2—3 մատ տակառի վերի տախտակից  
ցած, ծակ են բաց անում, տակառը դնում տաք տեղ  
խոհանոցի մի անկիւնում, գլուխը լցնում, շորով  
ծածկում ու թողնում: Երկու երեք շաբաթից քա-  
ցախը արդէն պատրաստ կլինի: Դրա մի երրորդ  
մասը հանելով՝ զլուխը պէտք է լցնել և նոյն ձեռի  
թողնել, որ քացախի: Այդ շարունակում են այսքան  
ժամանակ, մինչեւ որ շատ դիրտ է նստում տակը,  
որը մաքրելով, հեռացնում են և տակառը պարզ քա-  
ցախով լցնում ու նոյն ձեռվ շարունակում քացախ  
պատրաստելը:

ԳԼ. XXIV.

ԳԻՆՈՒ ԵՒ ՆՐԱ ՄՆԱՅՈՐԴՆԵՐԻ ԱՅԼ ԵՒ ԱՅԼ  
ԳՈՐԾԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ:

1. Ճանայից օդի հաշելը: Ճանան օդի քաշելու  
համար պէտք է լաւ դարսել չաներում, տակառներում  
կամ ցեմենտի մեծ ամաններում ու թոփմախով  
ճիւտել հաւասարեցնել, զլուխը խփանով ծածկել,  
խփանի վրայից դարձան շաղ տալ և կաւացեխով  
պինդ սւաղել, որ օդի ճետ առնչութիւն չունենայ:  
Երբ կաւը ճաքճքուի, պէտքը մոխիր ածել ճաքերը և  
նորից սւաղ քաշել: Օդի քաշելուց, որ սովորաբար  
ճիւռն է ընկնում, վերցնում են ճանան ածում օդի  
քաշելու կաթսան (արագի զազանը), մօտ  $\frac{3}{4}$  մասը.

Նրա կիսով չափ ջուր ածում վրան, որ դագանի  
տակից չկաչի և մեղմ կրակի կամ փորսունկի մի-  
ջոցաւ օդին քաշում: Փոխանակ ուղղակի ճաճան օդի  
քաշելու, կարելի է և նրան ջրում  $1\frac{1}{2}$  օր թրջոց  
դնել, լաւ մզել և այդ ջուրը քաշելը, որը աւելի  
համով ու մաքուր օդի է տալիս:

Ճանայից օդի քաշելը որչափ շուտ սկսուի, այն-  
չափ ձեռնտու է, թէև այդ կախումն ունի ճաճայի  
թեթև կամ պինդ մզելուց ու մէջը եղած շաքարի  
քանակից: Միջին հաշով մի վեդրօ լաւ պինդ մզած  
ճաճան տալիս է մի կվարտ  $50^0$ -ի օդի: Թեթև մզածը  
տալիս է  $3/4$  կվարտ. նոյն աստիճանի, իսկ աւելի  
թոյլ մզածը՝  $1\frac{1}{2}$  կվարտ.

2. Կոնեակ պատրաստելը: Կոնեակը նոյն օդին  
է, միայն մաքուր ճերմակ գինուց պատրաստած:  
Կոնեակի համար գործ են ածում նոր գինին առաջին  
յետ ածելուց յետոյ: Օդին քաշում են մեղմ կրակով  
հասարակ կամ կատարելազործուած ալպարատով  
 $55^0$ — $60^0$  թնդութեան: Կոնեակի արժեքը բարձրա-  
նում է հնանալով և նրա մէջ որոշ համ ու հոտի  
զարգանալով: Ֆրանսիայում կոնեակը վաճառահանում  
են չորրորդ տարուց սկսած: Ֆրանսական կոնեակները  
պահում են Ռուսաստանի արևմտեան նահանգներից  
ստացած կաղնի տախտակներից շինած տակառներում,  
որը ժամանակի ընթացքում տալիս է իր տախտակ-  
ների գոյնը և կաղնու թթւութիւնը օդուն: Միջին  
թւով մի վեդրօ գինուց ստացւում է  $1\frac{1}{4}$ — $2$  կվարտ  
կոնեակ  $55^0$ — $60^0$ -ի:

ԳԼ. XXV.

ԳԻՆԻՆԵՐԻ ՊԱԿԱՍՈՒԹԻՒԽՆՆԵՐՆ ՈՒ ՆՐԱՆՑ ՈՒՂԴԵԼՅ:

1. ԳԻԾԻՆԵՐԻ ԱՏԱԲԱԼՅ:

Յաճախ պատահում է որ անուշագրութիւնից տակաների կամ չանի մէջ մեխ ու երկաթի կտորտանք են ընկնում կամ ամանները այնպէս են շինուած, որ մեխերի ծայրը մտնում է դինու մէջ և գինին սեացնում. սոյնպէս սեանալը պատահում է երկաթի պոմպերի, ձագառների և այլ ամանեղէնի գործածութեան ժամանակ, երբ նրանք ժանդ են բռնում և խառնում գինուն: Սեացած գինիները կարելի է ուղղել երկար ժամանակ գինին հանգիստ թողնելով ու գիրտից յետ ածելով, բայց աւելի շուտ նրանից ազատուելու համար լաւ է գինին ձուփ սպիտակուցով, և սոսնձով (ժելատինով) գտել. Եթէ գինին բնականաբար քիչ թթւութիւն ունի, նախապէս կարելի է գինու թթւութիւն (ՅՈՒԱՅ ԿԱՇՈՒԱ) աւելացնել:

2. Ճերմակ գինիների գորշ գոյն ստանալյ:

Երբ այգեկութիւն փտած ու առողջ խաղողը միասին ենք հաւաքում ու առանց ընտրելու, ջարդում իրար խառնում և եփ տալիս, այն ժամանակ օդի ազգեցութեան տակ գինին սկսում է գորշ գոյն առնել և զնալով աւելի պղառել ու գորշ գունով տականք գնել: Յետոյ գինին նետքնետէ պարզում է, բայց գարձեալ նրա մէջ մգութիւնը սովորականից աւելի է, համը և հոտը փոխած: Թէ արդարի այդ

գորշ գոյն առնելու պատճառը օդի հետ ունեցած հաղորդակցութիւնն է, դրան ապացոյցը այս է, որ գինին քանի եփ է գալիս ու նրա մէջը գագ կայ, այդ գագը ծանը լինելով քան օդը, ամանի վերի մասը լցնում է, չէ թողնում օդ մտնի ներսը, որից գինին պահում է և իր բնական գոյնը, բայց երբ գագը գուրս է գալիս ամանը թերատում է, գինին էլ թոյլ է և այս ու այն տարրը պակաս, ահա այդ ժամանակ նա թէ գոյնն է փոխում և թէ համը: Եթէ այդպիսի գինուց մի թերատ բաժակ վերցնենք ու թողնենք՝ մի կէս ժամից կնկատենք, որ գինու գոյնը հետզհետէ փոխում է և վերեկց գէպ ներքեմգանում, յետոյ գինին աւելի գորշ գոյն է առնում և համն ու հոտը այնպէս փոխում, որ տակառի գինուն այլ ևս չէ նմանում: Նոյն գործողութիւնը կատարւում է և տակառի մէջ, միայն աւելի դանդաղ ընթացքով:

Եթէ գինու այդ պակասութիւնը սկզբից նկատուի և խոկոյն սկսուի բժշկութիւնը, կարելի տռածը առնել: Դրա համար երկու միջոց կայ:

Եթէ գոյնը փոխելը սկսում է սաստիկ եփից յետոյ անմիջապէս և տակառում բաւականաչափ խաշ կայ (գիրտ), պէտք է խառնել այդ և լաւ հարել, իսկ չեղած դէպքում ուրիշ եփ եկող ամանից նոր խաշ աւելացնել, գաղահան խցանով գլուխը պնդացնել և 10—12<sup>0</sup> R. տաքութեան մէջ պահել: Մեղմ եփը գրանից կարագանայ և երբ գիրտը տակը կնսափ և գինին այնպէս կպարզուի, որ ջրիկ կաթի գոյն չի ունենալ և գինով լիքը բաժակի միջից նայելով, կարելի կինի առարկաները որոշել, գինին յետ են ածում

ծծումք ծխած տակառի մէջ և սովորական կարդով ծխում այն՝ որից թափում են: Այն դէպքում, երբ նկատում են, որ բաժակով վերցրած զինին գոյնը փոխում է, իսկ տակառի մէջ եղածը լաւ է կամ նոր է սկսում, իսկ զինին եփից բոլորովին կտրուել է, յետ են ածում և ծծումբով երկու տակառներն էլ լաւ ծխում, թէ դատարկը և թէ լիքը և մինոյն ժամանակ ձուռվ մաքրում ամեն 10 վեգրին 3 զօլոտ, աղ աւելացնելով:

### 3. Կարմիր զինու գոյնի թռչելը:

Եթէ կարմիր զինի պատրաստելուց շիրայի մէջ շատ փառած ու բորբոսած խաղող է մտել, այն ժամանակ այդ ներգործում է զինու գոյնի վրայ, որովհետեւ օդի աղղեցութեան ենթարկուելով՝ գոյնը չէ լուծում, զինին գորշ գոյն է առնում, պղտորում է և պարզուելուց՝ տակը բաւականին տականք թողնում մէջը շատ գոյն ունենալով, նա կորցնում է իր սիրուն բնական մուգ գոյնը, բացանում, վարդագոյն ստանում կամ դարչինի գոյն առնում:

Եթէ զինին իր գոյնը փոխում է մի բաժակում կամ կիսատ շիշի մէջ, նրան իսկոյն պէտք է յետ ածել դատարկելիք, տակառի ամեն մի 10 վեգրօյի համար  $1\frac{1}{2}$  քառակուսի դիւյմ ծծմբաթուղթ մէջը այրելով: Ճիշտ է ծծումբը թոցնում է զինու գոյնը, բայց շատ աննշան կերպով, այն ինչ ծխելով մենք առաջը առած կինինք գոյնի առանց լուծուելու մնալուն և իբրև տականք գուրս գալուն: Ուրիշ որ և է կտրուկ միջոց չկայ զինու այդ պակասութիւնը ուղ-

ղելուն: Պէտք է ի նկատի առնել, որ կարմիր զինին գոյնը թոցնում է և այն ժամանակ, երբ տակառը կրով լուացած ենք լինում և այդ կիրը մասսամբ կազնու տտպութեան հետ միանալով՝ պնդացել է ներս սում, որը հետզհետէ լուծուելով՝ ներգործում է գինու գոյնի վրայ:

### 4. Գինու բորբոսի համ ու նոտ բռնելը:

Զինին բորբոսի համ ու նոտ է առնում, երբ լցնում են բորբոսած տակառի մէջ, որը պէտք է ասել յաճախ է պատահում այն անտեսութեանց մէջ, որոնք անհոգ են գտնելում ժամանակին տակառը լուանալու և ծխած պահելու, որ չվնասուի: Եթէ զինին քիչ բորբոսի համ ունի, կարելի է ուղղել յաճախ յետ ածելով առողջ տակառի մէջ և տակառները միշտ նախապէս ծխելով կամ նախ ժելատինով գտում են և ապա յետ ածում: Իսկ այն զինիները, որոնք սաստիկ բորբոսի համ են բռնել, նրանք բանի պէտք չեն, մինչև անդամ քացախ շինելու կամ սպիրտ քաշելու, որովհետեւ բորբոսի համը մնում է նրանց մէջ և արժէքը կորցնում:

### 5. Գինին դիրքի կամ փտածի համ սանալը:

Զինու այս պակասութիւնը առաջ է գալիս նրանից, երբ երկար ժամանակ առանց յետ ածելու թողնում ենք դիրքի վրայ: Դիրքը տակառում թանձր շերտով նստելով, տաքանում է և սկսում եփ գալ և դիրքի համը զինուն տալ: Եթէ այդ դիրքի համը աննշան է, կարելի ուղղել տեղափոխութեամբ, ա-

մանը լաւ ծխելով, բայց երբ սաստիկ է, նա պէտք քական է միայն քացախի և սպիրտ քաշելու։ Նոյն փտութեան համը նկատելի է և թոյլ գինիների մէջ, երբ վաղաժամ շիշերի մէջ ենք լցնում և նրանց մէջ սկսում է մեղմ եփը։

#### 6. Տակառի կամ փայտի համը։

Տակառի համը առաջանում է տակառը անուշառիր թողնելուց, երբ ժամանակին չեն լուանում կամ ինչպէս պէտքն է մաքուր լուանում, որով նրա մէջ մնացած դիրտը տախտակների արանքներում չորանալով, երբ գինի ենք լցնում, վաստ համ ու հոտ է առնում։ Գինին տակառի համ առնելը ցոյց է տալիս տնտեսութեան վաստ զրուած լինելը, ծծումը ծխելու և ամանները մաքուր պահելու անհասկացողութիւնը։ Երբ տակառի համը աննշան է, կարելի է ուղղել մի քանի անգամ յետ ածելով և տակառները լաւ ծխելով, երբ սաստիկ է, դժուար է այդ պակասութիւնը ուղղել։

Գինին փայտի համն է բռնում, երբ լցնում ենք նոր, լաւ չպատրաստուած տակառների մէջ, կամ այնպիսի տակառների, որոնց փայտը իրեն մէջ բաւականաչափ տտպութիւն և այլ էքստրակտ ունի։ Փայտի համը կարելի է ուղղել ժելատինով կամ ձուի սպիտակուցով գինին զաելով և կամ քիչ տտպութիւն ունեցող գինու հետ խառնուրդ անելով։

#### 7. Գինին ծծմբի համ ու հոտ բռնելը։

Գինին ծծումբի համ է բռնում, երբ որ այգեկութից քիչ առաջ, վազերի օիդիում (թող) հիւանդութեան առաջն առնելու համար, ծծմբափոշի են լինում շաղ տւած և քաղի ժամանակ գեռ ճթերի վրայ մնացած լինելով՝ եփ է գալիս նրա հետ։

Ծծմբի համ է տալիս գինին և այն ժամանակ, երբ տակառը ծխելուց՝ ծծումբը շատ լինելով, կաթկաթում է տակառի ներսը և կպչում նրա տախտակներին և նոր ճերմակ գինի մէջը լցնելուց՝ լակ ձուի հոտ տալիս։ Այդ բանի առաջն առնելու համար, երբ խաղողը ծծմբափոշիով ծածկուած է կամ պիտի նախապէս լուանալ և ապա ջարդել, կամ ուժեղ եփը վերջանալուց՝ գինին իսկոյն տեղափոխել։ Իսկ ծծումբը կաթկաթելու առաջն առնելու համար անպատճառ ծիիչ պիտի գործածել կամ ամեն անգամ տակառը գործածելուց՝ մէջը ճրագով նայել, երբ նկատում են տախտակի կպած ծծումբը, քերում են հանում ու լաւ լուանում ներսը։

#### 8. Մկան համը։

Այն տարիներին, երբ փտած ու բորբոսած խաղողը անկարելի է լինում լաւերից ճոկելը գինի շենելուց, գինին օդի ազդեցութեան տակ մկնահամ է առնում և խմելու անգուրեկան դառնում։ Այդպիսի գինին շատ ու քիչ լաւանում է, երբ սաստիկ ծխում են տակառը և գինին տեղափոխում առանց օդի հետ հաղորդակցութիւն ունենալու։

ԳԼ. XXVI.

Գիւնի չիկնդոհթիկները եհ ՆՐԱՆՑ ԲԺՇԿԵԼԸ:

1. Գիւնու քացախելը: Գիւնու զլիսաւոր հիւանդութիւններից մէկն է քացախելը, որի պատճառները բազմաթիւ են. նրանցից մէջ կրերենք միայն հետևեալները:

Երբ շիրան տաքարը լցնելուց յետոյ երկար ժամնակ ցուրտ է անում կամ խաղողը անձրեից մի օր յետոյ է քաղուած, տեսնում ենք տաքարի շուրջը ճաճին կից շիրան սկսում է թթուիլ, այն ինչ ճաճան անվաս է մնում: Իսկ ընդհակառակը՝ երբ ճաճան մի քանի օր կամ շաբաթ տաքարումն է մնացել, շիրի երեսին փափախ կապած և այդ օդի ներգործութեան տակ, այն ժամանակ ճաճան տաքարում է, եփ գալիս, քացախում և այդ համը փոխարկում շիրային: Շատերը այդ բանի առաջը առնելու համար ճաճան խառնում են շիրին, որ իբր թէ ազատած լինեն թթուելուց, բայց զրա հետևանքը այն է լինում, որ տակի շիրան, որ մինչեւ այդ ժամանակ իւր բնական համն ունէր, ճաճի հետ խառնուելուց՝ սկսում է նա ևս թթուիլ:

Քացախելը առաջանում է և տաքարից, երբ շիրան լցնելուց առաջ կամ զատարկելուց յետոյ խնամքով լուացած չեն լինում և մանաւանդ թերատ տակառից, երբ նա զրած է տաք մառանում կամ զինետան մէջ և ամեն օր ծորակի միջոցաւ քիչ քիչ զինի հանուում: Աւելի հեշտութեամբ քացախն է կտրւում

ընտիր զինին, այն որ աւելի ալքօօլ ունի, քան թէ թոյլ կամ ընականաբար թթու զինին, ինչուոր ալքօօլն է քացախի փոխուողը:

2. «Գիւնու քացախելը, ասում է Շափթալ, այնքան ընդհանրացած հիւանդութիւն է, որ կարելի է մինչեւ անդամ ընական համարել. ինչու որ գա ներքին կամ երկրորդական եփի շարունակութիւնն է կազմում: Շիւրայի եփ գալը, ասում է նա, տուաջանում երբ նրա շաքարային մասերը խառնուում են սանձային կամ սպիտակուցային մասերի հետ: Սրանցից շիրի մէջ գերազանցում է մերթ շաքարային տարրը, մերթ սունձայինը: Երբ շաքարայինը առատ է, սոսընձայինը կարողանում է հալեցնել միայն նրա մի մասը, այն ինչ մնացածը ազատ է մնում և զինին պահում է իւր քաղցրութիւնը և էլ վախ չկայ նրան գում է կեռ զինու մէջ եփ եկող տարրեր են մնում, որոնք օդի թթուածինի հետ միանալով զինին թթուութեան են փոխարկում: Այս բանը չի պատահիլ, եթէ զինին շուտ շուտ յետ ածենք, զտենք, թերատ շմողնենք, ծծումը ծիւենք կամ թէ չէ զինուն շաքար կամ քաղցր շիրայ խառնենք, որ սոսնձային մասերը նրա հետ միանան, ներքին եփը շարունակուի և այդ խաշը (սոսնձային մասերը) ոչնչանայ»:

Լիբեխ ևս զոյն օրինակ մի կարծիք է տուաջ ըերում. «ընդհանրապէս բոլոր եփ եկող խմիչքները, տուամ է նա, բացի ալքօօլից ունին իրենց մէջ և օրգանական մասեր և մի որոշ շերմութեան մէջ օդի

հետ յարաբերութիւն ունենալուց, հեշտութեամբ թթւում են: Զուստ ալքօօլը ևս նոյն փոփոխութիւնն է ստանում, այսինքն քացախ է կտրւում, երբ նրա վրայ աւելացնում են մի որոշ քանակութեամբ օրդանական մարմիններ, ինչպէս են ծլած դարի, գինի, ճաճա կամ արդէն պատրաստ քացախ, որով ընդունակ է գառնում ալքօօլը օդից թթուածին դազը ընդունելու, մինչդեռ ըստ ինքեան այդ յատկութիւնը առաջ չունէր»:

Պ. Պատեօր վերոյիշեալ տեսութիւնները չընդունելով, մէջ է բերում իւր մանրադիտական խուզարկութիւնները և ասում է. զինու քացախելու հիւանդութիւնը պիտի վերագրել այն մանրիկ էակներին, ֆերմենտներին. որոնք մի որոշ ջերմութեան մէջ առաջ են գալիս զինու ամանի թերատ մնալուց և բորբոսի (ծաղկի) տեսքով բռնում երեսը և թթուեցնում:

Այդ մանրադիտակաւ միայն տեսանելի էակները, որոնք ասում են թրուեցուցիչ միֆոնեոմանիր (micoderma acetii) բաղկացած են մանր յօդաւոր բըշտիկներից, ընդհանրապէս մէջտեղից սեղմած, ինչպէս բոժոժը. դրանք հետըզնետէ սեղմուում են, կտըւում եւ նորերը առաջացնում: Մի քանի օրը բաւական է որ թթուեցուցիչ միքօդեսման փոսւի ամանի երեսը ծաղկի տեսքով և նրան թթուեցնի: Այդպիսի ծաղկիը քացախի համար ամենաընտիր խաշն է. բաւական է մի քիչ ածենք զինու վրայ, բերանը բաց թողնենք և շուտով կքացախացնէ նրան:

Բայց այս էլ պէտք է նկատել, որ բորբոսը կտրող է առաջանալ և մի ուրիշ տեսակ միքօդեսմայից,

որին զինու միֆոնեոմա են ասում (micoderma vini) և այդ թթւութիւն չէ պատճառում ու քանի որ բորբոսը դրանից է, ըստ մեծի մասին թթուեցուցիչ միքօդեսմա չէ կարող գոյութիւն ունենալ բայց երբ քիչ քանակութեամբ է գտնուում, այն ժամանակ խեղքիչ դըւում, կուլ է գնում թթուեցուցիչ միքօդեսմայից:

Հասարակ գինիները, նոր թէ հին, առանց ջրի խառնուրդի կամ թթւութեան, հազիւ է պատահում որ քացախին. այն ինչ հին գինիները, մանաւանդ ընտիրները, եթէ լաւ ինսամք չտանեն՝ սկսում են քացախիլ: Այս էլ յիշենք, որ զինու միքօդեսման թէկ զարգանալով այնպէս վնաս չէ տալիս, որ խմելու ճաշակը թուլացնէ, բայց երբ զինին զարգանալով իւր ազդեցութիւնը թուլանում է և վերջապէս թորշումում, ահա այդ միջոցին թթուեցուցիչ միքօդեսման անմիջապէս երևան է գալիս, հեշտութեամբ բազմանում: և քացախի հիւանդութիւնը աւելի արագ ընթանում:

3. Մի կողմը թողնելով զիտնականաց թեր և դէմ առարկութիւնները, դառնանք քացախի հիւանդութեան դարմանին: Քացախի հիւանդութեան առաջը առնենամար եթէ  $2^0/00$ -ից քիչ է թթւութիւնը, խորհուրդ են տեսնում տաքացնել  $52^0$  R. և լաւ ծխել զինին, և ամեն 10 վեգրին մի կվարտ երեսը քաշած կաթ խառնել, հարել և բերանը փակել թողնել  $8-10$  օր և յետ ածել թեթէ ծխած տակառի մէջ: Քացախի ամանը դատարկելուց պէտք է իսկոյն ցուրտ ջրով ողողել, սողայ ածել  $3-5$  փնտ. տաք գոլորշիով կամ եռմանը ջրով լուանալ ու քամ դնել, ապա թէ ոչ ամանը կարող է փչանալ:

Մի գինի երբ քացախի համը զգալի է և 20/00-ից բարձր, նրան հնար չկայ դարմանելու, այդպիսի գինու վրայ երկար պէտք չէ գլուխ ցաւեցնել, նա միայն քացախի պէտք կդայ. իսկ թէ կարելի է նախատեսել օր առաջ, որ գինին թթւութեան չենթարկուի, ահա զգուշութիւնները.

ա) Շիրան տաքարը ածած ժամանակ աշխատել, որ ճաճան երեսը չմնայ, չթթուի, եթէ թթուած է պիտի չխառնել շիրին, այլ առանձին վերցնել:

բ) Տակառները թէ լցնելուց և թէ դարտկելուց պիտի լաւ լուացած լինին և ծխուած, ներսն ու դուրսը միշտ մաքուր, որ գինու կաթիլներ չմնան տախտակների արանքում և չթթուին:

գ) Տակառը երբէք թերատ պիտի չթողնել և ոչ էլ տաք տեղ շարել և մանաւանդ բերանը բաց:

եթէ ստիպուած ենք մի տակառից քիչ քինի հանել, անպատճառ պիտի ծխել տակառի ներսը, որ դատարկ տեղը ծծմբաթթուն բռնելով, օդը այլ և չկարողանայ վրան ներգործել:

## 2. Գինու ըուռ գալը:

1. Այս հիւանդութիւնը կամ լաւ ևս ասած գինու այս դրութիւնը յայտնուում է յաճախ տաքարի մէջ եփման միջոցին: Գինին վատ է եփ գալիս, գոյնը տեղը չէ, դժուարութեամբ է պարզուամ, գեղին տեսք ունի, անհամ և գառնաւուն է, օդի մէջ գորշ գոյն է ունում առանց լուծուելու և երբ բաւական զարգացած է հիւանդութիւնը, կարելի է կարծել, որ դա-

րեջուը է քան թէ գինի: Սակայն այդ գինու մէջ բաւական ալքօօլ է լինում, բայց միմնոյն ժամանակ շատ քիչ ընական թթւութիւն:

2. Ծուռ գալու հիւանդութիւնը պատահում է ցուրտ և խոնաւ տարիներին, անձրևային ժամանակ այգեկութը սկսելուց և մանաւանդ երբ խաղողը կարկըտահար է եղել և կամ փտել: Այդպիսի պայմանների մէջ ստացուած գինին թոյլ է, անհամ, փտութեան հոտ է փչում և երբ ամառուայ տաքերը ընկնում են, սկսում է շուռ զալ, պղտորուիլ. իսկ թերատ ամանի մէջ, մանաւանդ սպիտակ գինիները ևս առաւել շուտով ենթարկուում են այդ հիւանդութեան: Գինու շուռ գալը շատերը վերաբերում են գիրտին, որ իբր թէ ջերմութիւնից բարձրանալով տարածւում է հեղուկի մէջ և պղտորութիւն պատճառում: Այդ գիրտը գինու հասարակ գիրտը չէ, այլ զանազան երկարութեամբ խճճուած թելիկների մի շեղակոյտ, որ երբ ցախով խառնում ենք, շատ անդամ հետը դուրս է գալիս:

3. Այդ հիւանդութեան առաջը առնելու համար պէտք է խաղողը քաղելուց յետոյ խկոյն պրեսի տակ ձգել և առանց ճաճի տակառները լցնել, ինչու որ ճաճի հետ թողնելով, նրա տուած վնասը տեղի շատ է, քան օգուտը:

Լաւ է նոյնպէս նոյն տարուայ թթու գինու հետ խառնուրդ անելը:

Եթէ շուռ եկած գինին սաստիկ փշացած չէ և խմելու դուրեկան է, կարելի է առանձին խնամք տանելով ու ֆիլտրով պարզեցնելով՝ քիչ լաւացնել:

3. Գինու պարագանեալը:

Պարարտանալու հիւանդութիւնը պատահում է միայն սպիտակ գինիներին, քիչ բացառութեամբ կարմիրների։ Այդ հիւանդութեան ժամանակինին կորցնում է իւր բնական պարզութիւնը, անհամանում է և մի ուրիշ աման ածելուց՝ ձեթի պէս ծորում տունց ձայն հանելու։

Այս հիւանդութիւնը առաջանում է սպիտակ խաղողների մի քանի տեսակներից, երբ դեռ չհասած են քաղում ցրտերն ընկնելու պատճառաւ. դրանց շիրայի շաքարը քիչ է լինում, առակառում լաւ չէ եփ գալիս, ձմեռը ընկնում է և դեռ շիրան չէ փռիւնել իւր համը։

Այդպիսի գինին մանրագիտակի տակ ձգելով, մէջը երեռում են իւրի նման գնդակներ։

Այդ հիւանդութիւնը անցնում է, երբ գինու մէջ դառնիճ ենք աւելացնում և կամ բաց օդի մէջ քամու տալիս ու մաղից անցնում, որ նա ծեծուի։

Ոչ պակաս օգնում է և դիրտից շուտ շուտ հեռացնելը, մանաւանդ դառնիճից յետոյ։

4. Գինու դառնանալը:

Այս հիւանդութիւնը պատահում է ընտիր և առհասարակ կարմիր հին գինիներին։ Սկզբում գինին կասես քրտնքի հոտ ունի, գոյնը տեղը չէ և համը անախորժ է, բայց գնալով գառնանում է, գոյնը գիշանում բոլորովին և գինին անխմելի դառնում։

Դառնութեան հիւանդութիւնը. երբ գինու հնութիւնիցն է առաջանում, այն ժամանակ այնքան անախորժ չէ համը, թէ և գինին կորցնում է իւր ներկը, որ դարթի (tartre) հետ տեսնում ենք շուշային կպած։ Այս հիւանդութիւնը առաջանում է ըստ ոմանց միքողեռմաներից կամ թթուածինի ազդեցութիւնից։

Դառնութեան հիւանդութեան առաջն առնելու համար գինին լաւ է տաքացնել, դիրտից շուտ շուտ հեռացնել, նոր կիսատ մզած ճաճի վրայ ածել նորից եփ տալ, տակառը ծխել, օդի ազդեցութիւնից հեռի պահել և մեծ ամանից փոքրիկ ամաններ փոխադրել։

Գինիների գերոյիշեալ հիւանդութիւններին իրեն ճար մինչև ասօր որոշ բաներ չկան, որով կարելի լիներ նրանց ուղղել, առաջուան առողջութեան բերել։ Քաշքուկ միջոցներ շատ են առաջարկուած, բայց դրանք լաւ հետևանքի չեն բերում, ուստի ամեն գինետէր կամ գինեգործ ինքը պիտի հակէ իւր գինու զարգացման վրայ սկսած այգեկութից մինչև նրա գործածելու օրը։ Եւ երբ գինեգործութեան այս հիմնական կանոնները կըպահպանուին, ինչպէս են՝ խաղողի հասունութիւնը, փշացածների հեռացնելը, յաջող եփ բերելու պայմանները, տակառների լիքը պահելը, յետ ածելը, օդի յարաքերութիւնից կորելը, ամանների և գինետան մաքրութիւնը, տակառների գլուխը միշտ առողջ գինի լցնելը, այն ժամանակ թող հաւատացած լինի, որ ոչ մի միքողեռմա իւր գինուն ձեռք չի տալ և շատ ու շատ չարիներից ազատ պահած կլինի նրան։

## Աղիւսակ I.

Ինչքան օմբար է պետք օրուան օմբարելուց հարիւր վեդրօյի  
համար:

Ժիրաշա- փի զուց- մունքը	Շիրաց պետք է հասցնել									
	16%/ շարար		17%/ շարար		18%/ շարար		19%/ շարար		20%/ շարար	
	փ.	զօլ.	փ.	զօլ.	փ.	զօլ.	փ.	զօլ.	փ.	զօլ.
100/0	186	10	217	67	249	38	281	10	312	86
10,5	170	48	201	86	233	48	265	19	296	77
11,0	154	77	186	10	217	67	249	38	281	10
11,5	139	19	170	48	201	86	233	48	265	19
12,0	123	48	154	77	186	10	217	67	249	38
12,5	108	—	139	19	170	48	201	86	233	48
13,0	92	48	123	48	154	77	186	10	217	67
13,5	77	—	108	—	139	19	170	48	201	76
14,0	61	48	92	48	123	48	154	77	186	10
14,5	46	10	77	—	108	—	139	19	170	48
15,0	30	67	61	48	92	48	123	48	154	77
15,5	15	29	46	10	77	—	108	—	139	19
16,0	—	—	30	67	61	48	92	48	123	48
16,5	—	—	15	29	46	10	77	—	108	—
17,0	—	—	—	—	30	67	61	48	92	48
17,5	—	—	—	—	15	29	46	10	77	—
18,0	—	—	—	—	—	—	30	67	61	48
18,5	—	—	—	—	—	—	15	29	46	10
19,0	—	—	—	—	—	—	—	—	30	67
19,5	—	—	—	—	—	—	—	—	15	29

## Աղիւսակ II.

Ինչքան օմբար է պետք օրուան օմբարելուց հարիւր վեդրօյի  
համար:

Ժիրաշա- փի զուց- մունքը	Շիրաց պետք է հասցնել									
	16%/ շարար		17%/ շարար		18%/ շարար		19%/ շարար		20%/ շարար	
	փ.	զօլ.	փ.	զօլ.	փ.	զօլ.	փ.	զօլ.	փ.	զօլ.
10	1	82 <sup>1</sup> / <sub>2</sub>	2	17	2	47 <sup>1</sup> / <sub>2</sub>	2	78	3	12 <sup>3</sup> / <sub>4</sub>
10 <sup>1</sup> / <sub>2</sub>	1	67 <sup>3</sup> / <sub>4</sub>	2	1 <sup>3</sup> / <sub>4</sub>	2	32	2	62 <sup>1</sup> / <sub>2</sub>	2	93
11	1	52 <sup>1</sup> / <sub>2</sub>	1	82	2	17	2	47 <sup>1</sup> / <sub>2</sub>	2	62 <sup>1</sup> / <sub>2</sub>
11 <sup>1</sup> / <sub>2</sub>	1	37 <sup>1</sup> / <sub>2</sub>	1	67 <sup>3</sup> / <sub>4</sub>	2	1 <sup>3</sup> / <sub>4</sub>	2	32	2	47 <sup>1</sup> / <sub>2</sub>
12	1	20 <sup>1</sup> / <sub>2</sub>	1	52 <sup>1</sup> / <sub>2</sub>	1	82	2	1 <sup>3</sup> / <sub>4</sub>	2	32
12 <sup>1</sup> / <sub>2</sub>	1	7 <sup>3</sup> / <sub>4</sub>	1	37 <sup>1</sup> / <sub>2</sub>	1	67 <sup>3</sup> / <sub>4</sub>	2	82	2	17
13	—	88 <sup>3</sup> / <sub>4</sub>	1	20 <sup>1</sup> / <sub>2</sub>	1	52 <sup>1</sup> / <sub>2</sub>	1	67 <sup>3</sup> / <sub>4</sub>	2	1 <sup>3</sup> / <sub>4</sub>
13 <sup>1</sup> / <sub>2</sub>	—	74	1	7 <sup>2</sup> / <sub>2</sub>	1	37 <sup>1</sup> / <sub>2</sub>	1	82	1	82
14	—	58 <sup>1</sup> / <sub>2</sub>	—	88 <sup>3</sup> / <sub>4</sub>	1	20 <sup>1</sup> / <sub>2</sub>	3	52 <sup>1</sup> / <sub>2</sub>	1	67 <sup>3</sup> / <sub>4</sub>
14 <sup>1</sup> / <sub>2</sub>	—	44	—	74	1	7 <sup>3</sup> / <sub>4</sub>	1	37 <sup>1</sup> / <sub>2</sub>	1	52 <sup>1</sup> / <sub>2</sub>
15	—	29 <sup>1</sup> / <sub>2</sub>	—	58 <sup>1</sup> / <sub>2</sub>	—	88 <sup>3</sup> / <sub>4</sub>	1	20 <sup>1</sup> / <sub>2</sub>	1	37 <sup>1</sup> / <sub>2</sub>
15 <sup>1</sup> / <sub>2</sub>	—	14 <sup>3</sup> / <sub>4</sub>	—	44	—	74	1	7 <sup>3</sup> / <sub>4</sub>	1	20 <sup>1</sup> / <sub>2</sub>
16	—	—	—	29 <sup>1</sup> / <sub>2</sub>	—	58 <sup>1</sup> / <sub>2</sub>	—	88 <sup>3</sup> / <sub>4</sub>	1	7 <sup>3</sup> / <sub>4</sub>
16 <sup>1</sup> / <sub>2</sub>	—	—	—	14 <sup>3</sup> / <sub>4</sub>	—	44	—	74	1	88 <sup>3</sup> / <sub>4</sub>
17	—	—	—	—	—	29 <sup>1</sup> / <sub>2</sub>	—	58 <sup>1</sup> / <sub>2</sub>	—	74
17 <sup>1</sup> / <sub>2</sub>	—	—	—	—	—	14 <sup>3</sup> / <sub>4</sub>	—	44	—	58 <sup>1</sup> / <sub>2</sub>
18	—	—	—	—	—	—	—	29 <sup>1</sup> / <sub>2</sub>	—	44
18 <sup>1</sup> / <sub>2</sub>	—	—	—	—	—	—	—	14 <sup>3</sup> / <sub>4</sub>	—	29 <sup>1</sup> / <sub>2</sub>
19	—	—	—	—	—	—	—	—	—	14 <sup>3</sup> / <sub>4</sub>
19 <sup>1</sup> / <sub>2</sub>	—	—	—	—	—	—	—	—	—	—

Ծանօթ. Աղիւսակի մէջ հետևեալ կերպով պէտք է թւերը գտնել.  
ասենք թէ ունենք 12% շիրայ, ցանկանում ենք հասցնել 20% ի. շիրաշափի  
ցուցման սիւնակի մէջ գտնում ենք 12 և վեցը 20 թւերը, առաջինը հորիզոն-  
ական գծով տանում ենք ուղղահայեց կտրող 20ի սիւնակը և այնտեղ  
նայում թէ ինչ թիւ է գրած. այդ թիւն էլ լինում է շարարի քսնակը մի  
վեդրօյի համար. մէջ բերած օրինակի մէջ այդ թիւը 2 փ. 47<sup>1</sup>/<sub>2</sub>զօլոտնիկի է  
կամ ուղիղ 2<sup>1</sup>/<sub>2</sub> փունտ:

## Աղիւսակ III.

100 վեկրո գինուն որբան ալիօն պիտի խառնել երա աստիճանը  
բարձրացնելու համար:

Գինին ունի ալիօն 0 0	Արքարձարացնուի				
	8	9	10	11	12
	Պէտք է զուտ ալիօն 0 0				
5,0	300	400	500	600	700
5,5	250	350	450	550	650
6,0	200	300	400	500	600
6,5	150	250	350	450	550
7,0	100	200	300	400	500
7,5	50	150	250	350	450
8,0	—	100	200	300	400
8,5	—	50	150	250	350
9,0	—	—	100	200	300
9,5	—	—	50	150	250
10,0	—	—	—	100	200
10,5	—	—	—	50	150
11,0	—	—	—	—	100
11,5	—	—	—	—	50

Դաշտարքի 6: Աստիճանների թիւք բաժանում են ունեցած սպիրտի թնդառթեան վրայ և իմանում թէ որքան վեղքո սպիրտ կայ այդ թիւի մէջ: Եթէ քանորդը բազմապատկենք գինու թնդութեան վրայ, այն ժամանակ կը ստացուի այն թնդութիւնը, ինչ որ կատացուի սպիրտ խառնելուց յետու: Ստացած արտադրեալ բաժանելով սպիրտի թնդութեան վրայ, կատանանք մի թիւ, որը ցոյց կտայ թէ որքան սպիրտ ևս սպիրտ խառնուի: Օրինակ ունենք 7,3% թնդութեան գինը, ուզում ենք հացնել մինչև 100%: այնտեղ, ուր 7,3 հորիզոնական գիծը կտրում է ուղղահայեց 10-ին այդ սիւնեակի մէջ զանում ենք 250 թիւք: Ասինք թէ ունենք 90% ի սպիրտ, այնժամանակ  $\frac{250}{90} = 2,77$  վեղքո սպիրտ.  $2,77 \times 10$  (գինու թնդութիւնը)  $= \frac{27,77}{90} = 0,31$  վեղքօնի իսկ 90 |0ի ալիօն հարկաւոր է  $2,77 + 0,31 = 3,08$ : 4 վեղքո կամ 34 կվարտ: Եթէ գինին 100 վեղքոյից պակաս է, առաջուայ պէս պիտի հաշուել, իսկ ստացուած թիւք բազմապատկել կոտորակի վրայ, որը գինու բոնած 400 վեղքոյի ծաւալի մի մասն է ցոյց տալիս: Ասինք թէ մենք 40 վեղքո նոյնպիսի գինի ունենք, ինչպիսին էք նախորդ օրինակի մէջ, ունենք: Ասիլ պէտք է գործդնենք 40 սպիրտ, որը առաջուայ գործադրուել է, այն է  $\frac{34 \times 4}{40}$  կամ 12,4 կվարտ ալիօն 90%ի:

## Աղիւսակ IV.

Պեսիսի զացիա 100 վեդրուի.

Նաղողի մէջ եղած օսքարի համապատասխան հեղուկ պատրաստելու համար.	Այս խառնութ- դից ստացուած գինին ունենում է թնդութիւն 0 0	
	Պէտք է բափինադ շարար,	Պէտք է չուր վեղու,
10	291,0	93,8
11	321,0	93,4
12	351,6	92,5
13	381,0	92,0
14	411,5	91,2
15	441,6	90,3
16	472,2	89,9
17	502,8	89,2
18	533,4	88,6
19	564,5	87,9
20	595,2	87,3
21	626,7	86,6
22	657,9	85,9
23	688,5	85,5
24	720,9	84,6
25	752,7	83,9
26	784,5	83,2

Դառնիձը (տաճան) մի գեղնաւուն վոշի է, որ խառնում են գինուն պապահամ տալու, որպէս զինա կարողանայ զիմանալ շոգերին և զառդ նիւթերը տւելի լաւ ներգործեն զինու վրայ։ Դառնիձը պատրաստում են մի քանի ծառերի կեղևներից և այլ նիւթերից։ նրան կարելի է ստանալ և խաղողի կորիզներից։

Դառնահամ գինի, երբ հնութիւնից կամ այլ պատճառներից զինին դառն համ է ստանում։

Գիրտ (մրուր) ասում ենք զինու մէջ եղած ծանր մարմիններին, որոնք տակը նստելով մի հաստ կամ բարակ շերտ են կազմում։

Գիրտահամ գինի ասում է այն, որ շատ ժամանակ զինին մնում է իւր դիրտի վրայ առանց յետ ածելու և նրա կոշտ համը վերցնում։

Զողուն գինի ասում են նրան, որ չափազանց թթւութիւն ունի. Հարաբաղում դրան ասում են զկումածածուն։

Զտելը զինին պարզեցնելու այն գործողութիւնն է, որ արտաքին միջոցներով նրա մէջ եղած ծանր մարմինները տուին են նստում։

Ընտիր գինի—երբ համով, հստով, դիմացկանութեամբ և ամեն բարեմանութիւններով օժտուած է։

Թեթև գինի ասում են այն զինիները, որոնք քիչ ներկ և քիչ ալքօօլ ունին և կոշտ համեր չեն բովանդակում։

Թեփուկ. խաղողի մաշկը, կեղեր կամ կաշին, թթու գինի, երբ խաղողը ժուռ է քաղուած կամ զինին բնականաբար թթւութիւն ունի։

## ԳԻՆԵ ԳՈՐԾԻ ԲԱՌԱՐԱՆ.

Այս կութ, բաղաքաղ, խաղողաքաղ։  
Անհամ գինի. այն որ համով մօտենում է ջրին  
և ոչինչ զօրացուցիչ տարբեր չունի։  
Արօմ ասում ենք զինու բնական հոտը, որ  
առաջացել է իւր խաղողից։

Բուկետը դարձեալ զինու հոտն է, բայց աւելի  
քնքոյշ և անուշ քան արօմը, որ յետոյ է գոյանում։

Բորբոսահամ գինի. Գինին բորբոսի համ է  
տալիս, երբ այգեկութի ուշ սկսելուց կամ անձրևներից  
հասած խաղողը ձեղքւում և բորբոսնում է. այդ համը  
անցնում է սպիրտ խիելով, բայց երբ տակառիցն է  
զինին բորբոսի համ տալիս, այն ժամանակ դարմա-  
նելը աւելի դժուարին է։

Գինետուն (պօդվալ), ուր միայն եփը վեր-  
ջացրած զինիներն են պահում։

Գցել. (քցել) զինին ասում ենք քցում է, երբ  
տակառի ձեղքերից սկսում է կաթկաթիլ ածխածին  
զազի ներգործութեամբ, այս մի հիւանդութիւն է  
հասարակ զինիների, որ կարելի է շուտ շուտ յետ  
ածելով ու ծխելով առաջը առնել։

Թթուաշ գինի. երբ թթուաթիւնը նուազ է և  
այնպէս անախորժ չէ խմելու:

Թունդ գինի. որի մէջ ալքօօլի ներկայու-  
թիւնը բաւականին զգալի է և անսովոր խմողի գլուխը  
շուռ է բերում:

Թոյլ գինի (բօշ). երբ ալքօօլի նուազ է և ջրուկ:

Թոխմախ կամ թակ անունը տալիս ենք այն  
ներքել հաստ փայտին, որով ջարդում են խաղողը:

Ժուռ (զորա). խակ, տհաս, չհասած խաղող:

Խառնուրդ անել. այն գործողութիւնը, որով  
մի գինի միւսին խառնելով, համեմում ենք նրա պա-  
կասաւոր կողմերը:

Խցան. շիշի կամ տակառի բերանի ծածկոց:

Ծծումբ (քիւքուրդ). որ բանեցնում ենք տա-  
կառները և գինին ծխելու համար:

Ծծմբանամ գինի. երբ տակառի կամ գինու  
սաստիկ ծխելուց՝ գինին առնում է ծծումբի համը:

Ծորակ. պղնձէ կամ փայտէ կրան:

Ծվծվում գինի, ոչ շատ թթու և ոչ շատ  
քաղցր, ախորժահամ գինի, որ առանց բերանը տա-  
շելու, ինչպէս Ղարաբաղ ասում են դիւզ ա քինում:

Կակուզ գինի. որի մէջ ներդաշնակ են բոլոր  
մասերը և տհաճութիւն չեն պատճառում:

Կթոց. քաղլակ, սաբեթ, ճուարան:

Կծրծան գինի ասւում է այն, որ խմելուց ածխա-  
ծին գազը դաղում է քիմքը, քթից ծուխ հանում ու  
քէֆ տալիս, ինչպէս նոր և փրփրուն գինիները:

Կծու գինի. երբ գինին փոխում, ուղում է  
քացախի համ առնել:

Կոշտ կամ ծանը գինի. երբ տապութիւնն ու  
ներկը չափազանց լինելուց՝ բերանը կոշտացնում է,  
չատիկ. գիլլա:

Հեշտախում գինի. նոյն ինչ որ կակուղ գի-  
նին:

Հողահամ գինի. երբ հողը իւր համը փոխա-  
դրում է գինուն:

Զագառ, ոահաթի, զաբրի:

Ճաճա (ջեջա կամ ճինճառ). խաղողի պինդ  
մնացորդը, այսինքն թեփուկը, կորիզը և քնթեռնը:

Ճիթ. ողկոյզ, ճիռ, փաղի պտուղը իւր չանչով:  
Ճմռել. տաքարի մէջ խաղողը ճեռքով տրորել  
ջարդելը:

Ճոճ. տակառածե մեծ ամաններ շիրայի կամ  
գինու համար:

Ճռաքաղ ասում ենք այգեկութից յետոյ վա-  
զերի վրայ մնացած կամ մոռցուած խաղողների  
հաւաքելը, որ ըստ մեծի մասին թողում են այգե-  
տէրերը ի բաժին աղքատաց:

Մարխոշ գինի. թթուաշուախորժահամ գինի:

Մարսական գինի. երբ չափաւոր են գինու  
տարրերը և օգնում են մարսողութեան և ուժերը  
նորոգում:

Մաճառ ասում ենք այն նոր գինուն, որի մէջ  
դեռ շաքարային մասեր շատ կան և կծրծան գինու-  
յատկութիւն ունի:

Մզել. այն գործողութիւնը, որով խաղողի հե-  
ղուկ մասը բաժանում ենք պինդ մասից:

Մուսկատ գինի. մուսկատ ասում ենք այն

գինուն, որի խաղողը մի առանձին անուշ համ ու հոս  
ունի, որ փոխագրում է գինուն:

Յ ետ ածել. գիրաից հեռացնել՝ պարզ գինին  
տակառից տակառ փոխագրելով:

Յ ատարար—մեծ մաղ, խաղողը քնթեռնահան  
անելու համար:

Յ իրայ. խաղողի ջուրը, քաղցու:

Յ իրաչափ. այն գործիքը, որով իմանում են  
շիրայի հասունութիւնը:

Յ իրատուն կամ Յ իրախանայ. այն տեղը  
ուր կոխ են տալիս շիրան կամ պահում մինչև եփը  
կտրուիլը:

Յ իշատուն. շիշեր պահելու տեղը:

Յ ուռ գալ. գինու այն հիւանդութիւնը, երբ  
դոյնը փոխում է և պղտորում:

Զ անչ կամ քնթեռնը. հատիկներից զուրկ  
ճիթը:

Զ մշկիլ. երբ խաղողը թումշկում, կնճռոտում  
կամ չամիչ է կտրում:

Զ որ գինի. թունդ գինի, երբ զաղում, քերում է  
բերանը:

Պ լպլուն գինի. շողողուն, փալփլուն, պայծառ:

Զ ուր կտրելը. երբ գինին ջրի է փոխում:

Ս պիրտ խփել. երբ գինու թնդութիւնը շու-  
տացնելու համար սպիրտ ենք խառնում հետը:

Վ եդրա. 16 շիշը կամ 12 լիտրը մի վեդրայ է  
կազմում:

Տ ակառ. բոչկա, որ ունի 40—50 վեդրայ:

Տ աքար (չան). երեսը բաց փայտէ կամ հողէ

մեծ աման, որի մէջ շիրան եփ են բերում կամ տա-  
քար ասում են և հնձանի առաջ փորած շիրա թա-  
փելու հորին:

Տ ափակ գինի. այն որ թէկ գոյնը մուգ, բայց  
ալքօօլից և առողջ համից զուրկ է:

Տ ակառահամ գինի. երբ գինին ածած տա-  
կառի համն է առնում, նրա նոր կամ փայտի հիւանդ  
լինելուց:

Տ ղամարդ գինի. որի մէջ ալքօօլը և միւս  
մասերը առատ են և վախ չունի փշանալու:

Տ տպահամ գինի. որի մէջ դառնիճը չափա-  
զանց է և խմելուց բերանը հաւաքում է:

Փ ափախ կապել. երբ ճաճան ուռելով շիրայի  
երեսն է բարձրանում:

Ք աղցը գինի. որի մէջ շաքարը պահուած է  
բնականաբար կամ արհեստական կերպով:

Ք աղց մաղց գինի, կէս քաղցը մաճառի պէս:

Ք ացախ գինի, այն որ արգէն քացախել և  
խմելու անպէտք է:

Ք նքոյշ գինի. նուրբ համուհոտով կակուղ  
գինին:



ԳՐՔԻՍ ԱՂԲԻՒՐՆԵՐՆ ԵՆ.


Ուղեցոյց գործնական գինեգործութեան: Cazalis Frédéric, Traité pratique de l'art de faire le vin. Guyot, Culture de la vigne et vinification. Леонъ Шанцеръ, Гинодѣліе и Погребное хозяйство. Винбрگъ, практическое руководство виноградарства и винодѣдія.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

	ԵՐԿԱ
Յառաջաբան	1—IV
Գլուխ I. Այգեկութի նախապատրաստովիւնները	1
Գլ. II. Խաղողը, նրա կազմը և մասերի անունները, և թէ ինչպէս է նրա մէջ շաքարը գոյանում	3
Գլ. III. Այգեկութի ժամանակը և խաղողի հասունութեան աստիճանները: Այգեկութի համար պարտաւորեցուցիչ ժամանակը: Փառած խաղողը և աղնիւ փառութիւնը, արգեկութի օրը և քաղի պայմանները	7
Գլ. IV. Շիրատան աշխատովթիւնները և շիրայ պատրաստելը: Զարդող մեքենաների գործածութիւնը: Մամուլը և շիրայի պինդ մասի մզկը: Խաղողի քաշի յարարերութիւնները նրանից մզուած շիրայի վերաբերութեամբ:	14
Գլ. V. Շիրայի խառնուրդ անելը: Շիրայի քաղցրութիւնը երկար պահելու միջոցները	24
Գլ. VI. Ծանրաչափի և Զերմաշափի գործածութիւնը Շիրայի լաւացնելը: Ծապտալիվացիա: Ալքօօլիկացիա	27
Գլ. VII. Սպիրտային եփը կամ շիրայի եփ գալը: Եփ բերող խաշը: Զերմութիւնից մարմինների լայնանալը: Օդը: Ածխաթթու գաղը: Ալքօօլը: Քացախի թթուն	33
Գլ. VIII. Ճերմակ զինու պատրաստելը: Կարմիր խաղողից ճերմակ զինի պատրաստելը: Ճերմակ զինու սպիրտային եփը: Շիրայի քամու տալը: Շիրայի տաքացնելը: Որքան ժամանակ է պէտք շիրան եփ տալ և ճաճի վրայ թողնել:	42
	12


- ԳԼ. IX. Կարմիր գինիների եփ տալը: Կարմիր գինի  
եփ տալու ամանները: Բաց բերանով չա-  
ների մէջ եփ տւած շիրան: Փակ եփ տալը  
շիրայի: Գինու հանելը և ճաճայի մզելը: . 53
- ԳԼ. X. Ողելից, քաղցր և տօնական գինիները և  
նրանց պատրաստելը: Մուսկատ գինու պա-  
տրաստելը . . . . . 59
- ԳԼ. XI. Ճերմակ գինու յիտ ածելը կամ տեղափոխու-  
թիւնը . . . . . 66
- ԳԼ. XII. Ծծումբը: Ծծմբաթղթի գործադրելու եղա-  
նակը: Ծծումբի այս ու այն կերպ գործա-  
դրութիւնը: . . . . . 72
- ԳԼ. XIII. Դասնիճի գործադրութիւնը: Ինչ է դասնիճը:  
Հասարակ դասնիճ պատրաստելը: . . . 76
- ԳԼ. XIV. Շիրատուն, գինինեռն, շիշատուն և նրանց  
կարգն ու սարքը . . . . . 77
- ԳԼ. XV. Գինու ամանները: Փայտէ տակառները, տա-  
կառների գոտիները: Տակառների խցանը:  
Տակառների ձեր: Տակառների չափը: Ցեմեն-  
տի կամ բետոնի ամանները: Գինի լցնելու  
համար նոր տակառների պատրաստելը: Տա-  
կառի բորբոսը: Քացախի հոտ փչող տա-  
կառների մաքրելը: Փոռութիւնը: Տակառնե-  
րի վատ հոտը: Սպիրտի տակառների մա-  
քրելը: Զեթից տակառը մաքրելը: Կարմիր  
գինու տակառը: Կարասների և ակերի գոր-  
ծածութիւնը . . . . . 83
- ԳԼ. XVI. Գինիների գլուխը լցնելը և գինիների պար-  
զեցնելը: Զտելու գործիքները: Գինիների  
զտելը: Զտելու նիւթերը և գործադրելու  
եղանակը: Զկան սոսինձով, ժեղատինով,  
ձուի սպիտակուցով, կաօլինով և սպանա-  
կան հողով գինիների զտելը: Գինիների եր-  
կրորդ և յաջորդ յիտ ածելը կամ դիրտից









- հեռացնելը: Պամպով կամ սիֆոնով գինու  
յիտ ածելը: Գինու դիրտը կամ մրուրը: . 95
- ԳԼ. XVII. Գինու տաքացնելը և սառեցնելը: Գինու  
արկի առաջ դնել: . . . . . 119
- ԳԼ. XVIII. Գինիների ուղղելը կամ խառնուրով: . 119
- ԲԼ. XIX. Շիշի գինիները և նրանց խնամքը: Խցան-  
ները: Շիշերի լցնելը և պնդացնելը: Շիշերի  
շարելը: Շիշի գինու յիտ ածելը: . . . 123
- ԳԼ. XX. Գինիների ընտրութիւնը և արժանաւորու-  
թիւնը: . . . . . 127
- ԳԼ. XXI. Գինու ճանապարհելը: Շիշի գինին. արկղի  
չափով: Հեռի տեղ փոխազրութեան ազդե-  
ցութիւնը գինու վրայ: . . . . . 139
- ԳԼ. XXII. Պետիոտիզացիա կամ արհեստական կերպով  
գինու քանակը մեծացնելը: . . . . . 133
- ԳԼ. XXIII. Քացախը և նրա պատրաստութիւնը: . . . 136
- ԳԼ. XXIV. Գինու և նրա մնացորդների այլ և այլ գոր-  
ծազրութիւնը: Ճաճայից օղի քաշելը: Կոն-  
հակ պատրաստելը: . . . . . 138
- ԳԼ. XXV. Գինիների պակասութիւնները և նրանց ուղ-  
ղելը: Գինիների սեանալը: Ճերմակ գինու  
գորշ գոյն ստանալը: Կարմիր գինու գոյնի  
թոշելը: Գինու բորբոսի համ ու հոտ բոնելը:  
Գինին դիրտի կամ փոտածի համ ստանալը:  
Տակառի կամ փայտի համը: Գինին ծծմբի  
համ ու հոտ բոնելը: Մկան համը: . . . 140
- ԳԼ. XXVI. Գինու հիւանդութիւնները և նրանց բժշկե-  
լը: Գինու քացախելը. Գինու շուռ գալը:  
Գինու պարարտանալը: Գինու դանանալը: . 146
- Աղիւսակ—I, II, III, IV, . . . . . 154
- Գինեգործի բառարան . . . . . 158




Գ Բ Ք Ի Պ Ա Տ Կ Ե Ր Ն Ե Բ Ը.


1. Դանակ.
2. Քաղակ կամ քլթոց.
3. Վեգրօ.
4. Շալակի տակառ.
5. Գինու փայտէ վեգրօ.
6. Զագառ (զարբի, ուսհաթի):
7. Ապակեայ լիվեր նմուշ վերցնելու.
8. Մոմկալ տակառի ներսը նայելու.
9. Թիթեղեայ լիւեր.
10. Ծխիչ տակառի.
11. Զան գինի եվ տալու.
12. Գազահան խցան, թրծած կաւից իր բաժակով.
13. Գազահան խցան ուստինի կողքերով.
14. Սիֆոն.
15. Տակառների գլուխը լցնելու աման.
16. Հարոց կամ խառնիչ.
17. Ծորակ.
18. Զարդող-չահչահան անող մեքենայ.
19. Մամուլ կամ պրես մզելու.
20. Շիշերի խցանափակ մեքենայ.
21. Շիրա տաքացնելու չան օձապայտով.
22. Հասարակ ֆիլտր.
23. Հոլանդական ֆիլտր.
24. Լէյբենֆրուտի գինի տաքացնելու ապարատը:









19




20




21



23



22



24

Պատրաստ են տպագրութեան՝

- 1 Ծաղիկների մէջ ծերուկ այդեպահի զբոյցները պատահնեկան զրադարան (փոխադրութիւն) . . . . .
  - 2 Փնջիկ II գիրք . . . . .
  - 3 Պատրանք (Միражի) կոմեզիա 5 արար. Վերրիցիու . . . . .
  - 4 Ս'աքառոզներ (Եօրց) Զայկովկու կոմեզիա . . . . .
  - 5 Սէրը յաղթող է կոմ. մի արարուածով . . . . .
  - 6 Միակ որդու եղբայրը Ն. Դանչենկո. փոխադր. . . . .
  - 7 Խղճմանքը կորել էր և վայրենի կալուածատէր Շչնդրինից . . . . .
  - 8 Սև Մարդարիտ, Վիկտորիան Մարդուի ֆրանսերէնից . . . . .
  - 9 Սիրոյ վէպիկ (Եռվելլա Մատիլդա Սերայօի) ֆրանսերէնից . . . . .
  - 10 Սիրոյ զռներից մէկը (պատկեր Ղարաբաղի կեանքից) . . . . .
  - 11 Ճանապարհորդական յիշողութիւններից . . . . .
  - ա) Մի օր սէն Բերնարի վրայ . . . . .
  - բ) Բագուիդ Մամարկունդ . . . . .
  - 12 Վազի մշակութիւնը և զինեգործութիւնը Դերբենդում . . . . .
  - 13 Աղջամի արդիներն ու զինեգործութիւնը . . . . .
  - 14 Բամբակի և ծխախոտի մշակութիւնը . . . . .
  - 15 Ժողովածու մանկական յօդուածների Աղբիւրում  
հրատարակուած . . . . .
- Պատրաստում են զիւզաննահեսական զրադարանի միւս  
համարները:

Այս գործութեան և գինեգործութեան վերաբեր-  
եալ գործիքներ և զանազան գեղորայք—ինչպէս են  
պըեմներ, ջարդող մեքենաներ, ծծումբ փշող և  
պղնձարջասպ սրսկող Վերմորելի ապարատներ, ֆիլ-  
տրներ, պոմպեր, պատուաստի դանակ, մկրատ,  
ծծումբ, պղնձարջասպ, փարիզու կանաչ և կարելի է  
ստանալ եղբ. Գ. և Մ. Փրիդոնովական Թիֆլիզում:

Հասցէն Տիֆլիս Վъ Контору Бр. Г. и М. Придоновыхъ.



10-ով գնողներին	80 կ.
100-ով „	70 կ.

«Ազգային գրադարան



NL0297487

75